



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4230

281.6  
—  
S-57

1329

20

Printed in Turkey

2010

281.6 48.  
5-57

Ա.ՊԱՅՈՅՑ ԵՒ ՏԵՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՅՈՅ ԵՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ


ՀԱՅԿԱՅ ԵՒ ԱՐԱՄԱՅ

ՍԵՐՆԳՈՅՆ

ԵՒ

ԴԱՐՄԱՆԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

ԴԵՂՕՐԱՅԻ



ՏՕՐԻՆԵՍԻ

ԻՏ. ՄԿՐՏԻՉ ՍՐԲԵՊԻՍՈՒՊՈՒՄԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Մ. ԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

ՍԻՆԵՊՈԼԻՍ ԽՈՆ

1879





Դարձանն է դառն՝ սասորի շքաւոր ,  
 Ըստ երեւոյնէն ոչոց սհասոր ,  
 Կնիքն զգալի ո՛չ տե՛տ երկտը ,  
 Վաղ քաջ Բժշկի՛ , կանգնել օր քան զօր :

Մուտ առիս տղայ՝ ուշով դու հասուն ,  
 Թէ մարդ ես ստոյգ և ոչ անասուն ,  
 Գտցես քեզ դարման մտօքդ զգայուն ,  
 Աւցես զօրութիւն յայտնի և թազուն :

Արդ մի՛ բարկանար ծանրագոյն բանից :  
 Եւ մի՛ վհատիր ճշմարիտ սաստից ,  
 Մաքրութեամբ սրտիդ 'ի միտ առ զանցեալս :  
 Զապագայիցն հոգայ 'ի ներկայս :

## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երբոր հիւսը ( տիւրկեարը ) , փայտեղէն հանգչա-  
 րան մը շինելու ըլլայ , այսինքն աթոռ մը և այլն . նախ  
 փայտի վրայէն կողտ կեղեւը կը մաքրէ . երկրորդ՝  
 խորտ ու փոս տեղուանքը կը տալէ հարթ և հաւասար  
 կ'ընէ . երրորդ՝ ծուռութիւնը կը շիտկէ , և ապա կ'սկսի  
 իրեն զազափարին մէջ կերպաւորեալ հանգչարանի ձե-  
 ւին յարմար փայտը կտրատել , և իրարու յարմարցնել :  
 Յետ այնորիկ , է որ սօսինձով (թուլթխալով) և է որ  
 դամով (էքսէրով) իրարու կը փակցունէ , զկնի այնու-  
 րիկ , գոյն զգոյն երանգօք կը ներկէ և այլն , կը վնի  
 մարդու նստելու և հանգստանալու տեղիք , և աթոռ  
 կամ մահիճ :

Եւ ահա՛ ասոր նման , մարդկային ընկերութեան  
 մարմին մի կազմելու համար , այսպէս , նախ պէտք է  
 ժամանակ , Բ. աշխատութիւն շարունակ , Գ. նիւթ ,  
 Դ. գործիք , Ե. արհեստաւոր գործող : Որ ատ ընկե-  
 րութեան շէնքը հաստատ հիման վերայ շինուած ըլ-  
 լալով , հաստատուն և տեւողական մնայ :

Արդ՝ փայտ , այսինքն մարդիկ , ունիմք , բայց  
 թանձր կեղեւօք պատեալ , ինչպէս որ գրքիս մէջ պի-  
 տի տեսնաս , գործիք կայ՝ բայց աւրած է , չի՛ կտրէր :  
 Արհեստաւոր կայ , բայց բանեցնող չկայ . ժամանակ  
 կայ , աշխատող չկայ . սօսինձ և դամ կայ , փակցնող  
 չկայ : Ասոնց ամենը՝ պիտի տեսնես գրքուկիս մէջ : —

Եւ ահա ասոնք ամենը կարգի դնելու համար, ծայրէ 'ի ծայր կարդալէդ և խմանալէդ ետքը, պիտի տեսնաս քեզի կարճ ճամբայ մի, որով պիտի կրնաս քիչ ժամանակի մէջ, նպատակիդ հասնիլ, այսինքն աթորը շինել և մէջը նստել: —



ՔԱՆՔ ԱՌ ԳՐԳՈՅՅՆ

ՀԱՐՅՈՒՄ

Ուստի՞ կու գաս դու, ո՛վ բեռնաւորեալ,  
Գլուխդ 'ի խոնարհ, դէմքդ խոթողեալ,

ՊԱՏԱՍԻԱՆ

Ես կու գամ չորից, աշխարհի կողմանց,  
Սակա՛ւն 'ի շինից, շատն յաւերակաց .

Հ. Ի՞նչու կոր գլխով, դիմօք խոթողած,  
Յամբ ընթացիւք, իբրու հիւանդաց .

Պ. Շատ ծանր կու գայ, բեռն իմ թիկանց,  
Ո՛ր տաղնապէ զիս, վաղ ժամանակաց .

Հ. Բեռինդ մէջ ի՞նչ կայ, մեզ վաճառելու,  
Օղի կամ գինի . . . անոյշ խմելու .

Պ. Երեսուն տեսակ, անոյշ ու լեղի,  
Ունիմ՝ կերակուր, աղի կամ անլի .

Հ. Արդ՝ քեզմէ կ'ուզենք, մեր քմաց յարմար,  
Նոր մօտաներէն, հազուստ մեզ համար .

Պ. Նոր մօտաներէն, բեռս ծանրացած,  
Յարմարքն քմաց, զմեզ մահացուցած .

Հ. Ե՛րբ պիտոր բանաս, կունակիդ բեռը,  
Ցուցունես մեզի, վիրաց դեղերը .

Պ. Ի՞նչ պիտի բանամ, վերքըդ շա՛տ հին է,  
Դեղքն զօրաւոր, քեզ կը ցաւցունէ .

- Հ. Մենք ցաւ չենք զգար, քուկիդ դեղերէն,  
Երբ շինուած ըլլայ, քաղցր հիւթերէն .
- Պ. Իմ քովս չկայ, շահախնդրութիւն,  
Գունով ներկուած, սուտ ճամարտութիւն .
- Հ. Առանց ներկելու, դեղ ի՞նչ հնար է,  
Որ մարդ ներս առնու, զինքը դարմանէ .
- Պ. Դեղորայքըս է, իսկ ճամարտութիւն,  
Զուհի իր մէջը, վատ խարդ ախութիւն .  
Ո՛չ քաղցր կեղծ բանք, ո՛չ անուշ ստանք,  
Եւ ո՛չ մասնաւոր շահ ի՛նչ անձնականք .  
Զուտ մաքուր դեղը, շուտ կը դարմանէ,  
Թէ միւս դեղոցը հետ համաձայնէ,  
Կու տայ զօրութիւն տկար երակաց,  
Քաջ առողջութիւն, համայնից վիրաց :  
Այնք որ չեն հաճիր . և չեն ողջանար,  
Բեռանց ներքեւէն, ազատ չեն ըլլար,  
Զուր ջան, անօգուտ, աշխատ անդ աղար,  
Մինչ ցգերեզման, մեան 'ի խաւար : —

ՈՂԲ ԵՒ ԱՂԱՂԱԿ ՄԵՐՆԴՈՅՆ ՀԱՅԿԱՅ  
ԵՒ ԱՐԱՄԱՅ

Ո՛հ, թշնամիք առն՝ ընտանիք նորա . (Մր. Ժ. 56) :  
Բայց արմատք արդարոց ո՛չ հատցի . (Առ. Ժ. 5) :

Ուրի սրի ցուտ աղաղակէ Հայաստանն որբո՛քն :

Անցին զինեւ ժամք և աւուրք ապերջանիկ և բօսէք,  
Կեամ և վարեմ զանուպայ կեանս երջանկացայ ո՛չ երբէք,  
Այլ իմ աստէն քաղին ողիք յերբ յուշ ամեմ զիմ վիճակ,  
Սմեն ուրէք անբաղդացայ, աշխարհէ ինձ հակառակ :

Սէր՝ զե՛նչ դէ՛ղ և դարման աւեց՝ դէ Բժշկեցե՛ց .

Լո՛ւր ինձ՝ որ յանկեղծ սրտէ տաց քեզ պատասխանի,  
Գի եթէ լուիցես և հնազանդեսցիս, յայնժամ  
դացես բաղդն յաջող քեզ վաղվաղակի :

Անկեղծ վճիռ մայրան, կու 'ի սրտի ասո՛ւ Բագուան .

Յիշեա՛ զանցան մեր ազգայնոց ա՛ն 'ի միտ քո և հանգի՛ր,  
Տե՛ս 'ի ներկայս զի՛նչ ինչ դործի զայն անսխալ հան 'ի գիր  
Նովին շափով առ 'ի կշիռ, զասպազային գուշակումն,  
Գտցես զչնորհս քեզ անդորր կեանս, քաղցրաճաշակ մեզը  
ընտիր :

Բատ առածին . Յիշե՛՛ր շտեղծուն և դե՛ս զնե՛րդն և գո՛ւ  
չակե՛ս զսպարհոյն :

Ուրեմն լուարո՛ւք .

Ո՛հ, որդիք Հայկայ և Արամայ միահամուռ ազգ նորա,  
անկան 'ի ձեռս աւազակաց . որ մերկացուցին գնա  
և վիրաւորեցին՝ եղեալ զվերս 'ի վերայ նորա և թողին

զնա կիսամահ և զնացին . (Ղև. Ժ. 55) : Ուստի՛ յոտից մինչեւ ցղլուխ չիք 'ի նմա առողջութիւն , վերք և այտու մն յոյժ , և իսպառ կերպարանափոխ եղեալ 'ի մարդկութենէ . (Եւ. Ա. 6) : Վասն զի քանչեւ զՍարգիսն , և ուրեքն զՍարգիսն քան զՍարգիսն . (Հմ. Ա. 21) : Եւ ոչ ըստ պահանջման կատարեալ մարդկութեան կացին հաւատարիմ յարդարութեան :

Վասն որոյ սղբալի և ողորմելի գտաւ Տունն Հայկայ և Արամայ հայաստան յազգս և յաղինս յամենայն : Թէպէտ որդիք որդիքն ու հարցէ : Բայց՝ զի՛նչ շահ , զի ինչո՞ք առ ընթացիկ նորա : Վասն այնորիկ : Ո՛հ , ողբամ զքեզ հայոց աշխարհ , ողբամ զքեզ հանուրց հիւսիսականաց վեհագոյնդ , զի բարձաւ 'ի քէն՝ թագաւոր և քահանայ , խորհրդական հանճարեղ , և իմաստուն ուսուցանող , վրդովեցաւ խաղաղութիւն , արմատացաւ անկարգութիւն : — Ո՛հ , ո՛ տայր զղլուխ իմ 'ի ջուր և զաչս իմ յաղբիւր արտասուաց և լայի զծողովուրդս հայաստանի , ասէ՛մ , զորդիս Հայկայ և զթուռնան Արամայ . (Երմ. 9 10) : Քանզի տեսանեմ , ինչո՞ք առ ընթացիկ նորա . (Մր. Ժ. 56) :

Արդ՝ թոյլ տուք ինձ , զի լացից դառնապէս գտունն Արքանաղեայ հայկազանց , զթուռնան Յարեթի . մի՞ բռնադատեք զիս , միսիթարեւ . (Եւ. Գ. 22) : Վասն զի ձայն գուժեաց 'ի Հռամայ (հայաստանէ) . լալումն , ողբումն և աշխարումն յոյժ , վասն որոյ լայ Հռաքէլ (հայաստան) զորդիս իւր և ոչ կամէր միսիթարիւ , զի ոչ էին որդիք նորա յանկեղծ սէրն միաբանութեան . (Երմ. 31. 15) :

Զի ոչ էին 'իխորհուրդս աստուածապաշտութեան զի ոչ էին ըստ մարդկութեան հաւատարիմ 'ի սէր անկեղծ ազգութեան , այլ և մոլութեան , մասնաւոր շա-

հասիրութեան , խարդախ ատելութեան ցիր և ցան 'ի կորուստ անձանց և հարստութեան իւրեանց . (Հայոց պատմ. 2-րդ հատոր էջ 235) : Ո՛հ տաճարութիւն զի թշնամիք առն ընտանիք նորա :

Զի ահա՛ թագաւորն հայոց Անանէ , տայ նահատակել զԱղդէ հայրապետն , մինչդեռ նա քարոզէր յատենին զբանն կենաց : Եւ յետ սորա յաւել շարացաւ արքայն հայոց Սանատրուկ և ստեաց երդման իւրոյ և կոտորեաց զամենայն արու զաւակսն տանն Արքարու , և յաւել սպան զԹաղէոս առաքեալն , և զդուստրն իւր հաւատացեալ զՍանդուխտ , և զայլս բազումս յոյժ :

Վասն այնորիկ մատնեաց Տէր զնոսա 'ի ձեռս հեթանոսացն Պարսից և Արարացուց , Մարաց և Սիլիւթացուց և այլոց դաժան ազգացն արեւելից և արեւմտից , հիւսիսոյ և հարաւոյ : Եւ յետ այնորիկ տիրեցին նոցա ատելիք իւրեանց , և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա . և խոնարհ եղեն իբրու զիսրայէլ 'ի ներքոյ ձեռաց նոցա . (Սաղմ. 105. 41) : Եւ նստաւ այնուհետեւ 'ի սուգ աշխարհն հայաստանեայց , ձեռն 'ի ծնօտի համակեալ յարտասուս , և զրկեալ յամենայն վայելչութենէ , մենացեալ իբրեւ զայրի տըրտմազին :

Թէպէտ արմատք արդարոց ոչ հատցի (Արմ. Ա. 5) բայց զի՛նչ օգուտ , զի թշնամիք առն ընտանիք իւր . (Մր. Ժ. 56) . սակայն ողորմութիւն Աստուծոյ գոլով բազմադեղ և անսպառ , ոչ յիշելով զմեզս նոցա վասն Հայկայ աստուածապաշտութեան և վասն Արամայ բարեպաշտութեան , բազում անգամ փրկեաց զնոսա և յաջողեաց նոցա , որպէս յաւուրս մեծին Տրդատայ հայոց արքայի . (Պատմ. Հայոց. Բ. Հր. Եր. 984) : Որպէս



ասէ պատմութիւնն . « Երանելի թագաւորն Հայոց Տրդատ , բարբոսին զուարճացեալ առատաշնորհ լուսաւորութեամբ սրբոյն Գրիգորի և Արտակեայ , օրքան զօր առաւելոյր . և նորոգեաց զամենայն ուղղութիւնս , զոր սահմանեալ էր հայր նորա » , և այլն . ( Պատմ. Հայոց Ա. Հր. Էր. 599. 441. ) : Բայց սակայն տունն Արքանազեայ ևս քան զևս հեռացեալ 'ի կատարեալ մարդկութենէ , դառնացուցին օրքան զօր դառնագոյնս զտուօղն շնորհաց և բարեաց՝ յանուղղայ գնացս ընթացից իւրեանց 'ի վատթար խորհուրդս ամբարշտութեան : —

Զի Արշակ Տիրանեան արքայն Հայոց , յետ սպանանելոյ զԵղբօր որդին իւր զԳնէլ , առաւել չարացեալ շինեաց զԱրշակաւանն և անդ լցոյց զչարեօք լցեալ վամբարիչտան : Եւ նոյնպէս 'ի չարիս տմարդութեան , ձեռնամուխ եղեն Մերուժան և Վահան . ( Հոյ. 1 Հր. Եր. 965 ) : Որք համարին լինել որպէս թէ՛ որդիք և թոռուք Հայկայ : —

Եւ յետ բազում չարութեանցն գործեցելոց 'ի նոցանէ , կալեալ զեպիսկոպոսունան և զքահանայս կապեցին 'ի շղթայս և բազում ազգի ազգի տանջանօք վարեալ 'ի մահ , հասուցին զվախճան պատուական կենացն : —

Վասն որոյ վիշաք դժոխոց պաշարեցին զհայաստան և բազմատեսակ տանջանօք և չարչարանօք մաշեցաւ և հալեցաւ 'ի Բոփս նեղութեանց և 'ի հնձանս սպանուելեան , և միանգամայն ժամանեաց նմա որոգայթք :

Մինչեւ հուսկ յետոյ եղև դերութիւն արքային Հայոց Լեւոնի Լուսինեան յԵղիպտոս և բանտարկութիւն իրբև զարքայն իսրայելի Սեդեկիա . ( Երմ. 9 52 ) : Յամին 1375 փրկութեան մերոյ , և սոյս վախճան կե-

նաց նորին 'ի բարիզ , և թաղեցաւ անդ , 1395 ին , և բարձաւ միանգամայն թագաւորութիւնն Հայոց և կորեաւ գլխովին հարստութիւնն թորգոմեան աղին , և անկաւ ընդ իշխանութեամբ օտար ազգաց , և եղեն նեղիչք նորա 'ի գլուխ և թշնամիք նորա յուրախութիւն . ( Որմ. Երմ. 1 9 ) : Զի տէր կորացոյց զորդիս թորգոմեան վասն բազում ամբարշտութեանցն , զի լցաւ երկիր անիրաւութեանցն . ( Հր. 3 Երմ. 561 ) : Վասն որոյ 'ի հինգ հարիւր ամաց հետէ , որդիք Հայկայ տառապեալ և թշուառացեալ 'ի դրունս օտար ազգաց երբեալ անտերունջ և դեղ երեալ 'ի վիշտս և 'ի ցաւս անդարմանելիս , և ցրուեալ ընդ համօրէն ոլորտս երկրի , գօլով ծառայ և սպասաւոր , այլ և այլ բարի և չար տեսարց . տես 'ի մատեանան ժամանակագրաց պատմաբանիցն Հայոց , յունաց և լատինացոց և այլոց ազգացն , սկսեալ յամի աշխարհի 1556 էն , մինչեւ ցամ տեսուն 1878 , ուր պատմի զհայոց զանցիցն : Եւ մանաւանդ զՉամչեան երեք հատորան , և զպատմութեան դիրան լատիվերացոյ , և այլոց և հարց պատմիչացն , խորենացոյ : Եւ ուր տեսանի ընդդէմ Աստուծոյ և մարդկութեան գործեցեալ չարութիւնքն 'ի Հայկայ սերնդոցն , զոր Հայի ոչ երբէք գործեաց , և ոչ ներէ անագորոյն , թոռանց և սերնդոցն այնուցիկ , որք գործեցին զանօրէնութիւնան զայնսսիկ : —

Ուրեմն մաղթեսցուք առ տէր Աստուած , զի ներեսցէ տանն Հայկայ գործեցելոց չարեացն վասն ամենայն հոյազգի ծառայից իւրոց , որք արդարութեամբ և աստուածապաշտութեամբ գնացին առաջի Տեսուն Աստուծոյ :

Մադրանք առ Աստուած, վասն ազատութեան սերնդոցն Հայկայ .

Ո՛հ, ըստ Եզեհիայի քեզ մաղթեմ փրկիչ, յիշեա զայնոսիկ զորդիսն Հայկայ որք ճշմարտութեամբ և արդարութեամբ և կատարեալ Աստուածապաշտութեամբ գնացին յամենայն յօրէնս քո անարատ առաջի քո սուրբ սրտիւ . (Եւ. 38 5) : Եւ ըստ Յօնանու աղաղակեմ առ քեզ տէր սարաւօր, Աստուած հօր, միթէ՞ մերժեցաք միանգամայն յերեսաց քոց, և ո՞չ եւս յաւելցուք տեսանել զհայաստան քեւ փառաւորեալ, և յառաջին փառսն ժամանեալ պերճասցի յուրախութեանս Զի ահա 'ի նեղութեան մերում կարդամք զքեզ տէր՝ մեզ 'ի յօգնութիւն, տո՛ւր մեզ տէր, տո՛ւր մեզ, զփրկութիւն . (Յժ. 2 5) : Իբրեւ զտակառուպետն Փարաւօնի, բաժակն ուրախութեան 'ի ձեռին մերում կալ յազատութեան 'ի խնջոյս փառաց քոց տէր . (ԾԻԿ. 40 21) : Պարգեւեա տէր զթմրուկն օրհնութեան 'ի ձեռս մեր իբրեւ Մարիամու քեռ Ահարօնի, հարկանելով երգել զօրհնութիւնս ազատութեան մերոյ 'ի ձեռաց թշնամեացն . (Եւե. 15 21) : Զի ահա ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն և բնակութիւն մեր 'ի նժդեհութիւն . (Ար. 2 2) : Որք և այրի եղեալ անխնամ և անտէր մնացաք, զի ոչ գոյ մեզ հայր բաց 'ի քէն, ո՛ խնամատար փրկիչ, յիշեա միանգամ և տես բարերար, որ ինչ անցք անցին ընդ որդիս և սերունդս Հայկայ ընդ սիրելի ծառայի քո, հայեա՛ց 'ի նեղութիւնս մեր և 'ի նախատինս մեր և 'ի տարազրիւ մեր 'ի բնակութեանց, զոր կրեմք շարունակ 'ի հինգ հարիւր ամաց անտի 'ի ձեռաց անգուտ անօրինացն ,

Ո՛հ, ով տէր, միթէ՞ հարքն մեր մեղսն, և մեղք հարցն մերոց, ընդ մեզ ելին : Ահաւասիկ տես բարեխնամ տէր, զի մորթք մեր կարկամեցան իբրեւ զթոնիր հնացեալ : Եւ մինչեւ յե՞րբ մոռանաս զմեզ, և մինչեւ ցե՞րբ բարձրասցի թշնամին 'ի վերայ մեր և 'ի վերայ դաւակաց մերոց, մինչ իսպառ մոռանայցե՞ս զտունն Արամեան, մեք լուաք 'ի դաւթայ, թէ՛ ս'չ իսպառ բարկանայ մեզ տէր, և ո՛չ իսպառ պահէ ռսս յաւիտեան : Ապա ընդէր կաս մինչ ցարդ 'ի հեռաստանէ և անտես առնես զտունն Հայկայ 'ի դէպ նեղութեան : Արի՛ տէր, և փրկեա՛ զմեզ վասն անուանդ քում սրբոյ : Ե՛կ բա՛րձ զնախատինս որդոց շնորհաց քոց, և օրհնեա՛ զհայաստան զհոգեւոր որդիս սուրբ եկեղեցոյ քո, կեցո՛ տէր, և ասրեցո՛ զհայկազինսն, վասն Նոյի սիրելոյ քոյ և ամենայն ծառայից քոց : Եւ պահպանեա՛ ընդ հովանեաւ ամենազօր աջովդ քով սրբով, և տեսցեն ատելիք քո և ամաչեսցեն, և մի՛ կարասցեն այսուհետեւ ասել, վաչ վաչ, զի ընկլուղաք զնա, և յաղթեցաք նմա : Հաս 'ի թիկունս մեր, զի նուաղեցաք յոյժ : Ո՛հ, ո՞վ տէր, ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ բաց 'ի քէն, զի դու միայն ես առանց մեղաց, մեք թողունք Հայկայ և սերեալ 'ի սխալտն Ադամայ . (ԾԻԿ. 18 27) : Հող և մոխիր, որդն եմք և ոչ եմք մարդ նախատինք մարդկան : Բայց արդ՝ շնորհիւ քո տէր, և ողորմութեան խաչն արօտի քո, եմք և ժողովուրդ երկիրպագու ամենասուրբ անուանդ . (ՀԻԲ. 9 28) : Ուրեմն մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինսն, և մի՛ զհարցն մերոց, Քանզի նեղութիւնք սրտից մերոց բազումք եղեն յոյժ յոյժ, և 'ի վշտաց մերոց հան զմեզ : —

Եթէ ոչ հեղցես զշնորհս քո 'ի մեզ ողորմութեամբ քով, ապա ո՛ւր երեւեսցի ողորմութիւն քո առ մեզ,

զոր երբեմն երեւեցուցեր և հեղեր 'ի Նպատ լերին ,  
 յորժամ Ներսէս ծառայ քո իբրեւ զՄովսէս բազկա-  
 տարած կայր յաղօթս , յազատութիւն ժողովրդեան  
 իւրոյ . ( 1 Հո . երե . 466 ) : Արդ զնոյն առ այժմ մաղթէ  
 առ քեզ տէր տունն Հայկայ և Արամայ , զի հեղու  
 կաթիլ մի ողորմութեան և մարդասիրութեան շնորհաց  
 քոց , 'ի բնակութիւնս և յորդիս Հայկայ և Արամայ ,  
 և սրբոյն Գրիգորի բազմաչարչար նահատակ ծառային  
 քո , որով հանգիցէ անձն նորա 'ի բարութեան և զա-  
 ւակ նորա ժողովեսցի 'ի հայրենիս իւր հայաստան աշ-  
 խարհ : Ուրեմն տարածեա զբազուկս շնորհաց քոց և  
 ժողովեա զցրուեալ զորդիսն շնորհաց քոց : Ո՛հ , ո՞վ  
 տէր , վասն երից մանկանցն խոնարհեալ իջանես 'ի  
 մեղսալիցն բաբիլոն 'ի հնոցն բորբոքեալ հրոյն և ան-  
 կեզ պահես զնոսա և փրկես . ( Գ՛ւր 5 . 39 ) : Հիմ ո՛չ  
 իջես 'ի հայաստան 'ի փրկութիւն տառապեալ ժողո-  
 վրդեան քո , 'ի ձեռաց անգութ դահճացն : Ո՛հ , ո՞վ  
 տէր , որ վերակացու լինիս սրբոյ քաղաքին Երուսա-  
 ղէմի և պահես 'ի սրայ կոտորմանէ զօրացն Սենեքերի-  
 մայ . ( Ե՛ւ . 37 38 ) : Չիա՞րդ , ո՛չ պահեսցես զհայաս-  
 տան աշխարհ , զբնակարանն որդւոց Թորգոմեան . ( Եր՛ .  
 38 13 ) : Աղաչեմ զքեզ բարեխնամ տէր , զի՛ զԵրե-  
 միան և զԳանիէլն , զՅովսէփի և զԻսրայէլն , զլիսովին  
 ազատեցէր և զՇուշան փրկեցէր . ( Գ՛ւր 14 42 ) : Ե-  
 զիա՞րդ ոչ փրկեսցես զտունն Հայկայ , զի ահա տէր ,  
 ամբարտաւանիլ ամբարիչտին այրիացեալ տունն Ագա-  
 նագեայ այրեցաւ և տոչորեցաւ . ( Սգ՛ . 41 14 ) : Ուս-  
 տի սասանեալ ըստ ամենայնի և զարհուրեալ միանգա-  
 մայն տունն Հայկայ և Արամայ անշուք անկեալ 'ի  
 խոր սրտէ ողբալով աղաղակէ առ քեզ տէր ասելով :  
 Տեր՛ զե՛ս զե՛նչ կամիս առել յայս՛ իշխանութեան . ( Գոր՛ .

9 6 ) : Չի վիրաւորեալ առաջակացն կիսամահ անկ-  
 եալ մնամ ողբալի . ( Ղէ՛ս Ժ . 36 ) : Եւ ասէ տէր  
 յո՞քն կա՛ց , և թախտէս 'ի թե՛ն զան՛ի-բանութեան արեւի  
 ո՞քայ զէ՛րջն . ( Ե՛ւ . 52 2 ) : Եւ յայնժամ պատմեսցի քեզ  
 արժանն և պիտանին :

Բանքն Աստուծոյ առ տունն Հայկայ եւ Արամայ .

Ո՛հ , լուարո՛ւք բնակիչք երկրի , զի՛նչ ինչ առնելի  
 էր տանն Հայկայ և սերնդոց նորա ես ոչ արարի՞ , ա-  
 սացէք ինձ որդիք Աղամայ և շնորհաց : Ծնաւ Հայկ  
 յամի աշխարհի 1227 ին . և օրհնեցի զնա և զորդիս նո-  
 րա , և բարձրացուցի 'ի փառս և 'ի յաղթութիւնս աշ-  
 խարհիս , զի նա մինչ դեռ մանուկ հասակի և թուով  
 սակաւաւոր և տկար զօրութեամբ կայր 'ի դաշտն Սե-  
 նաարայ , և յայնժամ ետու նմա ոգի զօրութեան մեկ-  
 նիլ 'ի Բելայ , և գալ 'ի հայրենիս իւր յԱրարատ աշ-  
 խարհ , և իբրեւ եկն , և օրհնեաց զիս և գոհացաւ զի-  
 նէն , և յաւել ետու նմա զզօրութիւն յաղթութեան  
 յաղթել Բէլի , յորմէ ողջոյն ազգ մարդկան սարսեալ  
 և սասանեալ դողային , իսկ նա միայնակ արձակմամբ  
 միոյ աղեղան յանուն իմ 'ի կոր կործանեաց զմեղէն  
 լեառն զԲէլ , և երկիրեպագ ինձ , և օրհնեաց զիս և  
 փառաւորեաց , քանզի արար ինեւ յաղթութիւն մեծ :  
 Ուստի յետ այնորիկ բարձրացուցի զնա քան զամե-  
 նայն որդիս մարդկան որ 'ի վերայ երկրի , և խոնարհ  
 առնելով զիշխանսն առաջի նորա , որք շուրջ զնովաւ  
 դրացիք էին նմա : Եւ նա՛ իբրև ճանաչելով զերախ-  
 տիս , զոհացաւ և օրհնելով սուրբ սրտիւ երկիրպա-  
 գեաց ինձ , և յաւելաւ յօրհնութիւնս . նոյնհետայն  
 և ես յաւելի տալ նմա շնորհս , բազումս , և յարուից

յերանաց նորա զքաջն Արամ զվեհն զհայկազունս, որ արար յանուն իմ քաջութիւնս բազումս և ընդարձակեաց զտէրութիւն իւր 'ի լերանց կովկասու մինչեւ ցլերին Տորոսի, և զթշնամիս նորա Նիւքար, զԲարչամ և զՊայապիս խոնարհ արարի ոտից նորա, և իբրեւ նա՝ գոհանայր զինէն և ճանաչելով զերախտիսն յաւել զօրհնութիւնս, եւս քան զեւս, ես յաւել ինմա զփառս և զպատիւս, տալով նմա թագաւորս հզօրս զՊարոյր, զԱրտաշէս, զՏիգրան և զայլ բազումս, որք յաղթեցի ազգաց և ազանց և հանդիսացան փառօք: Միանգամայն 174 նահապետօք և թագաւորօք պատուեցի զնա, և դարձեալ նա՝ ոչ պակասիւր յօրհնութիւնս և 'ի գոհութիւնս, և կատարեալ սիրով պաշտէր զիս, և ես փառաւորելով զնա, թագաւորք ազգաց խոնարհեալ ծառայեցին նորա գահին, և հոգւով լցեալ 84 հայրապետօք փայլեցուցի և արամբ հանձարեղինօք շուրջ զարքայական գահին պարառեալ զարդարելով և ըզթիւ սերնդոցն մինչ ցերեսուն և վեց միլեօն բազմամացուցեալ հասուցի, և ամենայն բարութեամբ երկրի լցուցի, մինչդեռ նա մեծազոյն մասամբ սերնդոց փառաւոր առնէր զիս և գնայր յարդարութեան ճանապարհս: « Եւ իբրեւ կազաց 'ի շաւիղս արդարութեան յաւուրս Ղեռնի Լուսինեան հայոց արքայի Ռուբինեանց, և կորացան յանօրէնութիւնս իւրեանց, լուցին ձայնք օրհնութեանց, և դադարեցան արդարութեան և ողորմութեան գործք, և բանք ճշմարտութեան, փոխանակ զի սենէր տալ ինձ խաղող քաղցրութեան և նա յանկարծ երեր ինձ գուշ անիծից և խաղող դառնութեան, ուրեմն լուիցեն երկիրք և երկիր, նոքա դատ արասցեն ընդ իս և ընդ այգին իմ տուն Հայկայ և Արամայ, զի եզն ծանեաւ զստացիչ իւր և

էչ զՄսուր տեառն իւրոյ, իսկ նոր խրայէլ տուն Ասքանագեան Հայկայ և Արամայ զիս ոչ ծանեաւ, և աղաղակ չարութեան նորա ել առ իս, քանզի՝ զո՝ 'ի ճշմարտասօսիցն սրբոց, և արդարադատ արանցն ո՛չ հալածեցին և սպանին. (Խորհ. Պր. 52. 87. Եր. 167 276): Եւ ահա մուտ 'ի պատմութիւնս Չափեան (Հր. Ա. Բ. Գ.) և տե՛ս (Եր. Ա. Հր. 63 75 101 212 18 76 375 425 54 47 67 566): — Եւ արդ հի՛մ ողորմեցայց այնոցիկ, որք չունին երբէք զողորմութիւն 'ի սիրտս իւրեանց առ ընկերս: Եւ զիա՛րդ զթացայց առ այնսիկ որոց 'ի սիրտ նոցա չիք նշոյլ զթութեան առ եղբարսն իւրեանց. Ե՞յ. Ա. 2): Զի բազում անգամ կամեցայ փրկել զնոսա և ածել յուղղութիւն և ոչ կամեցան: Ուստի կամովին ենթարկեցին զինքեանս բազմատեսակ թշուառութեանց պատժոյ աշխարհիս այսորիկ, որպէս զի դարձցին 'ի չարեացն և բժշկեսցին, ըստ այնմ թէ « դարձարուք առ իս և ես դառնամ առ ձեզ » քանզի զոր սիրէ տէր խրատէ, տանջէ զամենայն որդի զոր ընդունի. որով ապաշխարեալ փրկեսցին. ըստ գրոյն (Ղկ. Ժէ 31): Զի յոտից մինչեւ ցգլուխ չիք 'ի նմա առողջութիւն. (Ե՛. Ա. 6): Քանզի ծանեան զԱստուած և զմարդկութիւն, և ոչ զԱստուած պաշտեցին, և ոչ կատարեալ մարդկութեամբ գնացին յարդարութեան յօրէնսն: Ուստի յարեան ոմանք որդիք ժանտք և երևեցաւ սերմն անօրէնութեան. վասն որոյ ընկեցից զնոսա յերկրէ, հայաստանէ յերկիր օտար, զոր ո՛չ գիտեն նոքա և հարք իւրեանց, և ծառայեսցեն այնոցիկ, որք ոչ արասցեն նոցա զողորմութիւն. (Եր՞. ԺԶ. 15): Լսեցիր հայու դաւակ Աստուծոյ խօսքերը և մեղադրանքները և դանգադանքը. այո՛: Տէ՛ մտիկ ըրէ, այն օրէն մինչեւ ցայսօր. վերադ եկած հազար

979  
63

սւ մէկ տեսակ ձախորդութիւնները , որն որ : հաւատացեալի մի համար Աստուծոյ եկած պատիժներ կը համարուին , որ մինչեւ հիմա չէ զգացեր հայը , և ոչ ալ զգալիք ունի : Թեպէտ որդարոց ոչ հարցի . (Աւի. Ժ. 5) : Բայց ինչ օգուտ , թշուօտ առն' ընդունիք նոր . (Մատ. Ժ. 56) : —

Ահա սոյնի տես զուսկն թշուօտ հայոց զարթի՛ , որ որչափեւ 'է Հայաստան ցրտեաց զհայս էբբեւ ի՛ք : —

Առաջին պատիժ եւ թշուառութիւն .

Կը հարցունեմ՝ քեզմէ հայու զաւակ , աշտարակաշինութեան ժամանակի ամբարտաւան մարդկանց հրակայից . (Թադ. Գ. 11) : Թշուառութեան պատճառն ի՛նչ էր , և ի՛նչով թշուառացան : Չէ որ լեզուներու բաժնուելով անմիաբան ըլլալը և Սենաարայ դաշտէն հեռուեր օտար երկիրներու մէջ ցրուիլն էր այո՛ :

Եւ հիմա ալ ի՛նչ տարբերութիւն ունի հայոց զաւակներու իրարու լեզու չհասկնալով անմիաբան հաստատանէն դէպ 'ի հեռուեր օտար յերկիր երթալ ցրուիլը , յիշեալ ամբարտաւան հսկայից ցրուելէն . կը պատասխանեմ հայր , երբէք տարբերութիւն մը չունի , երբոր կը տեսնեմք յայտ յանդիման հայու զաւակներ հողագունտի տակն ու վրան և չորս բոլորտիքը ցրուըւած և հաղար մղոներով իրարմէ հեռի , գիտես թէ՛ հրէից համար Երեմիայ մարգարէի ըրած մարգարէութիւնը ճիշդ հայոց համար եղած կ'ըլլայ :

« Ինչպէս որ կ'ըսէ » : Տոց դուստ « Է ցրուօն ընդ ափնայն Թադարոսիւնս . (Երմ. 24 9) : Տէ՛ , հրամէ տես քեզի , հայու զաւակները հայաստանէն ո՛ւր և ի՛նչ տեղ պիտի գտնաս : Ահաւասիկ , Հնդկաստան և Յունաստան , Պարս-

կաստան և Հրէաստան , Վրաստան և Ասորեստան , Բուսաստան և Արարատան , Կորդուաստան և Լեհաստան , յեգիպտոս և Բաբելոն , Ուլահպուկտան , Բարիզ վենետիկ , Վիէննա , Գերմանիա , Լոնտրայ , Հոսովմ , և այլն , մինչեւ ցԱմերիկայ :

Ո՛ւր է Մատրաս , ո՛ւր է Կոստադնուպօլիս , ո՛ւր է Մօսկուա , և ո՛ւր է Չմիւռնիա , և ահա այսպէս հայու զաւակները իրարմէ հարիւրաւոր և հազարաւոր մղոներով հեռի երկիրներու մէջ ցրուած կը բնակին որբ և այրի , ծառայ և սպասաւոր օտար տէրութեանց հպատակ , այն եւս իրարու հետ ատելութեան ոգով անմիաբան . ուստի Չաքարիայի , Երեմիայի , Եսայի մարգարէութիւնները հայու զաւակաց վերայ ճիշդ կատարուած կը տեսնուի , ուր որ կ'ըսէ Չաքարիայ , « Հանից զնոսս ընդ ամենայն յազգս , զոր ոչ գիտեն . (ԶԻ. 7 14) : Նոյնպէս Երմ. « ցրուեցից զայր և զեղբայր իւր 'ի միասին ասէ տէր . (Երմ. 15 14) : Եւս և Ես . « զի մեզքն հայկազանց գրեալ է գրչաւ անդամանդեայ եղեգաւ , 'ի տախտակս սրտից նոցա : Քանզի հպարտացեալ որդոց (Հայկայ) գնացին 'ի բարձր պարանոց յօնօնք արկնարկէին . (Ես. 5. 16) : Արդարեւ եթէ ճշմարիտ Հայկայ յերանայ ի՛րած սերունդէն հարազատ ծնունդ ըլլային միաբանութենէ չէին զատուէր , և օտարին հետ չէին երթար ըստ գրոյն , առխարք իմ զհետ օտարի ոչ երթիցեն » . (Յճ. 10 5) : Բայց սոքա գնացին օտարին հետ , և զօտարն սիրեցին , սսէմ , զանմիաբանութիւն , զոգի ատելութեան , կիրք , կամասպաշտութիւն , ետութիւն և ինքնահաւանութիւն , և զայն , զորս Հայկը և Հայկայ ճշմարիտ սերեալ որդիքն չեն սիրած և չեն ալ սիրեր , վասն զի Հայկայ հարազատ որդիք են : Իսկ անոնք որ օտարին ետեւ կ'երթան իրենք ալ օտար սե-



պէս որ կերեւի Հայոց պատմութեան, (Ս. Հարթ. Երեւ. 454, և 444, Ֆինլ. 472 Բերլ.). Ստուած ալ վճռեց հայոց յանցաւոր զաւակացն առժամանակեայ ապաշխարութեան պատիժ, ցիր և ցան ըլլալ առանց որոշման թիւ ժամանակին, որպէս զի այսօր դարձցի 'ի շար ճանապարհէն և կէցցէ: Բայց Հայը և կամ լաւ ևս ասել յօտար ազգացմէ եկամուտները, ոչ զղջացին և ոչ դարձան. աւելի ճշմարիտ Հայկայ զաւակները անգամ հեղինելով նախասացին: Վասն որոյ երկարեցաւ առժամանակեայ պատիժն դարաւոր ժամանակաւ մինչև ցայսօր. և Երեմիայ մարգարէի գրածը, Հայ անուն ազգի վրայ կատարուեցաւ, թէ և հրէից համար խօսուած էր, ինչպէս որ կ'ըսէ. «Գրեալ շարդարաբէր, Ֆ' անցեցէ յառաջ եւր, և Ֆ' անցեցէ 'ի զաւակէ որոս այր, և» (Երմ. 22. 30):

Սրգարեւ հայկազանց տունն օր քան զօր չաճելով պակասեցաւ, ինչպէս որ կ'երեւի յայտնի: Երեսուն և վեց միլիօն Հայ զաւակներէն պակսելով՝ եկաւ հասաւ չորս միլիօնի, այն ևս ցիր և ցան օտար հողերուն մէջ, և օտար տէրութեանց հպատակ և ծառայ, և իւր մէջ ալ ատելութեան ոգով պաշարեալ անօրհաս և խռով, ինչպէս որ վերը առաջին պատժոյ մէջ յիշուած է և տեսաք: Ուրեմն ցաւօք սրտի ըսենք. Ո՛հ, ո՛ւր ես ընտրեալդ յորսվայնէ և վշտացեալդ ցաւօք և հեծութեամբ մարդարէդ Երեմիա. ի՞նչ եղան Արարատեան թագաւորութիւնները, և ո՛ւր կորեան դնացին, և անոր դուռները ո՛ւր թռան Հայաստանէն և անհետ եղան. որ ասկէց 2321 տարի յառաջ ձայնող բարձրացուցած որոտալով, Ստուածոյ հրամանն գոչելով կ'ըսէիր. «Պարտէր որո՛ւտ յինէն Սրբարդեան Բագաւորութեանց և Ստանալեան բնոյին, կանգնեցէ՛ր նովա-

ձեռնալու և ելէ՛ր 'ի վերայ» (Երմ. 31. 27.) և: Ո՛հ, ի՞նչ եղաւ և ուր գնացին այդ բազմածնունդ Հայկայ և Սրամայ ճշմարիտ որդիքը, ո՛վ Երեմիա:

— Ուր պիտի երթան. ահա Ստուած թոյլ ետ ամուլ օտարները բազմածին ըլլալ, և բազմածին Հայկայ զաւակաց ծնունդը պակսիլ, և նուազիլ 'ի ծննդոց. քանզի Տէր փակեաց զարգանդն Հայկազանց շճնանիլ և չաճիլ: Վասն որոյ պակասելով պակասեաց զերեսուն վեց միլիօն ժողովուրդն և եթող չորս միլիօն, այն ևս ցիր և ցան ատելութեան ոգով խռովեալ և անօրհաս, խղճութեամբ և հարստահարութեամբ, ևս առաւել տգիտութեամբ պարաւանդեալ, օտար հողերու մէջ. ո՛հ, բարեղութ Ստուած ողորմած, ողորմեա՛ և զթա՛:

Տեսա՞ր հիմա Հայ անուն զաւակները ի՞նչ ատիճան կացութեան վիճակի մէջ ըլլալին, որ երբէք չուրացուիր. վասն զի Ստուածը և մարդկութիւնը ճանչեցին, ոչ կատարեալ մարդկութեամբ արդարութիւն դործեցին և ոչ արարիչ Ստուածը փառաւորեցին և կամ գոհացան. անոր համար ոտքէն մինչև գլուխը տեղ մը ող չկայ. թէ և արդարներու արմատը չը խանդարիր, բայց ի՞նչ օգուտ՝ թշնամին իրեն տանը միջէն է. ու մինչև հիմա Հայու զաւակները չզգացին և զգալիք ալ չունին, ու վատ ճամբանին շարունակելու ետեւ են. երբէք չեն յիշեր թէ Արտաբոյ միութեան չիք փրկութիւն: Ասիկայ լեւրվոյ ըլլայ որ յոյսդ կտրես. քանզի ասոր զարմանը այնքան հեշտ և դիւրին է, տես՛ս ծանօթութեան (2) թուականը, որ մէկ անգամ դործ ածելու ըլլաք, քիչ միջոցի մէջ Հայոց ազգի մարդաթիւը 30 միլիօնի պիտի հասնի, և ծովու աւազին նման պիտի բազմանան. ան ատեն

պիտոր ըսէք . Օրհնեսցուք զՏէր « զի ահա ըն ծնաւ եօնն  
և Բաղնաճիւնի և Կապուկոսի » :

Բայց դու առայժմ մտիկ ըրէ Եսայի մարգարէին  
ձայնին՝ որ կ'ըսէ . « Չ-ընէր , չ-ընէր Սեծ , և չ-էջէր ք-  
շար-Սեծն » , և թօնաբեա զի-շին յորէն » :

Ապա թէ ո՛չ՝ լո՛ւր զերրորդ պատիժն և տես որ կայ  
յայտ յանդիման աշխարհի աչաց առջեւ 'ի դառնու-  
թիւնն և 'ի կսկիծ ճշմարիտ Հայ սրտերուն :

Երրորդ պատիժ թշուառութեան  
Տանն Հայոց աւերութեան :

Ո՛հ , ասկէ աւելի կսկծալի ցաւ չըլլար մարդու մը  
երրոր իրեն աչքին առջեւ տունը աւերակ և զաւակ-  
ները օտար երկիրներու մէջ ցրուած տեսնէ . հիմայ  
տե՛ս , Հրէից ազգը թէ պէտ զերի գնաց 'ի Բաբելոն ,  
և տաճարն աւերեցաւ , և քաղաքն Երուսաղէմ ան-  
բնակ անասպատ դարձաւ , բայց ետքը դարձեալ շին-  
ուեցան և սայժառացան . իսկ հայու որդիք Հայաս-  
տանէն դուրս ելան շեւան , երկիրը դարձաւ փշաբեր ,  
քաղաքները աւերակ . վանորայք և եկեղեցիք կործա-  
նուած , պալատները և բերդերը քայքայուած . Չա-  
քարիա մարգարէի ըսածը լինեցաւ հայու տան վերան ,  
որն որ հազարաւոր տարիներով Հրէից ազգին համար  
մարգարէացած էր թէ « Հանից դրսս ընդ ասիայն ազգս ,  
և երկերդ ապականեցի զի՛ն նոցա » : (Չր. 7. 14) : — Նոյն-  
պէս Եսայի մարգարեութիւնը , « Երկեր յեր ասիայն , աս-  
ղա՛ յեր հրէի » , և : (Ես. 5. 5) : — Ո՛հ , Աստուած , գիտես  
թէ Քրիստոս տէրն մեր ալ հայոց տան համար ըսած  
ըլլայ , Թողեալ լինի յեր ասիայն յեր ասիայն . (Մր. 25. 38) :  
Ո՛հ , ո՞վ տէր՝ ո՞ սայր զգլուխ իմ 'ի ջուր , և զաչս

իմ աղբիւր արտասուաց և լայի զհայրենի գաւերական  
և զկործանումնս . — Ուրեմն եղի՛ր , ելի՛ր հայու զաւակ .  
և կանգ ա՛ռ բարձր տեղ մը և երեսդ դարձուր հա-  
յաստան աշխարհի հայրենեացդ վերան , և տե՛ս աւե-  
րակ կործանուած քաղաքները , մեծաչէն բերթերը և  
պալատները : Ահաւասիկ . Անի , Արժկէ , Մեծկերտ ,  
Մանազկերտ , Նփրկերտ , Գուին , Չմկիածագ , Սիս , և  
այլ բազումք յոյժ :

Տէ՛ եկուր զաւակս , ես և դու մինակ մտաց աչօք  
նայինք հայաստանի աւերակներուն վերայ և ամայու-  
թեան ողբալով ըսենք : « Չէ ա՛րդ զարտա նարտա մեծաց-  
եալ ասիայն Բաղնաճիւնի , և եղեւ իբրեւ այլ լցեալ որդմո-  
թեամբ 'ի մեզ հեթանոսաց . և ինչո՞ւն այնպէս եղեւ հարկ-  
ոս » : (Ուէ. Ա. 1) . —

Արդ՝ տեսար աչօք և լսեցիր ականջօք հայոց տան  
թշուառ խեղճութիւնը , ու հայը տահաւին չզգալով  
ու ատելութեան հոգւով օտար հողի և իշխանութեան  
մէջ զիրար կը հալածեն և կը զրպարտեն , ինչպէս որ  
տեսանք աչօք և լսեցինք ականջօք , տե՛ս ծանօթու-  
թեան (5) թուանշանը , ուր պիտի տեսնաք , զարմանա-  
լին և զարհուրիք և դողայք , ու պիտի ըսէք ծանա-  
պարհորդութիւն Լեհաստանի գրքուով 32 երեսին մէջ  
գրուած ադ բանը . « Չէ վա՛ն հայոց զե հարկ յայոց ինդ-  
րէլ զիշնաօփ , զի ինչեան էն զօրտաք իշնաօփ 'ի կորտաք ադ-  
քին և Բաղնաճիւն են սարտ իբրեանց կորտեւլ զերտարս : Ա՛լ աս-  
կէ աւելի սրտիժ և թշուառութիւն չկրնար ըլլալ ազ-  
գի մի , որ իրեն սուրով ինքը կը վիրաւորէ և կը մեռ-  
ցունէ :

Թէպէտ , Արմարտ արդարոց ոչ հարցի , կ'ըսէ Սողոմոն  
(Աւ. Ե. 5) : Բայց ի՛նչ շահ , թշնամիտ ասն ընդամենի և ո-  
րս , կ'ըսէ Քրիստոս Տէրն մեր , (Մր. Ժ. 37) : Չի որով-





ցիս 'ի Գոսն Գեառն երթիցոս : Ինչպէս որ հրէայք ըսե-  
լով ելան յերուսաղէմ և շինեցին տաճարը , ու բերկ-  
րութեամբ գոհ սրտի ըսին , Ուրի եղոս քրիստոսի առաջն  
յոր Գիսոս զարշարանս , և աճոցն յոր խոնարհ արբեր զիշ ,  
(Սղմ. 2թ. 15) : Իսկ ողորմելի հայու զաւակները հա-  
յաստանէն ելլելով , հայաստանն ալ մտացնուն իսպառ  
հանեցին , ալ ոչ հայաստանը յիշեցին և ոչ վերադառ-  
նալու փափագեցան , ուստի աղօթք ալ չըրին , և ար-  
ժանի չեղան սուրբ Էջմիածնի Տաճարին մէջ աղօթք և  
պատարագ ընելով խունկ ծխելու : Այլ և ուր զնա-  
ցին և հոն մնացին իրենց արտաքին կացութեան վիճա-  
կէն հոգալով միայն , և ներքին հարստութիւն մ'ալ  
չիրցան ձեռք բերել : Հազիւ թէ յաջողեցան զիրար  
հալածելու և փճացնելու , տե՛ս ծանօթ ութեան (5)  
թուանչանն : Վասն որոյ երեսուն ութ ամեայ անդա-  
մալոյծին պէս քաղաքականութեան սելովայ աւազանին  
քով անկեալ մնացին և տակաւին կը մնան , և բազումք  
մտան ողջացան և յառաջադիմեցին , և Հայկայ սերուն-  
դը , որ առաջինն էր , յետին եղաւ . երբոր հայկազանց  
տէրութիւնը կը փայլէր , ո՛ւր էին ան ատեն , Գաղ-  
ղիան , Անգղիան և Ամերիկան , և կամ Արաբացին :  
Բայց անմիաբանութեան և ամբարտաւանութեան ոգին ,  
Հայկազանց զաւակները ըրաւ յետին , ու յետինները ա-  
ռաջին . (Մտ. Ժ. 50) : Ու մինչեւ ցայսօր ամեն ուրէք  
ուր որ՝ հայու զաւակներ կան մեծազոյն մասամբ ամ-  
բարտաւան և անմիաբան , ո՛չ կատարեալ մարդկու-  
թեամբ և ոչ ալ կատարեալ Աստուածապաշտութեամբ  
կրցան զիրար շահել , վասն որոյ առէտ 'ի Գոսն զտաճար  
և Գոսն այն՝ որ առնէցիտ Գոսն Գոսն , (Մտ. Ի. 28) :  
Վասն որոյ ալ ոչ կրցաւ տաճարին մէջ ուրախութեան  
տօն կատարել հրէից նման , և ոչ ալ խունկ ծխել :

Ուստի՛ եկաց մնաց ամբարտաւան լիրբ ոգով աս-  
տանդական թափառեալ , Եւ յաւել , այն որ չունիւք  
ունիմք կ'ըսենք , զայն որ չառինք առինք կ'ըսենք . Ինչ-  
պէս որ Առաքեալն Յակոբոս կ'ըսէ , Գ. 5 : « Յանկայ + և  
ոչ առնէ + , նախնայի + և ոչ կարէ + հասանել , կոտորէ + և ոչ ու-  
նի + , զան : Է ոչ ինքրէի զբարին ընկերին » և : Ըստ Նարե-  
կացոյն , Դէ անկէնքան և իստան մեռալ : Ինչու որ ,  
Աստուածը և մարդկութիւնը ճանչեցին , ոչ Աստուածը  
գործով պաշտեցին և ոչ ալ կատարեալ մարդկութեան  
սահմանին մէջ կեցան , որոյ դարմանը տե՛ս ծանօթ ու-  
թեան (8) թուանչանը : Եւ արդ՝ չորս տեսակ ճախոր-  
դութեամբ մինչդեռ թշուառութեան ներքեւ ընկած  
կը հեծէ , հինգերորդ պատիժն ալ վերան առած կը  
կը տագնապի , թէպէտ արդարներու արմատը չպակ-  
սիր , բայց ի՞նչ օգուտ , թշնամին տանը մէջն է :

Պատիժ հինգերորդ կարի յոյժ թշուառ . . .  
Զվաստակ նորա , բղնամին էառ .

ՊԱՏԻԺ Ե՛ ԵՐՈՐԴ

Հրէից ազգը թէ գերութեան ժամանակին 'ի Բա-  
բելօն , և թէ հրէաստանի մէջ իրեն քրտանց վաստակի  
պտուղը ինքը կը վայելէր , թէ և երբեմն կը յափշտա-  
կուէր այլազգացմէ , բայց ոչ դժբաղը հայու սերուն-  
դին պէս շարունակ , որ հինգ հարիւր ամաց հետէ նո-  
րա վաստակին պտուղները օտարներ կը խեն նորտ  
ձեռքէն և կ'ուտեն , զի հայը չէ կրցեր իրեն ձեռքի և  
քրտանց վաստակին պտուղը ուտել , քանզի զիտես  
թէ Աստուածային վճիռը կնքած է , որ հայու զաւակ-  
ներու հացը օտար ազգերն ուտեն ու վայելեն . ըստ

այնմ թէ, զաշխարհ յեր, առջե յեր օրորտ հերիցեն, աւե-  
 բեաւ և հործանեաւ յազգաց օրորաց, որոտ զառարկե'ղէտ և  
 այտ հերիցեն զգորտակն յեր, (Եր. Ա. 7 : Ե. 5) : Լսեցի՞ր  
 հայու զաւակ, հրէից 'ի պատիժ եղած մարգարէս-  
 թիւնը, քու վերայ գործադրուած կը տեսնուի 1300  
 թուականէն Քրիստոսի, մինչեւ ցայօր, որ է 1879 :  
 Ուրեմն ելի՛ր զաւակս տե՛ս ասիոյ տաճկաստանի մէջ,  
 արդե՞օք կրնաս այսպիսի հայու գերդաստաններ գրո-  
 նալ, որ իրենց հարստութիւնը յորդոց յորդիս հինգ  
 վեց դար շարունակ վայելած ըլլան : Ասկէց 'ի վատ,  
 կրնամ մէկ քանի գործարաններ ցոյց տաս, որուն մէջ  
 գոնէ հարիւրաւոր և ոչ հազարաւոր, հայ մանկտի  
 գործաւոր եղած օրական ապրուստնին հոգալով ու-  
 րախ սրտիւ գործատէրը փառաւորէին և զԱստուած  
 օրհնելով գո՛հ ըլլային : Եւ կամ, ագարակներ, առա-  
 գաստաւոր նաւեր, և կամ վաճառատուններ, շոգե-  
 նաւ, և նաւակներ, որոց մէջ հայոց զաւկներ ապ-  
 րուստնին կը հոգան, բնաւ երբէք չես կարող ապա-  
 հովեալ մին ալ ցոյց տալ. զի որովհետեւ չունի, և  
 քանի որ սրտի մտօք վատ գործերէն են շմնար, աս  
 յաջողութիւնն ալ չպիտի ունենայ : Բայց սակայն,  
 երբոր մաքսաւորին պէս իրեն մեղքերը ճանչէ, և Գա-  
 ւիթ մարգարէի նման կէս գիշերին ելլէ, ու արտաս-  
 ւօք խոստովանի մեղքերը, ու անառակ որդոյն պէս  
 սրտի մտօք դարձի գայ, ու ըսէ. Աստուած քաւեա՛  
 զվեղաւորս. (Ղէ. ԺԸ. 15) : Ի մէջ գիշերի յառնէի և  
 խոստովան լինէի, և արտասուօք իմովք զանկողինս իմ  
 թացի. (Սղմ. 9. 7) : Եւ կամ, հայր՝ մեղայ յերկինս և  
 առաջի քո, (Ղէ. ԺԷ. 18) : Ան ատեն Աստուած պի-  
 տի ողորմի Հայկայ սերունդին, և պիտի հանէ ձախոր-  
 դութեան բանտէն, Յովսէօ գեղեցկի պէս. (Ծնդ. ԻԱ.

40) . և փառաւորէ Հայկայ և Արամայ սերունդը : Ա-  
 պա թէ ոչ հայուն վաստակը օտարները ուտելէն զկնի  
 և ինքն ալ փուչ ու տատակի մէջ տառապեալ ու  
 տաքնապեալ, երերուն ու դեգերուն, հայու վայու-  
 թեամբ պիտի մնայ ծառայ ու սպասաւոր օտար ազ-  
 գերուն : Վասն զի ծանեաւ զԱստուած և ոչ իբրև զԱստ-  
 ուած փառաւորեաց, և ոչ կատարեալ մարդկութեամբ  
 եկաց յարդարութեան, թէպէտ, արժար արդարաց ոչ  
 հարցի, բայց մեծագոյն մասամբ, Բշնձէ առն ընդանէ  
 նորս. (Մր. Ժ. 57) :

Ուստի յետին աղքատութեամբ կը տոչորի, փորը  
 անօթի, սիրտը կը մարի, առանց հանդերձի ցուրտէն  
 կը մտի, լոյս չունի, մութը կը նստի, վասն զի աչք ու-  
 նի չտեսնէր, ականջ ունի չլսեր, բերան ունի չխօսիր  
 ձեռք ունի չգործէր, ոտք ունի չքայլեր : Ահա տակաւին  
 այս ողորմելի կացութեան վիճակին մասնուած, վեց-  
 երրորդ պատիժ ալ գիրկը առած անհոգ կը նստի,  
 ապա ուրեմն ասոր դեղ և դարման ի՞նչ է, մտի՛ր ծա-  
 նօթութեան (7) թուանչանն և տե՛ս, բայց մի՛ յու-  
 սահատիր վերոյիշեալ խօսքերէ, վասն զի դարմանը  
 չուտ կ'ողջացունէ և կը հարստացունէ թէ որ դարմա-  
 նը հնազանդութեամբ գործածես, ապա թէ ոչ վեցե-  
 րորդ պատիժն ալ պիտի վշտացունէ քեզի, ուրեմն  
 լաւ մտիկ ըրէ, վեցերորդ պատիժը կարի կսկծա-  
 վի է :



Պատիժ վեցերորդ յոյժ ողորմելիք . . .  
Թղնամիք հայոց նորա ընտանիք :

**ՊԱՏԻՃ ՎԵՅՆԲՈՐԴ**

Սուրբ գրքէն կիմանամք որ հրէից ազգը , թէ յն-  
գիւպտոսի թէ Բաբելոնի և թէ իսկ հրէաստանի մէջ ,  
չատ մը նախատուեցաւ և չարաչար անարգուեցաւ ոչ  
այնքան իրեն եղբայրներէն և զաւակներէն , որքան  
որ կրապաշտ անթլփատ հեթանոսներէն և այլազգ օ-  
տար թշնամիներէն : Իսկ հայու տունը , օտար ազգաց-  
մէ ցաւ և ցասումներ , վիշտ և տառապանքներ կրելէն  
ետքը , իրեն իսկ սիրելի զաւակներէն և եղբայրներէն  
ալ նախատուեցաւ և կը նախատուի , քնասուեցաւ և  
դեռ կը քնասուի և կը նեղուի տեսակ տեսակ զրպար-  
տութիւններով . Տէ՛ հրամէ՛ զաւակս ուշի ուշով մտիկ  
ըրէ , թէ որ հայու տունը շայլաբար խելքին դալած  
ուսպէտ ծախքերը չընէր , և զիրար հալածելու և վատ  
կիրքերնին յազեցնելու հարստութիւննին չիճացնէին :  
Ուր կ'ըլլար որ հարուստ և ազբառք միակամ և միա-  
խորհուրդ Մշոյ սուրբ կարապետի , Աեսարիոյ սուրբ  
կարապետի , Սիս , և Պօլիս սուրբ Փրկչի վանքերուն  
մէջ գիշերօթիք սեսուեմարան հաստատէին , և ծա-  
խուց համար ազահովեալ եկամտից ազբիւրներ բա-  
նային , և Հայ զաւակները մեծ հսկողութեամբ կրթել  
տային , և մեծամեծ ընկերութեամբ գործարաններ և  
վաճառատուներ բանային , որ ուսուեմական երիտա-  
սարդներուն ապրուստի դուռները բաց պատրաստ  
ըլլային , որ ձեմարանէն ելածնուն պէս գործի մէջ  
մտնային : Պօլսոյ մէջ 42 եկեղեցի չինեղնուն , 20 ե-

կեղեցի հերիք սեպելով , անոնց մեծամեծ ծախքի դը-  
րամով շահաբեր անկորուստ կալուածներ առնուեր ,  
և նոյնպէս վանօրէից և եկեղեցեաց աւելորդ ամուլ  
գոյքերը կալուածոց վերածուէր , և գողերուն զօ՛ն չըլ-  
լար , և յետ այնորիկ խնայողութիւնը ձեռք առնելով  
չուայլաբար ծախքեր չըլլուեր , որ հիմա ազգային մեծ  
հաստատուն և անկորուստ շահաբեր հարստութիւն  
մի ունեցած կ'ըլլար , և որով գոնէ մշտնջենական կը-  
ղերաց և քահանայացուած կրթարան մի , և պատա-  
նեկաց ազատական և գործնական արհեստներով խառն  
ձեմարան մի կ'ունենար , յայնժամ թէ որ ցրուեալ  
զաւակները դրացներու ձեմարանէն և տունէն ետ բե-  
րելու կարօղ չըլլար , գոնէ ձեռքին տակ եղած զաւ-  
կներուն առիթ չեր տար երթալու , և Հայկայ Սրամայ  
տունը և եկեղեցին անպատուելու կսկծանողական խօս-  
քերով նղուելու : Ահաւասիկ տե՛ս ծանօթութեան (8)  
թուանչանը , ուր որ պիտի տեսնաք հարիւր հազարի  
չափ հայ զաւակներ այլ և այլ դրացներու դրան մէջ  
կանգնած օտարին կաթը ծծելով , օտար բնութիւն  
ստանալով անարդանաց մանր քարերով և փուշերով  
կը վիրաւորեն և կը խոցոտեն հարազատ ծնողի փափուկ  
սիրտը , և մարմինն : Ահա ամեն տեղ ատ անկարգու-  
թիւնները թագաւորած է , ահա՛ թօզաթ , փոքրիկ ժո-  
ղովուրդ մի ունի 7 եկեղեցի բազմածախ շէնքերով և  
օրական ծախքերով իրարու կից , որ 2 եկեղեցի բա-  
ւակուն էր , ահա՛ Ամասիա , 5 եկեղեցի , որ երկու կը  
բաւէր , ահա՛ Սեբաստիա , 4 եկեղեցի , 2 կը բաւէր ,  
ահա՛ Սնկուրի , 7 եկեղեցի , որ մին կը բաւէր , և ա-  
հա՛ այսպիսի աւելորդ ծախքեր շատ և շատ եղած է ,  
և տակաւին կ'ըլլուի , է որ կալուածներու եկամուտ-  
ներով և է որ՝ հանդանուկութեամբ , լաւ ևս ըսել մու-

բացկանութիւնով, որոց բոլորովին հիմն ալ աւաղոյ վերայ խախուտ և անհաստատ:

Չունենալով հաստատուն շէնք մի, որուն հայ մանկտիկ յենլով, դրացներու շէնքերուն յենելու կարօտութեան չունենային, և ծնողին վերայ անարգանաց խօսքերը չտեղացունէին. և աւետարանական պատուէրին դէմ չմեղանչէին որ կը հրամայէ, պատուել ծրանողն, (Մ. Ժ. 15): Պարտաւճա՛ զհայր քո և զմայր, զի երէպանկեաց լինի: Սիրելի զաւակս զայս լսելովդ չլինի որ յուսահատիս, ատիկայ Աստուծո՛վ դեռ վեցերորդ պատիժն է Հայկայ սերնդոց վերայ, վասն զի ծանեան զԱստուած և զմարդկութիւն, ոչ որպէս իբրու զԱստուած փառաւորեցին, կամ գոհացան, (Հ. 21) և ոչ կատարեալ մարդկութեամբ, արդարութիւն դործեցին և ճշմարտութիւն խօսեցան, վասն որոյ յոբէն Գեղեցի չէ՛ Ինչ առողջութիւն, (Ե. 6): Ուստի պէտք չէ վհատիլ, այլ և յոտին կա՛ց թօթափեա՛ զփոշին եսութեան և կամապաշտութեան և կրից քոց մեւ վաղվաղակի ՚ի ծանօթութեան (9) երրորդ թուանշանը, հոն տեղ ասոր դեղ և դարմանը պատրաստ է, յուսով դործադրելու աշխատիր, որով կարող ըլլաք 7 երրորդ պատիժը ազգայնոց վրայէն վերցնելու:

Սհաւասիկ տես հետեւեալը.

Պատիժ եօթներորդ վատ ատելութեան.  
Որ յինքն ունի գոգի խռովութեան.

ՊՍՏԻՃ Է՛ ԵՐՈՐԴ

Բանն բարկութեան որ եղև յԱստուծոյ առ ազգն հրէից, թէ՛ Սարգիսի ՚ի նոսա զբն խաղութեան և հարկէ

այր զնկեր լար... և հարցէ ծանուին ընդ ծերայն և անարգն ընդ պարտաւճանին, և եղիցէ ճորագործն լէբը զգահանայն, և ծառայն լէբը զտեր. (Ե. Գ. 5):

Մտիկ ըրի՛ր զաւակս, Աստուծոյ պատժական խօսքերը, որ հրէից համար ըսաւ, այո՛: Բայց ի՛նչ օգուտ որ՛ լման Հայկայ և Արամայ սերնդոց վերայ կատարուեցաւ և տակաւին կը կատարուի մինչև ցայսօր: Վասն զի չկայ հայարնակ տեղ մի, որ անմիաբանութեան վատ խռով ոգին մեւտ առած չըլլայ, կ'ուզենէ, սկսիր Պօլսոյ, մինչև ցԲաբելոն, և անտի մինչև ցԵգիպտոս, և, բոլոր հայոց գիւղ և քաղաք ազատ չեն այդ գիւղական չար ատէն, ահա ատիկայ կարգա՛ 1844 թը ուսականէն մինչև ցայսօր որ է 1879 բոլոր հայ լրագրաց թերթերը լաւ մը, և տե՛ս հայ զաւակներու որչա՛փ խռով ատելութեան ոգոյն գերի ըլլանին, և անկէց ետքը եկուր մտի՛ր ծանօթութեան (10) ներորդ թուանշանը, որ հոն տեղ, պիտի տեսնաք յականէ յանուանէ, ատելութեան ոգոյ գերի եղող, և վնասուող թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս հայկական խռմբան ատեն դու ինքնիդ պիտի ըսես, թէ՛ հայր ահա ասկէ աւելի պատիժ չիրնար ազգի մի ըլլալ, երբոր զաւակները զիրար հալածելով փճացեր են, և ճանապարհորդութիւն լեհաստանի գրքի 32 երեսին մէջ գրուածը ճիշդ է, որն որ կ'ըսէ, Չէ՛ փան հայոց չէ հարկ յայլոց ինչորեւ զնշա՛նէ, զի ինքեանք են զօրաւոր թըշնամի ՚ի կորուստ ազգին, բաւական են սուրբ իւրեանց կոտորել զիրեարս:

Բայց դարձեալ զաւակս չըլլայ որ վհատիս և լքանիս, զի Աստուած կարող է բժշկել հայկական տուանը ատ ատէն, զի անհնարն է ՚ի մարդեան, հնարատոր էն Աստուծոյ, (Մ. Ժ. 26):

Իսկ դուն ևս փութա մուտ ծանօթութեան (11) թուանշանը և անկէց ա՛ռ շուտով դեղ և դարմանը և գործադրէ, զի որով դուցէ ութն երորդ պատիժն ալ բժշկելու կարողանաք . չէնէ Հայկայ տունը 'ի կորուստ է, քանզի, Յանեան զԱսորուսած, և զմարդկութիւն, ո՛չ զԱսորուսած փառաբեցին, և ո՛չ մարդկութեամբ արդարութիւն գործեցին, ուստի՛ յոտից մինչև ցզլուխ չիք 'ի նմա առողջութիւն :

Զի ահաւասիկ .

Պատիժ ուրբորդ Հայոց վանօրայք .  
 Յորոսմ որջացեայք, ծոյլ մոյաբեղայք .

ՊԱՏԻԺ ՈՒԹԵՐՈՐԴ

Ահա ատկէ աւելի պատիժ չի կրնար ըլլար ազգի մի երբոր իրեն արդար կամ մեղաւոր վաստկած դրամով ուրիշներուն մեղք գործելու պատճառ կ'ըլլայ, թէ և ազգը բարի նպատակով կու տայ : Բայց ինչ օգուտ, իշնօճէ՛ արն ընդանէ՛ նորա, (Մ. Ժ. 57) : Ահա կը տեսնանք 170 մեծ և փոքր վանօրայք տաճկաստան հաստատանի մէջ կան, ասոնց ո՞ր մէկը Մեծն Ներսէսի և այլ սրբազան հարց նպատակին ծառայէր կամ կը ծառայէ :

Զի որովհետև վանօրէից հիմը այս նպատակին դըրուէր, Ա. ազգայնոց անկեալ և անտէր ծերոց պարտապարան, Բ. որք երկսեռ մանկանց նիւթական և աղատական արհեստից վարժարան և կրթարան, Գ. կուսակրօն կղերաց և քահանայացուաց, կրթարան և սուսանարան, Դ. կուսակրօն վարդապետաց և այրիացեալ քահանայից և միաբանաց տեղիք աղօթից և սըր-

բութեանց, տուն և տաճար շինեալ Աստուծոյ : Ահա՛ ասոր համար վանքերը օղը մաքուր և առողջ ջուրը յստակ և բարեհամ լեռներու սրտի և գագաթան վերան, և հովիտներու եղերքը շինուած են, և սրբոց նշխարներն ալ հոն ամփոփուած են . 'ի բժշկութիւն յուսով այցելու ուխտաւորաց, քանզի Աստուածային հոգւոյն շնորհաց աղբիւրներու աղբ հոն պիտի ըլլայ, որ անկէց պիտի բղխի Աստուածային և մարդկային գիտութեանց կրթութեան աղբիւրները և շնորհքը : Ինչպէս որ եկեղեցին կը խօսի . նախահարց մանկանց շարականի վերջին տան մէջ, Ասոր 'ի Գլախ Լուսնոյ Կոնստանտնուպօլիս արարածնս անձրևօտ, Բարեբանեա զաղբիւրն կենաց, զարբանացանն շարաւեաց, (ատե, Երկ. Եղեւ . 418.) :

Տէ՛ հրամէ տե՛ս վանքերը, որո՞ւ մէջ կրնաս գտնալ Մեծն Ներսէս սրբազան հայրապետի և սրբոց հարց նպատակին գործադրութիւնը, որոնք որ մեծ հոշակաւոր վանքեր կան, անոնց մէկ քանին, խոսովութեանց գանակոծութեանց ասպարէզ եղած է, և մէկ քանին ուրախութեան և մարմնաւոր հեշտութեան և զուարճութեանց խնջոյք դարձած է : Եւ մէկ քանին ալ վաճառանոց տուր և առութեան աշխարհային իրաց յատկացած է. և միւս մնացած մանր վանքերը, որուն մէջ մէկ կամ երկու վարդապետ կը գտնուի, անոնք ալ ճանապարհորդաց յօթել և իջևան, և գինարան : Եւ միջի եղերց հեշտութեան ննջարանի փոխուած է, ահա հըրամէ մուտ ծանօթութեան (12) թուանշանը, և տե՛ս յականէ յանուանէ, թէ վանից և թէ վանահարց ջրնորհքները : Այսինքն, ազգայնոց տուած յանուն Աստուծոյ, վանից համար գործածուելիք ողորմութիւնը,

ո՞ւր և ի՞նչ մեղքերու համար կը գործածուի, և ի՞նչ տեսակ անօրէնութիւններ կ'ըլլան: Երբոր վանքերը այս չափ յոռութեան մէջ են, ըսել է որ՝ հոն տեղ Աստուծոյ շնորհք, և ազգայնոց հոգւոյ և մարմնոյ օգուտ չկայ: ուրեմն՝ ոչինչ տեղը կու տանք նուէրները և աւելի ատ ըսածդ մեղքերուն մերձաւոր պատճառը ազգայնոց սոււած տուրքերն են, պտղի, խոսամուկնք, յիշատակ, քառասնից, ևն, ևն: —

Այո՛, վասն զի չկայ մէջը 'ի մեղաց դադարեալ մաքուր ծերունիք, անմեղ մանկտիք, և յաշխարհէն մեռեալ և առ Քրիստոս կենդանացեալ կուսակրօն և այրիացեալ քահանայք, զի որոց ազօթիւք, Աստուածային շնորհքը տարածուի պտղատու վիճակայնոց վերայ 'ի պահպանութիւն յամենայն չարէ, քանզի Քրիստոս կ'ըսէ, որ եղևն երկու և երեք յոնոն ի՛մ ծաղիկեալ և ես տնք 'ի մէջն նոցա եմ:

Ըստ որում՝ Աստուած նիւթական շէնքերու մէջ չի բնակիր, ինչպէս որ կ'ըսէ, Երէկն՝ ախարհէն և երէկե պանոսանքան որից իմաց, զորպիսի տուն շինեցէք ինձ ասէ Տէր Ամենակալ: Հապա ո՞ւր պիտի բնակի, ահաւասիկ կ'ըսէ, Ես յո՞ հանգիստ եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և որք դողան 'ի բանից խոց: (Եպ. ԿԶ. 1):

Ահա հեղ խոնարհ, և երկիւղած, սուրբ ընտիր միութեան մէջ, կը բնակի Աստուած, ինչպէս որ 'ի սուրբ վերնատունը, ուր Հոգին սուրբ էջ յառաքեալան զի միաբան և միասո՛հ էին: Եւ ահա այսպէս սուրբ վանից միաբանութեան մէջ կը բնակի Աստուած, որոց միաբանութեան արդարութենէ կը բուսնի կենաց ծառը, այսինքն՝ Աստուածային սուրբ բանիւ մարդոց հոգեւոր մխիթարութիւն և կեանք տուող շնորհալի վարուք և գործով ծաղկեալ քարոզիչ վարդապետներ և աստուա-

ծարաններ, և ոչ թէ ծաղրածու խենեշ կապիկներ: Ինչպէս որ կ'ըսէ, 'ի պողոտայ արքարու-նեան քոսանի ծառ-կենաց, (Ա. Ժ. Ժ. 50): Որ այսպիսի ընտիր սրբոց խըրատներու և գործքերուն ետեւը ժողովուրդը երթաթաղով, պիտի ըսեն, զի ես ինչոց ինչ ընխացուտ, (Երէ. Ա. 51): Եւ ահա անատեն Աստուած պիտի փառաւորի սրբոց խորհուրդին մէջ, Աստուած-ճոխարեալ է 'ի երբհարբս որոց, (Ազ. ) , և մանաւանդ ժողովուրդը պիտի փառք տայ Աստուծոյ, երբոր տեսնէ վանօրէից միաբանութեան գործքերը, ինչպէս որ կ'ըսէ, որպէս զի պեղեան գործն յեր բարեա և փառաւորեացն զհայրն յեր որ յերկնս է. (Մ. Ե. 16): Արդ առ սակաւն տարին 170 վանից մէկ միլիօն դահեկան ազգայնոց քսակէն կ'ելլէ որ Աստուծոյ շնորհաց տունը շէն և պայծառ մնալով, հոն տեղ անկեալ և 'ի մեղաց դադարեալ ծերեր, և անմեղ մանկուկներ, և մանաւանդ յաշխարհէն ճըլմարտապէս հրաժարեալ, և առ Քրիստոս մերձեցեալ ընտիր սուրբ անձինք միաբանութեամբ ժողովեալ մաքուր մտօք գիշերները հզկում, առաւօտ և երեկոյ ջերմեանդութեամբ ազօթ են նուիրատու ժողովրդեան մարմնոյ առողջութեան, գործոց յաջողութեան և մեղաց քառութեան և ոգոց վրկութեան, և կրթեն երեսմաները հոգեւոր և մարմնաւոր Աստուածահաճոյ վարուք: Եւ ոչ թէ զուարճալի խնջոյքներ կազմել ուտել և ըմպել և արբենալ, և կամ անմիաբանութեամբ կուուոյ և գանակոծութիւն աստարեզ քանալ, ինչպէս որ պիտի տեսաս վերոյիշեալ 12 թուանչան ծանօթութեան մէջ:

Աւ ասկէց աւելի ի՞նչ պատիժ կրնայ ըլլար ազգի մի որ իրեն քրտանց վաստակով ընդդէմ՝ Աստուծոյ մեղքեր և անօրէնութիւններ գործելու տեղիք կու տայ,

և պատճառ կ'ըլլայ : Ահա հիմա տեսար վանքերդ որ կը նմանին Քրիստոսի անիծած տերեւալի պտուղ չունեցող թզենի չորացած ծառին , որ արմատէն ցամաքեր և չորցեր :

Արդ զասոնք տեսնելով և լսելովդ չըլլայ որ հաւատքէդ թուլանաս , կամ վհատիս և յուսահատիս , զի ասոր դեղ և դարմանը շատ հեշտ է , թէ որ մշտնապէս 'ի ծանօթութիւն (15) թուանչանը , և առնուս գործադրէս , ապա թէ ոչ իններորդ ցաւալի պատժէն սպառապանութիւն չունիս , և պիտի տանջուիս չարաչար վասն զի՝ ծանեան զԱստուծոյ և ոչ իբրոս զԱստուծոյ փառաբերեցին կամ գոհացան , վասն որոյ վիշտը ներդրութեան պաշարեցին զՀայաստան : Ահաւատիկ .

Պատիժ իններորդ յոռի վատ հովուաց .  
Քամեմ ուժգնակի գստինս ոչխարաց .

ՊԱՏԻԺ ԻՆՆԵՐՈՐԴ

Հիմա յայտնի կը տեսնուի այժմեայ ոմանք մեծապէս մասամբ վանքերը Քրիստոսի տեսած տերեւալի պտուղ թզենի ծառին պէս չունին քաղցր պտուղ . և արդ այժմեայ ժողովուրդեան իրրև հովիւ , Առջնորդները ուսկից բուսեր են , որոց մեծադոյն մասը ոչ մի պտուղ բուսած պիտի ըլլան , եթէ ոչ , վերը յիշուած թզենի ծառին չորացած տերեւներէն , որն որ խշրուելով կը գլտորին , աշխարհի սիրոյ հողմունքներու առջեւ , ուստի իրենք զիրենք կառավարելու կարողութիւն չունենալուն համար ոչխարին մէջ գայլը մտէր արձակ համարձակ ուղածը կ'ուտէ և կը տանի : Վասն որոյ չը պիտի կարողանան Աստուծոյ ըսելու . Ահա ես և մանկանս

Ի՞՞ . զոր երեսը ցին , ու կորուսի զին . (Օհ . Ժ . 11) : Ասլ և ամենը միանգամ քայլին յանձնեցի պիտոր ըսէ : Եւ այլ ևս կարող չեն ըսելու , ես ե՞մ հոգիս քաջ , և զանձն իմ դնեմ 'ի վերա ոչխարաց :

Վասն զի , ինչպէս թեմաք ծանօթ զանչին խաշանց րոց և հաստատեալ զսիրտ քո 'ի վերայ երամակաց քոց , վասն զի ոչ յաւիտենական է ոյժ առն , և զգրութիւն և իշխանութիւն ո՛չ է տուեալ նմա յազգաց յազգս , (Մ . Է . Ի . 28) : Եւ կամ Յիսուսի խօսքը , արածեալ զառ խարս Ի՞՞ . (Յհ . ԻՍ . 17) : Եւ կամ Պետրոս Առաքելոյ խօսքը . թէ՛ Սրածեցե՛տ որ 'ի յեղ հօրդ է Աստուծոյ . . . մի՛ զօշարաղուծեամբ . . . մի՛ իրրեւ տիրելով վիճաւ կայ . . . և , (Բ . Պեթ . Ե . 2) : — Չեն կարգացած , և կամ կը կարդան բաներնուն չի դալուն համար շուտ մը կը գոցեն , ձեռքերնին կ'առնուն լրագրաց թերթը կամ թրափառական հրէայն և , և անկէց ետքը , Քրիստոսի հրամանին հակառակ , ուտել խմել և արբեմալ , ո՛չ աղօթք և ո՛չ քարոզ , այլ ևս ստակ հաւաքել , անսքարկեղտ հանդերձ և փօթի հագնիլ , ոսկի ժամացոյց անդամանդեայ մատանի , և , ձեռք ձգելու ետեւ կը ըստին և հեթանոսաց ճամբուն մէջ կը վազեն և սամարացւոց քաղաքին աղբանոցին վրայ կը լողան . որն որ Քրիստոս արգիլած է , 'ի ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայք , և 'ի քաղաքս սամարացւոց մի՛ մտանիցէք , (Մ . Ժ . 5) : Ասոնց գործքերը տե՛ս յականէ յանուանէ ծանօթութեան (14) թուանչանն և ճանչէ զիրենք : Բայց ազգը իրեն աչքը գոցեր և չուզեր տեսնալ ատ վատ գործերը և ոչ ալ դարման տանելու և ողջացնելու կը հողայ և կ'աշխատի , ըսյց դու զաւակս մտիր ծանօթութեան (15) թուանչանը , ա՛ռ անկէց դարմանը չուտով գործածէ , որ չուտով ողջանայ , զի որովհե-



տեւ մարդարէք, լեշի մաշիւս և մարմնով այնքանօք չըջեցան և առարեալք, մերի և ինչ, քաղց և ծարաւ . . . 'ի վիշտս և 'ի նեղութիւնս, (Բ. Կ. Ժ. 24) : Եւ եսխա կոպոսք 'ի մարտիրոսութիւն իրաւանց և արդարութեան փութացան : Եւ ոչ թէ նժոյզ ձիով, և բայթօն կառքով, և ոչ ծիրանի գոյն զգոյն զգեստով, ճայնաւոր փօթիով, գօլալի շասկով, և ծռած գլխարկով, ակնոցով և փաստոնով, ըւանդային թաղկինակով, և ք : Սպա ուրեմն փութա շուտ առ զբարմանն և առողջացուր, ապա թէ ո՞չ, տասներորդ պատիժը աւելի կը ճնշէ և կը ճմլէ ազգը 'ի պատիժ ինքեան, ուրէմն տէ լաւ մի մտիկ ըրէ : —

Տասներորդ պատիժ կարի ցաւալի  
Քահանայք ոմանք հայկազանց սեռի :

**ՊԱՏԻԺ ՏԱՍՆԵՐՈՐԴ**

Մտիր մի անգամ քահանայից մէջ, որոնք որ մեղացեալ մարդոց համար առ Աստուած հաշտարար և միջնորդ պիտոր ըլլան . տե՛ս անոնց ոմանց անկարգ խռովութիւնները և զիրար վշտացնելով խռով, և ոխապահութեամբ քէն 'ի սրտին կենարար մարմնոյ և արեան անարժանութեամբ մերձեանալ, պատարագ ընենին, որ Քրիստոս Տէրն մեր կը արգիլէ ըսելով . Թող զպարարաքն քս առաջի սեղանոյն, և երբ նախ հաշտեաց ընր եղբօր քսա՞մ, և ապա եկեալ մարտնչէր զպարարաքն քս . (Մ. Ե. 25) :

Ինչու որ անարժանութեամբ ո՛չ թէ պատարագ ընելը մինակ պատիժ կը բերէ ժողովրդեան վերայ, այլ և լոկ աշխարհական մի անգամ անարժան հաղոր-

դութիւն առնու կը պատժուի . ո՞ւր կը մնայ պատարագ ընող անարժան քահանայն, որոյ երեսէն իրեն ժողովուրդը կը պատժուի տեսակ տեսակ ձախորդութեամբ, ցաւօք և հիւանդութեամբ, և մինչև անգամ տարածամ մահուամբ . ինչպէս որ Առաքեալը կը զգուշացնէ զմեզ ըսելով, չըլլայ որ պատժուիմք . ահաւասիկ, տես Ս. Կորնթացւոց գլուխ Ժ. Կ. համար 27 : Ս. յսահեոս որ սարկէ զհացո, և մ' ըմպէ զբաժակո Տեառն անարժանութեամբ, պարտական եղցէ մարմնոյ և առեան Տեառն : Փորկեացէ մարդ զանչն իւր, և ապա 'ի հացէ անոյն կերցցէ, և 'ի բաժակէն արբցցէ : Չի սր ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ խտրէ զմարմինն Տեառն : Վասն պարկի իսկ են 'ի յեղ բարոս հեանորք և սիրտեորք և շար ևս այնք են, որք և ննջեցեալք իսկ իցեն :

Երբոր ոմանք աշխարհասէր քահանայք առ խօսքերուն մտիկ ընելով իբրև արհեստ դրամ վաստակելոյ համար ժամարար կ'ըլլայ : Եւ ժողովրդեան և մանաւանդ իւր վերայ ինչ տեսակ ծանր պատիժներ չի բերէր . և Աստուած ալ յատուկ անարժան քահանային խնաց կու տայ անարժան ըլլալը ու կ'ըսէ . Չէ և յեղ դրոսնք քահեացին, և մի մերկեայք 'ի սեղան ի՞մ վարար պար . զի ոչ են կամք իմ 'ի ձեզ . . . և զպատարագս ոչ ընկալայց 'ի ձեռաց ձերոց : (Մարտ. Ա. 1) : Եւ առաքեցից 'ի վերայ ձեր զանէծս, և անիծից զօրհնութիւնս ձեր և նզովեցից . և ցրուեցից զօրհնութիւնս ձեր . (Մարտ. Բ. 2) :

Մտիկ ըրի՞ր զաւակս Աստուծոյ պատժական խօսքերը, որ մեզի պէս անարժան քահանայից համար ըսած է . ինչու որ ուխտերնին կը դժբեն, խոստումնին չեն կատարեր, բոլորն ալ մտացնուն հանած .

ըստ աշխարհի կը հոգան, ընդդէմ կամացն Յիսուսի որ կ'ըսէ. Մէ' հոգայտ . . . զայն տօնայն հեթանոսութենէն : (Մո. Զ. 26.) : Ուստի անարժան խղճային ու ողորմելին կը մերժուի Աստուծոյ չարաչար . ինչպէս որ կ'ըսէ . Զի որոս զիկոսութեան Ռեքեցեք, Ռեքեցեցն է եւ զիեղ, զի մի' ևս Գահանայացիս ինչ : (Ու. Դ. 6.)

Ինչո՞ւ համար Աստուած կը արգիլէ քահանայն քահանայութիւն ընելէն, ահա ուրիշ պատճառ մը չը կայ . տե՛ս ի՞նչ կ'ըսէ . Եւ մոտացար զբրինս Գ, այսինքն քահանայութեանը օրէնքը մոռցար, ուստի եւս ալ պիտի մոռնամ քու զաւկները, այսինքն ժողովուրդներդ որ քու որդիքն են . Եւ մոտացայ եւ եւս շքեքեքս Գ : (Ու. Դ. 6.) :

Տէ' հիմայ լաւ մի մտածէ, զաւակս, երբ որ Աստուած քահանայն կը մոռնայ և անոր ժողովուրդն ալ երեսէն կը ձգէ . ալ այն քահանայի ու ժողովուրդի կացութիւնը ի՞նչ առաջնան ողորմելի ըլլալը յայտնի պիտի երևի . ինչու որ Աստուծոյ բարկութիւնը վերանին է : (Եգ. Ե. 6.)

Զի որովհետև քահանայն իրեն ձեռնադրուած աւուր առած շնորհքը պահելէն անհոգ կ'ըլլայ, որ Առաքեալը սաստիկ կը պտտուիրէ . Մէ' անգոյն առեք զշնորհացն՝ որք որոտն չեղ ՚ի յեռնադրութենէ երեցութեան . (Ա. Տէ. Գ. 14.) . և որով կարող պիտի ըլլայ Աստուծոյ պատուէրները պահելու, և ժողովուրդը, ծուխերը քարոզելու, խրատելու, և երախտները կրթելու հոգևոր և մարմնաւոր բարեկարգութեան մէջ զնելու : Ապա թէ ոչ, երբոր Յօնան մարգարէին պէս, իրեն Աստուծոյ տուած պաշտօնէն փախչի, յոյլ, ծոյլ ըլլայ, և աշխարհային իրեն մասնաւոր անձին և ընտանեաց հոգերով լցուի, ահա ան

ատեն, ինչ որ Յօնան մարգարէի և զինքը նաւին մէջ ընդունող նաւավարներու գլուխն եկաւ, պատիժ պատուհաս, որն որ մագ մնացած էր բոլորն ալ ծովին յատակը ըյնելով՝ ՚ի կորուստ պիտի երթային, թէ որ Յօնան մարգարէն ծովը չձգէին . (Թօնան. Ա. 15.) : Դոյնպէս պիտի գայ անարժանի գլուխը :

Տէ' մտածէ, զաւակս . Յօնան մարգարէն մինակ բարոյութենէ կը փախչէր, ուրիշ որ և իցէ մեղք կամ յանցանք մի չունէր, որ այդքան պատիժ և պատուհաս կրեց ինքը, և զինքը ընդունողները նաւին մէջ . հասցայ ինձ նման աշխարհասէր և Աստուծոյ պաշտօնը մէկդի ձգող և աշխարհի սեղանը պաշտող քահանայն, վարդապետը և եպիսկոպոսը որչա՞փ և որքան աւելի ծանր պատիժ և պատուհաս պիտի կրեն, և մեզի ընդունող ժողովուրդն ալ մեր հետ ՚ի միասին, եթէ զմեզ ալ Յօնանին պէս ծովը չը ձգեն, այսինքն զաղարեցունեն աստուածային պաշտօնէն :

Քանզի աւելի կը պաշտեն աշխարհի կորստական սեղանը քան զԱստուծոյ պաշտօնը, մինչդեռ Քրիստոս կ'ըսէ . Երթայք, գործեցէք մի' զկրօնական կերպարն, այլ զկերակուրն՝ որ մնայ ՚ի կեանս յաւիտենակոտնս . (Յօն. Զ. 27.) : Եւ Առաքեալը կ'ըսեն . Ուէ հաճոյ մեղ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս . (Գործ. Զ. 2.) : Այլ և Եթիօնի Գահանայէն զգուշացին գիտութեան և օրէնս խնդրեցեն ՚ի բերանոյ նորա, զի հրեշտակ Տեառն ամենակալի է : (Մաղտ. Բ. 7.) :

Քահանայն պէտք է որ իրեն յանձնուած ժողովուրդը լաւ մի քննէ և ձանչէ, և անոր դարման

տանէ . ինչպէս որ Սողոմոն կ'ըսէ . Խելահարսութեամբ  
 ծանօթի դանձինս խաշանց քոց . (Աւ. Ի. 21) : Նոյն-  
 պէս Առաքեալը կ'ըսէ , արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է  
 մի իբրև ակամայ . . . մի զօշաքաղութեամբ . (2 Պետ.  
 Ե. 1) : Ձի դուք էք աղ , և լոյս աշխարհի . (Մ. Ե.  
 14) : Քանզի պաշտօն է աշակերտել , մկրտել և ու-  
 սուցանել , գնացէ՛ք այսուհետև ոչակերպեցէ՛ք զամենայն  
 հեթանոսս և մկրտեցէ՛ք զնոսա յանուն հօր և որդւոյ  
 և հոգւոյն սրբոյ , և ուսուցէ՛ք նոցա պահել զամե-  
 նայն զոր ինչ պատուիրեցի ձեզ . (Մ. ԻԸ. 15) : Անոնք  
 որ չեն ուսցներ ու չեն քարոզէր և մանաւանդ խը-  
 ուով իբրև արհեստ առանց դիտաւորութեան անար-  
 ժանութեան պատարագ կ'ընէն , պիտի պատժուին չա-  
 րաչար և ժողովուրդն ալ իրենց հետ 'ի միասին , Ահ Քձ է  
 անկանելի 'ի յեռն Աստուծոյ կենդանոյ կ'ըսէ առաքեալն (Եբբ.  
 Ժ. 12.) հիմա մենք բոլոր կղերքս Աստուծոյ պաշտօնին  
 մէջ կամաւ և ուխտիւք մտածենք , եթէ հաւատարիմ  
 պաշտօնը կատարենք սրտի մտօք երկրի բարութիւնը  
 պիտի վայելենք , ապա թէ ոչ սուրբ պիտի ուտէ զմեզ  
 ինչպէս որ կ'ըսէ , եթէ լուսնի՛ք զբարութեան երեւելիքն  
 ապա թէ ոչ սուր կերիցէ զձեզ . (Եր. Ա. 20) :

Քրիստոս Տէրն մեր , իրեն միակ քարօզը լսող ժո-  
 ղովուրդը յանապատին մէջ անօթի չթողուց , հինգ  
 նկանակօք հինգ հազար մարդ կերակրեց , մենք որ  
 իրեն պաշտօնեայն եմք , ինչ կարելի է որ զմեզ անօ-  
 թի թողուլ , եթէ մենք խարդախ ու անհաւատարիմ  
 անարժան չլլամք , ահա տես մեր օրով խարդախ ընդ  
 դէմ կամաց տեսան պաշտօնէից անունները և գործ-  
 քերը ծանօթութեան (16) թուանշանը , որք կամաւ  
 'ի կորուստ դնացին , դեռ ևս դնալու վրայ են , վասն  
 զի աստուծոյ սիրեցին զբարս մարդկան քան զբարս Աստուծոյ .

(06. ԺԲ. 45) :

Վասն որոյ ծանր ձախորդութեան ներքեւ թէ  
 իրենք և թէ զիրենք ընդունող ժողովուրդը կը ճըն-  
 շուին և կը տառապին . վասն զի ծանեան զԱստուած  
 և ոչ իբրու զԱստուած պաշտեցին . (Հմ. Ա. 21) :  
 կամ գոհացան , ուստի՛ յոտից մինչեւ ցգլուխ չիք 'ի  
 նմա առողջութիւն , ինչպէս քահանայն նոյնպէս և  
 ժողովուրդն , կերէցեն և թի՛ յաբեոյն և թի՛ յաշեոյն ,  
 (Ուլեայ Դ. 9) : Կ'ըսէ : Ալ ասկէ աւելի ազգին պատիժ  
 չկրնար ըլլալ , երբոր իրեն ու Աստուծոյ մէջ բարե-  
 խօս , հաշտարար քահանայն , վարդապետը եպիսկո-  
 պոսը աշխարհասէր և օրինազանց և Աստուծոյ կա-  
 մաց հակառակ գործեն :

Աշխարհէն հրաժարուած եմք կ'ըսեն ու աշխարհը  
 երկու ձեռքով գրկած են . ու եղած են ազգին խնա-  
 ժէ՛տ ան ընդառէ՛տ նորս . (Մ. Ժ. 36) : Բայց դարձեալ  
 լաւ և լաւագոյն ալ կը գտուին տես'ս ծանօթութեան  
 (17) թուանշանը , զի արժապտ արդարոյ ոչ հարցի . (Աւ. Ժ.  
 Ժ. 5) . Արդ այս անբժշկելի ցաւը բժշկելու և ժողո-  
 վուրդը Աստուծոյ բարկութենէն ազատելու և ան-  
 պիտան կղերք պիտանացու ընելու դեղ և դարմանը  
 տես'ս ծանօթութեան (18) թուանշանը , շուտով և  
 գործադրէ , որ մետասաներորդ ցաւն ալ բժշկելու  
 կարող ըլլաք զաւակս : —

Արեւմն մինչ օր կայ գործենք , գայ դիչեր յո-  
 բոււմ չկաթեմք գործել ըստ խրատու տեսան մերոյ :  
 (06. Թ. 4.) : Ամեն բան միութեամբ և աշխատութեամբ  
 կը լինի , արտաքոյ միութեան և աշխատութեան չիք  
 փրկութիւն :

Արեւմն , հեռանամք օրինազանցութենէ , միանամք  
 սիրով և աշխատիմք յուսով , որ ունիցի ականջս լսելոյ

լուիցէ , սպաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ , ուրեմն ձեռք զարնեմք քննելու 11 երորդ պատիժը , և տեսնամք ի՞նչ է , և ի՞նչ բանով կրնամք բժշկել , և դարման տանիլ :

Ուրեմն լուարուք :

Ուխտադրուծք իբրեւ զքար անկեալ յարմից ,  
Թափառակաւ շրջին դրուես անարժանից :

ՊԱՏԻԺ ՄԵՏԱՍԱՍՆԵՐՈՐԴ

Արդարեւ ինչամէկ առն ընդանէկ նորս . (Մտ. Ե. 56):  
Ո՛հ , քրիստոնէական սուրբ կրօնքի սկիզբէն մինչև ցայսօր արդեօք որքա՞ն ուխտաւորք Աստուծոյ , շահամուրթեան ակտէն նեղուած ստիպուեր են ուխտերնին դրժելով անպիտան քարի պէս սուրբ ուխտի բարձր շէնքէն գլտորուելով աշխարհի վատ փողոցներուն մէջ ըյնիլ և թաւալիլ , արդեօք : Անցեալը չը յիշենք , ահա մեր օրովը անսածնիս հաշուենք , սկրսեալ 1858 էն մինչև ցայսօր որ է 1880 յամի Տեառն , է՛ որ վանքէն , և է՛ որ վիճակէն և ծուխէն ինքն զինքը զրկելով , Աստուծոյ պաշտօնը և Աստուծոյ հետ ըրած ուխտ ու պայմանը մէկ դի ձգելով իբրև Երուսաղէմէն յԵրիբով իջածի պէս , կ'ըյնի աւազակաց , այսինք մարմնոյ կամաց ձեռքն գերի : Ուստի կը սկսի հոգւոյն հակառակ գործել , դանազան մեղաց վէրքերով հողին լցնել : Ինչ որ շիվայելէր քահանայութեան և վարդապետութեան և եպիսկոպոսութեան բարձր աստիճանին զայն ընել՝ այսինքն՝ ասոր և անոր տաւները յաճախել , ուտել խմել և արբենալ , և յետ այնորիկ , վիճակ և մասնաւոր իրեն համար

չան եւ օգուտ փնտուել . ուստի՛ կ'խոնարհի արդար եւ մեղաւոր ոմանց մարդոց ոտքերուն երկիրպագութիւն ընել . եւ աշխարհի անցաւոր փառ՝ք եւ պատիւ եւ պաշտօն խնդրել , սւր որ Քրիստոս մերժելով ըսաւ . շէ գրեալ է դեռան ասորո՞ք , քո՞ս երկիրպագեալ եւ զնա մայն պաշտուցես . . . Ես զգաւս ՚ի մարդանէ ո՛չ աւուսմ . Մտ. Դ. 9 : Օհ . Ե. 44 : Ահա՛ քեզի Քրիստոսի աշակերտ մը եւ պաշտօնեայ մի , որն որ Քրիստոսի կամաց հակառակ գործելով , ինքը զինքը Քրիստոսի ճշմարիտ պաշտօնեայ ձեւացնելով , լոկ կերպարանքով մի խաժամուժ տգէտներէն պատիւ կառնու , կը լինի վանահայր , առաջնորդ , եպիսկոպոս , մինչև անգամ պատրիարք , եւ առ շահին իւրոյ , դեր չմնար որ չի խաղար ժողովրդեան գլխուն . բերելով ազգայնոց ներկային եւ ապագային մեծամեծ փլասներ . ահա տես յճան . 19 թուանշանն կատարեալ , ահա այսպիսեաց համար ցաւելով կըսէ Ս. Գիրքը . « և , ինչեալ զաստուծոյ ճանկութեան եւ ճառագեալ զսիրտն ասորո՞քն . Աւգ. Բ. 17 . Այլ չսիրտի կրնան ըսել . Տէր , մէկ ինչով զամենայն ինչ եւ եկա՛ զինչ քո . Մտ. ԺԲ. 27 : Ինչու որ անկիւղ կարգին մէջ մտան , եւ անոնց հեղինակին ծառայել սկսան . եւ յայտնի թշնամի եղած են Աստուծոյ վասն զի աշխարհը սիրեցին , որ առաքեալը պարզ կը քարօղէ . Սեր աշխարհին այսորիկ ինչեալութեան է առ Ասորո՞ք . ՅԼԲ. Դ. 4 : Արդ՝ Աստուծոյ հետ թշնամի եղող մարդը ալ ինչպէս կրնայ Աստուծոյ առջև համարձակ կանգնել եւ ժողովրդեան համար պատարագ ընել . եթէ ոչ՝ անոր աղօթքը մեղքի դառնալով ժողովրդեան վրայ պատիժ բերելու պատճառ ըլլալ . Աղօթե՛ նորս ՚ի միջ որդիքն կըսէ մարգարէն . Սը՛. ՃԸ. 8 . Քրիստոս կը հարցունէ աշակերտաց թէ . երբոր քարօղելու գացիք բանի մի կա-

բօս եղա՞ք . ոչ ըսին . ՂԿ . ԻԲ . 33 . Հապա սա մարդը որ Քրիստոսի պաշտօնեայ եմ կըսէ , ու մարդոց ոտքը երթալով պաշտօն եւ պատիւ կը խնդրէ , ըսել է որ Քրիստոս ստ մարդը չի ճանչէր . իսկ եթէ ճանչէր , հարկաւ պիտի պատուէր , եւ ինքը բանի մի պակասութիւն չտեսնար . քանի որ Քրիստոս իրեն քարոզութիւնը յնապատին մէջ մտիկ ընօղները անօթի չթողուց , ու կերակրեց . տես Մ . Զ . 51 . Այ ինչպէս կարելի է որ իրեն պաշտօնեայն անօթի թողուլ . քաւ լիցի . ուրեմն ասոնք որ ուտեալի եւ փառաց ետեւ կըրջին , չեն Քրիստոսի , այլ եւ քող եւ սաղաէ . տես Օհ . Ժ . 8 . որ այսպիսիներու Քրիստոս Տէրը մինչեւ անգամ հացի նշխար կտորները արժան չի տեսներ ուտելու , եւ 12 զամբիւղներուն մէջ կը պահէ : Ահա՛ ասիկէց աւելի պատիժ չի կրնար ըլլալ ազգի մի , որ իրեն հովիւները ուխտադրուծ աշխարհասէր , զիմակաւոր , լոկ կերպարանքով ոմանք կղերներէն կըլլան , եւ որոց պատճառաւ Աստուծոյ բարկութեան պատիժը զիրենք ընդունօղ ժողովրդեան վրան ալ կը լիափի . ինչպէս որ Յօնան մարգարի՛ր փախտեան պատճառաւ մտած նաւը եւ նաւապիտները պատժուեցան , մինչեւ որ Յօնան մէջկրնուն չճանեցին , պատժէն չազատեցան եւ չփրկուեցան խոովալ ծովու ամենի ալիքներէն :

Ուրեմն սոյն ուխտագրուծ , փառասէր , եւ Քրիստոսի կամաց հակառակ պաշտօնեայները , մինչեւ վերստին իրենց ուխտը կատարելու , եւ առաջին գործերնին զրգջալով գործելու չդատնան՝ կորուստ են , իրենք եւ զիրենք ընդունօղ ժողովուրդն ալ . Արդ յե՛ւս ուսոյի անկար եւ սպառնալիս , եւ զառաջին քորժն քո քորժեա . Յայտ . Ե . 5 . Ուրեմն տես ստոր դեղ եւ դարմանը . Եան . 20 թուա-

նչանը , եւ աճապարէ 12երրորդ պատիժն ալ Հայոց տան վրայէն վերցնելու աշխատիլ : Ահաւասիկ .

ԵՌԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ ՊԱՏԻԺ ԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՍԾԱՆՑ ԿՐԹՈՒԹԵԱՆՑ ԶՐԿԵԱԼ ՄԱՆԿՏԻՆ

ՊԱՏԻԺ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ

Տես դաւակա , ի՞նչ բարի սովորութիւն , եւ բարի կարգադրութիւն հաստատուած է հողելից սրբազան հայրապետաց մերոց Հայոց եկեղեցւոյ մէջ . զի որով Հայոց սերունդը միանգամ կըթուած ժողովուրդ մի կը ներկայացունէ . զի որովհետեւ այնպէս սահմանուած է , որ ամէն մի անձը , պիտի ունենայ իրեն համար , մի քահանայ եւ մի կնքահայր : Քահանայի պաշտօնն է , նախ՝ աշակերտիկ զերախայն ՚ի կրօնս եւ ՚ի դաւանութիւնս Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի . եւ ապա մկրտել , եւ յետ այնորիկ ուսուցանել մկրտելոց զամենայն զոր ինչ պատու իրեաց Քրիստոս . Ինչպէս որ կըսէ . Աշակերտեցէ . . . եւ Կրտեցէ . . . եւ սուսցէ . Մ . ԻԸ . 19 : Իսկ պատահական մահուանէ ազատ պահելու համար զերախայն , ծնողաց հաւատով եւ կնքահօր երաշխաւորութեամբ նախ կը մկրտեն , եւ ապա սորակիքները կը սորուեցունեն եւ կը կրթեն հսկողութեամբ ծնօղաց , եւ քահանայի եւ կնքահօրն :

Ուստի շատ լաւ կըլլար բժիշկ մի ալ ատոնց վերայ դրուած ըլլար , որ մանկան զարգացման եւ յիշողութեան սուր պահելուն աշխատէր , որ մանուկը առողջ մարմնով եւ սուր յիշողութեամբ զարգանար ՚ի չափ հասակի հասնելու : Զի որովհետեւ ստուանութիւնը Աստու-

ծոյ համար է , ըստ այնմ թէ . Աճեցե՛ + եւ լցե՛ + շէրէր .  
 Ծնդ . Ա . 28 : Որ բարի զաւակ հասցնէ , որ Աստուծոյ  
 ժողովուրդ , եւ երկիրպագու նորա անուան ըլլայ . վասն  
 որոյ , Քրիստոս օրհնեց զհարսանիքը եւ Ըւրբ քննէ քո-  
 իւրից . Օհ . Բ . 3 : Եւ Առաքեալն ալ , սորբ եւ անկողնէ  
 անց կըսէ . Եբե . Ժ . 4 : Դու լաւ գիտես զաւակս , որ  
 ազգը անհատներէն կը բաղկանայ . երբոր անհատը ծը-  
 նողաց , քահանայի եւ կնքահօր հսկողութեան ներքեւ  
 կրթութեամբ ըլլայ , այն ատեն ազգը ողջոյն կրթութեամբ կըլ-  
 լայ . բայց դժբաղդաբար շատ քիչ կը գտնուի սրբազան  
 հարց կարգադրութիւնը գործադրիչ ծնողք , քահանայք  
 եւ կնքահարք , զի Աբճարո՛ւ սրբաբոյն ա՛լ հարցնէ . Աւ .  
 Ժ . 3 :

Ո՛հ , հա՛յր , սրտիս վերքերը կը նորոգին երբոր ազ-  
 գայնոցս վրայոք կրթութեան մասին զրոյց կը լսեմ , եւ  
 կամ պաշտօնեայնորու վրայոք անտարբերութիւն կը  
 տեսնեմ . թէ որ վերոյիշեալ կարգադրութիւնը գործադ-  
 րուած ըլլար նէ , ինչո՞ւ պիտի կործանէր Հայոց դահը ,  
 եւ ինչո՞ւ պիտի աղքատանար ազգը , եւ ինչու համար  
 մինչեւ հիմայ տղէտ եւ անկիրթ պիտի մնար : Ո՛չ ծնողք  
 գիտեն ի՞նչ բանի համար ամուսնացան եւ ի՞նչ բանի  
 համար զաւակ ծնան , եւ ո՛չ քահանայն գիտէ , ի՞նչ  
 բանի համար մկրտեց գերախայն , եւ ո՛չ ալ կնքահայրը  
 գիտէ ի՞նչ բանի համար գիրկը առնուլ եւ տալ մկրտե-  
 լու : Մեծագոյն մասամբ կոյր զկուրայն կը գործեն , վասն  
 որոյ մանուկը , ոչ ի մանկութենէ կը սորուի . յիշե՛ս յա-  
 ռաբ մանկութեան քո , զբարիքն քո բառերը . Ժող . Ժ . 4 .  
 եւ ո՛չ ալ պարտեալ զհայր քո եւ զմայրն , զի երկայնակեաց  
 լիցին . Մատ . Ժ . 4 : Անոր համար ազգը տղէտ , աղ-  
 քատ , եւ անկիրթ մնալու պատճառը , նախ՝ ծնողք ,

Բ . քահանայն , Գ . կնքահայրն է , վասն որոյ Աստուած  
 ալ ՚ի պատիժ անհոգ եւ խնամք չտանող ծնողացն , կըսէ-  
 քեթե՛ն եւ , պարտե՛նցե՛ որոյ իւրոց զճնապարհս ի՛մ պահել  
 բայց ոչ պատուիրեաց յՆդ . Ժ . 19 : Եւ նմանեցաւ ժո-  
 ղժուրդ այնոյն , յորո՞մ ա՛լ քուր քեթութեան . Ով . Գ . 6 :  
 Ուստի՛ որդիք ժանստ եւ սերմն անթեւանութեան . Եր . Ա . 4 :

Եւ ծոյլ անհոգ քահանային ալ կըսէ . որ՛ւր զհաճաբ  
 անթեւանութեան , զի ո՛չ կարես այտուհետեւ լինել անթեա . . .  
 վասն զի , որո՞ զքեթութեան մերթեցեբ , մերթեցեց եւ եւ զեղ  
 զի մի՛ քահանայացեալ ինչ . պատճա՞ռ . զի մոռցաբ զքեթեա  
 քո , եւ այլն . Ով . Գ . 6 : Այս մարգարէութեան գլուխը  
 լման բաց կարդա՛ , եւ իմացի՛ր : Եւ կնքահօր համար ալ  
 կըսէ , երբոր մկրտեալ մանկան կրթութեան հոգ չէ տա-  
 րած . Ինչն Տեր ՚ի դատ եկեցե՛ ընդ ձերն ժողովրդեան իւ-  
 րոյ . Եր . Գ . 14 : Քանզի տկարացան ՚ի հաւատս Քրիս-  
 տոսի , եւ անհոգացան զկրթութենէ եւ զուսմանէ մկրտ-  
 տեալ մանկանն : Եւ չը սորուցուցին Աստուածպաշտու-  
 թեան խորհուրդը եւ մարդկութեան հանգամանքները :  
 Մանկան կորստեան պատճառ եղան , վասն որոյ Առաք-  
 եալը այս տեսակ անհոգ եւ խնամք չտանող ծնողքը , եւ  
 քահանայն եւ կնքահայրը , անհաւատներէն ալ վատ կը  
 սեպէ ըսելով . Եթէ ո՛ր իւրոց եւ մանաւոր ընթանեաց իը-  
 նամտ ալ դանկեցէ ՚ի հաւատոցն սորոցեալ է , եւ չար քան զան-  
 հաւատսն է . Ա . Տե՛մ . Ե . 8 : Ուրեմն՝ Հայր , ասկէ աւելի  
 մարդու մը պատիժ չկրնար ըլլալ , երբոր Աստուծոյ եւ  
 մարդկան հետ ըրած ուխտը չկատարէր եւ պարտքը չը  
 վճարէր , եւ իրեն վերայ առած պաշտօնը հաւատարմու-  
 թեամբ չգործադրէր , որ այս ծոյլ անհոգութիւնը մեր  
 Հայկայ տան վերայ մեծագոյն մասամբ իրակացեր է , ազ-  
 գովին կը ճնշուիմք , տղխութեան մէջ :

Ուրեմն փութաձք Եւն. 24 թուանշանն ասոր դեղ  
 և դարմանը առնուլ և ողջացնել այդ ցաւը , զի սախց  
 մինչև ցղլուխ չիք 'ի նմա ստողջութիւն , զի ամենձքեան  
 խոտորեցան 'ի միասին . Եւ թողալ զԵւնեան Ժանկութեան ,  
 և ճոռացեալ զԵւնեան Ասորեանքէն . Աւ. Բ. 17 : Ասիկայ  
 բժշկելէն ևաքը աճապարենք երկքտասան պատիժը Հայոց  
 տան մշջէն վերցնելու ճարը գտնալ :

Ահաւասիկ :

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՐՈՐԻ ՊԱՏԻԺ ՊԱՏՈՒՀԱՍ  
 ԵՆ ԱՆԿԻՐԹ ՄԱՆԿՈՒՆՔ ԻՇԻԱՆՔ ՆՈՐԱՀԱՍ

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՐՈՐԻ ՊԱՏԻԺ

Խոնարհեցաւ ճորք' և կործանեցաւ այր և ո'չ ներե-  
 ցից նոցա , ասէ Տէր . Եւ. Բ. 9 : Երաւի Հայր չի ներ-  
 ուի այն մարդուն , որ կատարեալ մարդկութիւնը ձգէր ,  
 և սամարդութեամբ խոնարհէր անարժան գործեր կը գոր-  
 ծէ , և կը յամառի ետութեան , ինքնահաւանութեան ,  
 կամապաշտութեան և շահադիտութեան մշջ , և դերի ե-  
 դամ կրից , կը ծառայէ մեղաց և կանցնի ազգային որ և  
 իցէ պաշտօնի գլուխ և կամ մշջ , և կը սկսի ազգայնոց  
 ներկային և ապագային վնաս հասցունել , ուղղակի և  
 անուղղակի կերպով : Եւ կործանեցաւ այր , ճիշդ Հայկայ  
 սերունդի գաւակներն ալ , որ այր են զիւրցադնութեամբ ,  
 խառնակելով օտար սերնդոց հետ , կործանեցան օտարին  
 սովորական չարութեան մշջ . անա տե'ս Ժանկութեան  
 (22) թուանշանը , և ամեն խարդախութիւններով առ-  
 շանու անձին կը լինի իրրև իշխան . բայց ո'չ իշխան ,  
 այլ իշուան . վասն որոյ , ողջամիտ և ճշմարիտ ազգա-

ուր իշխանը հրաժարական տալով ևս կը քաշուին , և  
 կըլլան չեղք , և ազգը կը մնայ շահասէլյաներու ձեռքը ,  
 'ի պատիժ ազգին , ինչպէս որ կըսէ Ս. Գիրքը . Ահա-  
 ռէկ , Տէր , Տէր դերմեանց , Բարձրէ . . . շար հզօր . . . և  
 զերհրաւան . . . և հանձարեղ զուկիւրի . . . և կացոցեց  
 'ի վերայ նոցա Ժանկունն իշխանս , և Խաբէթայ , պրե-ցեն նո-  
 ցա . Եւ. Բ. 9 . 1 :

Սա գլուխը լման կարդա , և ապա ազգայնոցը վը-  
 րայօք խորհրդածէ , և Հայոց պատմութեան դրքերը  
 ձեռքդ առնելով , լաւ մի աչքէ անցուր անցեալ դարե-  
 րու և մանաւանդ ներկայիս ազքանագեաց սերնդոց հո-  
 դեար և մարմնաւոր վարչութեան գործերը , և տե'ս ,  
 ո՞րը ազգայնոցը օգուտ բերած է , և ո՞րը վնաս : Ուստի  
 ներկայիս ապագային շահ և օգուտ բերելու գործողու-  
 թեան հետեւիլ , և ո'չ թէ վնասաբեր իրողութեանց :  
 Վասն որոյ , ընտրութեան միջոցին ամենայն զգուշու-  
 թեամբ , պէտք է ընտրել վարչութեան մարմնոց անդամ-  
 ները , որ եղած ըլլան , Արարհամ'ն , Յակօբէն և Յով-  
 սեփէն , և մանաւանդ Վաղարշակէն և Վարդանէն , ազ-  
 գայնամ և անշահասէր , հեռատես անձինք , և ո'չ թէ  
 կարճատես կիբքոտ , շահախնդիր , յամառեալ ինքնահա-  
 վանութեան կամապաշտ և կողմնապահ անպէտ անձինք ,  
 որ անգին ժամանակը վայրախօսութեան վճերով կան-  
 ցունեն , և որով մեծամեծ վնասներ կը պատրաստեն ա-  
 պագայիցն տանն Հայկազանց , զի որովհետեւ տունը կը  
 փչի հոգ չեն ըներ , բայց միայն մի գերան ձեռքերնին  
 անցնելու կը ծառայեն , և կամ կիրքերնին յազեցնելու .  
 գոր որինակ անցեալ դարերուն մշջ կը տեսնանք Վա-  
 Սէ-Նէն , որ կաշխատէր ազգը կռապաշտութեան տանել  
 իրեն մամաւոր անձին շահուն և կիրքը յազեցնել . նոյն-

պէս Վեհարքիս, և ոմանք նախարարներ ևս իրենց մասնաւոր առանձին շահուն համար, սուտ երգումըրին Գազիկ թաղաւորին, և հանեցին զինքը 'ի Պօլիս, և ետեւէն մատնեցին զինքը և զԱնի քաղաքը Մոնոմախոս կայսեր Յունաց, և կործանեցին Բագրատունեաց թագաւորութիւնը: Եւ ահա այսպէս ամեն դար ունեցեր է իրեն մէջ խարդախ և շահասէր անպիտան և վնասաբեր ազգութեան ղեկավարները, այն ևս 'ի պատիժ ժողովրդեան, ըստ այնմ թէ՛ Դաւիթեաց զոռո 'ի յեւս անօրէնաց խաբայ և ապարսթողաց. բայց անօրէն խտրասիրտներն ալ պիտի դատուին, գթութիւն և ողորմութիւն չընելով, Վարչութեան ղեկը արդարութեամբ չգործադրելուն համար: Ըստ այնմ թէ, բայց զազգն որո՞ւ ծառայեցեն, դատեցից. Ծեղ. ԺԵ. 13. Խեղբեցից զգրեժ 'ի Բագարէն. Երժ. ԻԵ. 12: Եւ յանդիմանել զառնայն արթնչոյս զան բորձոց իւրեանց. Յոգ. Ա. 13: Եւ ահա ատանկ շահասէր կիրքոտ եւայլն անձինք Վարչութեան անդամակից ըլլալով ազգին ներկային և ապագային վնասներ բերուելու առիթ եղած են և կըլլան. տե՛ս Ծեւ. (22) թուանշանն, ուր որ պիտի ճանչես լաւագոյն զիրենք: Ահա՛ ազգայնոց ասկէց աւելի պատիժ չկրնար ըլլալ. երբոր ոմանք անօթի և կամ կուշտ փոր, խարդախ շահասէր անձինք վարչութեան անդամակից կըլլան: Արդ՝ ասոր դարման ալ դիւրին է, եթէ ծանօթութեան 23 թուանշանը ողջունէք. ապա թէ ոչ, եթնազլուխ անյաղ չորեքտասան պատժէն ալ ազատուելիք չունիք. և Գանիէլեան չորրորդ գաղանխն պէս Հայկաց սերունդը պիտի մանրէ և ուտէ. տե՛ս Գանիէլի Գ. 8: Քանզի ծանեան զԱստուած և զմարդկութիւն, և ոչ իբրու զԱստուած փառաւորեցին, և ոչ մարդկութեամբ արդա-

րութիւն գործեցին. վասն որոյ յոտից մինչեւ ցղլուխ չիք առողջութիւն. Հա՛. Ա. 6: Եւ. Ա. 6: Զի ամենեքեան խտորեցան ի միասին:

Ահաւասիկ:

ՊԱՏԻԺ ԶՈՐԵՔՏԱՍԱՆ ՆՈՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ  
ՆՄԱ ՅԱՐԵԼՈՅ ԶԻՔ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻԺ ԺԳ.

Արդարեւ նորասիրութիւն է Գանիէլ մարգարէի տեսեան չորրորդ գաղանխ, սր արեւմուտքէն ելանելով դէպ ի արեւելք քաղից և իրեն համոզիչ լեզուով և ծածկեալ ժանիքներով, նորասէրները գրաւեց իրեն իշխանութեան ներքեւ և սկսաւ անոնց ստացուածները կեղեքելով վատակները ուտել, և հարուստները ազքատայունել, և աղքատներու աչքին լոյսը քաշել, սրտերնին մաշեցընելով ի գերեզման տանել, և հողին մէջ դնել: Աղքատէ աշխարհի այս հրապուրիչ թակարթը անմարմին չարէն լարուած ըլլալով, և շահասէր մարմին անհողի մարդոցմէ գործադրուած է և կը գործադրուի ի պատիժ ինքեանց. զոր օրինակ, հրեղէն հրեշտակներէն մէկ մարդ ցանկացաւ մէկ նոր փառք մը փատկիլ, իսկոյն ունեցած փառքէն ալ զրկուելով պատժուեցաւ. տե՛ս Եր. ԺԳ. 13:

Նոյսպէս հողեղէն մարդը, փափազեցաւ նոր մեծութեան մը հասնելու. նա ևս պատժուելով ունեցած փառք և մեծութենէն զրկուեցաւ. տե՛ս Ծեղ. Գ. 6 22: Եւ եւ ահաւասիկ ասոնց նման շատերը նորասիրութեան պատճառաւ է որ յընչից թափեալ աղքատացած են, և է՝ որ ցաւօք և հեծութեամբ տարածամ ի կենաց զրաւեր և ի գերեզման իջեր: Զի որովհետեւ մարդս ծնած օրէն



մինչև մահուան օրը կորուստ մը կը վնտորէ եւ չկրնար գտնել, վասն որոյ չտեսած բանը, տեսնելուն պէս կը ցանկայ դանի ձեռք ձգել, ուստի շատ մի կաշխատի եւ կը նեղի, մինչև որ ձեռք կը բերէ եւ կուրախանայ. բայց քիչ ատենէ մի ետքը անկէց ալ կը ցրտանայ մէկդի ձըգելով, ուրիշ նոր բան մի վնտուելու եւ ձեռք բերելու ետեւէն կիցնայ եւ կաշխատի. դանի ալ կընդունի եւ քիչ ատենէ մի ետքը, անկէց ալ սէրը պաղելով կը մեկնի : Ահա այսպէս մարդս շարունակ իրեն կենաց ճամբորդութեան մէջ կորուստ մը գտնալու համար գիշեր ցերեկ կաշխատի եւ շատ անգամ ալ չարաչար կը վնասուի . զոր օրինակ . թէ որ Աբիսողոմ նոր իշխանութիւն մի ձեռք ձգելու չաշխատէր, իրեն յանկարծ ծառէն կախուելով մեռնիլ չկար . տես 2 թֆ. ԺԷ. 14 : Սապէս Ադօնիան նոր խնդիր մի չառաջարկէր Յերսաբէլին, իրեն յանկարծ գլխատուելու հրաման չէր ըլլար եւ չէր գլխատուէր . տես Գ. թֆ. Բ. 19 : Հիմայ ալ կը տեսնա՞ք որքան հարուստ երիտասարդներ եւ օրիորդներ իրենց հարստութիւննին փճացուցին նոր մօտաներու առթիւ, եւ աղքատներ ցաւազար եղան եւ կը լինին հոգածութեամբ եւ սրտամաշուքով ի սէր նոր մօտային : Ո՛հ, եօթնագլխի գազան ծովայնն (նոր մօտայ) նարսեբուլիւն, որ հարուստները յընչից, եւ աղքատները առողջութենէ կը թափես, եւ խաղաղ սրտերը հոգերու կը մատնես, տունները խռովութիւններով կը լեցնես, եւ բոլոր քեզ դիմօղ նորասէրները լուսնոտի պէս երբեմն ի հուր բարկութեան, եւ երբեմն ի ջուր սրտամաշ հոգածութեան ձգելով անբժշկելի կառնես . Մ. ԺԷ. 15 : Ո՛հ, ոչ ոք կարաց զքեզ յաղթել ո՛վ նորասիրութիւն, ոչ նահապետք, ո՛չ թագաւորք, ո՛չ իշխանք, ո՛չ մարգարէք եւ ո՛չ զօրք, բաց ի

Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ յաղթեց եւ կորացոյց ըզքեզ . Ահա տե՛ս Մ. Գ. 10 : «Յայնժամ ասէ ցնա Յիսուս . ե՛րթ գլետս սատանայ, զի գրեալ է տեառն Աստուծոյ քում երկիրպագցես եւ զնա միայն պաշտեսցես . ապա եթող զնա սատանայ եւ ահա հրեշտակք մատեան եւ պաշտէին զնա» : Նոյնպէս Հրէից ըսաւ «ես զփառս ի մարդկանէ ոչ առնում . եւ ոչ զփառս անձին իմոյ խնդրեմ . տես Օհն. Ե. 44 : Ը. 30» :

Ինչպէս որ աշխարհի նորանոր բաներով նորասէր մարդերը կը որսար իրեն յորոգայթին մէջ, կարծեց որ՝ Քրիստոսն ալ այնպէս պիտի որսար. վասնորոյ առաջարկեց որ իրեն երկիրպագութիւն ընել . եւ ապա նորանոր աշխարհի փառքերը Քրիստոսին տայ . ինչպէս որ այս դարուս թէ երիտասարդները եւ թէ օրիորդները նորասիրութեան համար երկիրպագու կը լինին, ու եցէ այնոցիկ, որք կը խօստանան նորանոր հանդերձեղէնք եւ ուտելիք տալ : Եւ կը լինին կամաւոր գերի, ուր որ Քրիստոս մերժեց, եւ հաւատացելոց պատուիրեց կորոտական կերակուրի ետեւ չերթալ եւ հազուստի համար չհոգալ : «Երեւոյ՜ գործեցե՛տ, թ զիսբարա՛ն կերպարն Օհ. Զ. 27 :» Մի հողայք . . . հայեցարուք ի շուշանն վայրենի . . . եւ ոչ ոտոմնն յամենայն փառս իւրում զգեցաւ իբրև գմի ի նոցանէ . տես Մ. Զ. 25 : Եւ լման կարդա այս գլուխը : Եւ Սոցոմնն շատ աշխատեցաւ աշխարհի որ եւ իցէ բաներով իրեն փափաքը լցնել չկարաց . վերջապէս ըսաւ . «անայնոսնն անայնոսնեանց ամենայն ինչ ընդունույն է ժող. Բ. 1 :» Իսկ Գաւիթ մարդարէն բացի Աստուծոյ փառքերէն, ուրիշ որ եւ իցէ բանմի չէ կարող մարդու յօժարութիւնը լցնել. ուստի Աստուծոյ կըսէ, է յերեւել գառաց Կայ յաբեցոյց Սոգ. ԺԶ. 15 : Ուրեմն Հայ-

կայ, և կամ ուրիշ որ և իցէ երիտասարդք և երիտասարդուհիք ի դուր կը վասնեն իրենց դրամը և իրենց կեանքը, նորասիրութեան պատճառաւ, և շատերը հալելով և մաշելով գերեղման կը մտնեն: Յոյժ ցաւալի է:

Հայկայ զաւակներու այս վիճակը, որ իրենք ամենը մէկտեղ զարով չեն կարող Յոյն մի Եւրոպացի մի Մանմատական մի և այլն՝ հայկական հագուստի և ընթացից սովորութեանց համոզելով ընդունել տալով մեջերնին բերելու, բայց իրենք առանց համոզելու կամովին և երամովին կը մերկանան հայկական կերպարանքը և սովորութիւնը և աւանդութիւնը և մինչև անգամ ծէսը, և կը նմանին հագուստով լեզուով կան կարասով օտարին. խիտա քիչ կը գտնուին, որ նորասիրութեան չփափագելով հայութեան օրինաց մէջ ապրող: Արժարտ արդարաց և հարցէ: Առէ ժի. 3: Բայց սակայն ինչո՞ք առ ընդհանրապէս: Մ. ժ. 37: Ահա ասկէց աւելի պատիժ չըլլար ազգիմի, որ իրեն պիտոյքները իրեն տան մէջ մէկդի ձգած, և օտարներու կերպարանքովը ապրելու կաշխատի. և կաղքատանայ և բազմատեսակ ցաւերու տէր ըլլալով կը մեռնին ալ տայրածամ, վասնորոյ ոչ կամիմ մխիթարել, զի յատից մինչև ցլգուխ չիք առողջութիւն. որոյ դարմանն տես. Ծան. (24) թուանշանն. որով պիտի կարողանաս նորասիրութեան եօթնազլուի գազանը մեռցնել և ազատիլ անտի, և վուրթալ տաննեւհինգերորդ պատժոյ առաջքը առնելու աշխատիլ և դարման գտնել որ է հետեւեալն:



ՀԱՅՐ ՀԱՅՈՒՆ Է ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ  
ՕՏԱՐԻՆ ՀԱՄԱՐ ԿԸՍԷ ԿԸ ՄԵՌՆԻՄ:

ՊԱՏԻԺ ԺԵ.

Արդարեւ այդպէս է, Հայը օտարին համար միշտ հաւատարմութեամբ կաշխատի և կը մեռնի ալ, բայց ազգայնոց համար անշահատէր ոգևով աշխատող և հաւատարիմ ծառայող շատ քիչ կը գտնուի, արժատք արդարոց ոչ հատցի. Առէ ժի. բայց՝ թշնամիք առն ընտանիք նորա Մ. ժ. 36:

Ահա քեզ նախարարն Հայոց վիստ Սարգիս թողեալ զԱզգայինն յարեցաւ ընդ Յոյնն, օգնական լինելով նոցա առմանն Անուց քաղաքին Հայոց: Նոյնպէս ոմանք հայ նախարարք Երզուան յանուն Աստուծոյ հաւատարիմ մնալ Գազիկ արքային և պահել զքաղաքն Անի. և իբրև յլեցին զնա ի կոստանդնուպոլիս նոյն յետայն զկնի նորա ստելով երգմանցն, զբանալիս քաղաքին, յղեցին հանգերձ գրութեամբ իւրեանց առ կայսրն Մծնոմարտս, մինչդեռ Գազիկ ընդգիմանայր կայսեր հրամանին, չտալ զԱնի քաղաքն, տես Հոյ. Պ. Բ. 252. Բ. Հ. քրես 331:

Նոյնպէս անհաւատարիմ և խարդախ գրեալ Պապ թագաւորն առ մեծն Ներսէս և նախարարք ոմանք առ Սահակ, և Սանատրուկ առ տունն Աբգարու. և նախարարք Հայոց առ մեծն Տրդատ, և հաւատարիմ ծառայ առ օտարն: Տես Ա. Հ. քրես 294, 425, 469, 816: Ամէն երկրի և ամէն թագաւորութեանց մէջ ուր որ Հայ գտնուէր նոյն տեղի իշխանին ամենայն հաւատարմութեամբ ծառայէր են, մի թէ մինչև ցարդ Բու-




սիւրճնակ և Տաճկաստանի Հայերը ամենայն հաւատարմութեամբ իրենց վեհապետին չե՛ն աշխատած, և շատ արիւն թափելով թշնամուտն դէմ յաղթութիւններ չե՛ն ըրած, և տէրութեան գործերուն մէջ հաւատարմութեամբ մի՞թէ չեն ծառայած, թէ Բուսաստանի և թէ Տաճկաստանի պատմութեանց մէջ պատուական անուններն անմահացուցած կը տեսնուի, նաև տես (28) Թուանշան շահ մէջ,

Իսկ ազգութեան մէջ շատ քիչ կրնամ գտնալ անշահասէր հաւատարիմ արդիւնաւոր ծառայողներ ազգայնոց օգտին զի սակաւք են ընտրեալք, քանզի արմատք արդարոյ ոչ հատցի Առէ՛ ԺԲ. 3. բայց թշնամբ առն ընտանիք նորա Մ. Ժ. 36. ըլլալով հաւատարիմ բարերարներ և անշահասէր աշխատողները, հալածեր են և մինչև անգամ մահացուցած են, ինչպէս որ վերը տեսար և (29) Թուանշանի մէջն ալ տես, վասնորոյ կը ստիպուիմ ըսելու :

Հայոց ազգին բարոյն համար, թէ որ կոտորուի, Եւրոպայի պարտաւոր եղիք տեսիլ տեսիլ զուսուելու : Վասն զի ծանեան զԱստուած և ոչ իբրու զԱստուած պաշտեցին, և ոչ մարդկութեամբ ի սուրբ սրտէ արդարութիւն գործեցին, և զրկելոց բողոքանայն ունին մատուցին վասնորոյ ոչ գտցեն յաջողութիւն բարութեան :

Արդ որոյ դեղ և դարմանն տես (30) Թուանշանն և առ անտի դարման զոր և բժշկեա, գուցէ կարող լիցիս 16 բղ. պատիժն ևս բժշկել, ապա թէ ո՛չ չունիս ազատութիւն որում և ցանկաս հանապաղ :



ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՆՈՐԻ ՊԱՏԻԺ ԱՆԳՈՒԹԻՆ  
ՈՐ ՄԻՇՏ ՇՈՒԱՅԼ Է ԱՌ ՍԷՐ ՕՏԱՐԻՆ

ՊԱՏԻԺ ԺԶ.

Որ ազգ որ ըլլանէ ըլլայ պարտաւոր է իրեն անհատներուն խնամք տանելով գանոնք շահել, և իրեն դրամը ազգայիններու ծոցը դնել, այն իրեն վերաբերեալ պիտոյքները քանի որ ազգայիններուն քով գտնուելով կրնայ ընդունել. պէտք է իրեն դրամը հոն տալ և շահելով զընկերը պիտոյքները ստանալ թէև տասը փարայ ալ աւելի ըլլայ իւր արժէքէն. Ահա ազնիւ ազգասիրութեան մէկ նշանաւոր յատկութիւնն ալ այս է. որ կը շահէ ազգայինը, և կը հոգայ արդեամբ անոր շահ և օգուտը : Երբոր ասոր հակառակը ըլլայ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ պատիժ, ուստի այս պատիժէն ալ ազատուելու համար, շահ. (31) Թուանշանէն դեղ և դարմանը առնել և բժշկել ատ ազգային ցաւն ալ, ապա թէ ո՛չ տանն և եօթներորդ պատիժն ալ քեզմէ զատուելիք չունի, տես անաւասիկ հետեւեալը :

ԵՐԹԵՒՏԱՍՆ ԱՆՆԵՐԻԼԻ ՊԱՏԻԺ ԱՂՔԱՏ ՀՊԱՐՏԻՆ  
ՈՐ ԱԶԳԱՅՆՈՅ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՆԱՐՀՆԵԼՈՒ ԴԺՈՒԱՐԻՆ

ՊԱՏԻԺ ԺԷ.

Շատ մի ազգային երիտասարդք, օրիորդք և մանկամարդ ազգատուութեան մէջ կը տառապին և կը նեղ-

ուին , և չեն խոնարհիր ազգայնոց տուներուն մէջ ծառայութիւն ընելու , և հանգիստ սպրուստ ընել , վասն որոյ մեծատունք և հարուստք անճարակ մնալով ակամայ օտար ազգի օրիորդներ և երիտասարդներ կառնուն տուներնուն մէջ ծառայելու եւ կամ եթէ ազգայնոցմէ ծառայելու անձինք գտնուելու ըլլան, կամ հաւատարմութեամբ չծառայելնուն և կամ ծառայութեան կերպը չգիտնալնուն համար կը մերժուին : Եւ կամ ոմանք հարուստներ ալ կան որ իրենց պատիւ կը սեպեն օտար ազգի սպասաւոր տանը մէջ ունենալնին , ահա ասոր դեպ և դարմանը տես (32) թուանշանը , և անկէց աճապարէ տասն և ութերորդ պատիժը բժշկելու ու է հետեւեալը :

ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՐՈՐԴ ՊԱՏԻԺ ԴԱՌՆԱԳԻՆ  
ԻՇԻԵԼ ԱՆԿԻԹԻՆ ԿՐԹԵԱԼ ՎԵՆ ԱՆՁԻՆ

ՊԱՏԻԺ ԺԸ.

Արդարեւ ասկէց աւելի պատիժ և խայթ չի կրնար ըլլալ ազգին մէջ երբոր տգէտ և աննշան անձ մի կը համարձակի իրմէ վերնագունքը երեսն ի վեր ցատքել և իշխել , գիտնականը իբրեւ զտգէտ անպատուել և տգէտը իբրեւ դիտուն յարգել , գործառեալը քամահրել , և անխորժը գործածել հարուստը ցրտացունել և աղքատաց չօգնել , քահանայից իշխել և առաջնորդաց չհնազանդիլ , դրամական ազգային որ և իցէ նպաստելու կը փախչին , խօսել գալու կը զօրանան . և ահա այսպիսի շարժումով ազգայնոց բարեկարգութեան և ապագայ բարեաց արգելման առիթ ըլլալով միայն թէ ներկայիւն ու-

րախ ըլլալով կիրքերնին յաղեցնել բաւական սեպելով ժամանակնին կանցունեն և այս ցաւն ալ բժշկելու դարմանը տես 33 թուանշան . և դարման տանելով փութա տան և ինն բոյ ցաւ և սրտիժը բժշկելու աշխատիլ որ է հետեւեալն :

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՐՈՐԴ ՊԱՏԻԺ ՄԱՐԴԿԱՅԻՆ  
ՉԱՐԱԶԱՐ ՎԱՏԵՆԷԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԱՆԳԻՆ

ՊԱՏԻԺ ԺԹ.

Աշխարհիս մէջ քան զժամանակը սրնթաց բան չկայ և մարդիկ ալ ինչ որ թէ հոգւոյ և թէ մարմնոյ բարիք մի պիտի վաստկին , ան ալ այն ժամանակին մէջ գործելով պիտի վաստկին , ինչպէս որ կը տեսնամք իմաստուն մարդիկ ժամանակին կը գործեն . զոր օրինակ , երկրագործը կիթէ աշնան և գարնան չը սերմանէ ամառուան մէջ հնձելու ցորեան չպիտի ունենայ , մարդս իրեն գարնան հասակին մէջ կրթութիւնը չառնու , այրութեան հասակին մէջ կատարելութիւն չպիտի ունենայ . անցեալ պատմութիւնը կարգալով օգուտ մի չպիտի ստանայ ընթերցողն , թէ որ աղքատացունօղ և հարստացունօղ և հանդարտ կացութեան վիճակի մէջ պահօղ պատճառները չիմանա և չգործադրէ :

Արդ չատերը անցեալ պատմութիւնները կը կարգան ժամանակ անցունելու համար և ոչ թէ օգուտ մի ձեռք բերելու . նոյնպէս սրճարան , գինետուն և առտնին նստել նարտ , թուղթ , և այլ խաղերով և աւելի փնտասկար

զբօսանքներով պատուական ժամանակն չարաչար գործածելով կը կորսուցունեն չեն օգտիր, և ժամանակը կերթայ, իրենք դարձեալ նոյն վիճակին մէջ կը մնան, և մարդկային կատարելութեան չեն համիր, մինչդեռ Քրիստոս կըսէ. եղբրո՛ւ հարաբեալ որդե՛ս հայրն յեր երկուսը հարաբեալ է Մ. Ե. 48: Անա ասկէց աւելի պատիժ ինչ կընայ ըլլալ մարդու որ ժամանակը ունայն և դատարկ կանցունէ, մարդկութեան կատարելութեան հասնելու չաչխատիր, ինչպէս որ Եւրոպացին կաշխատի:

Անա այս ցաւն ալ բժշկելու դարմանն տես 34 թուանը չանն և աշխատիր քսաներորդ սրտոյ առաջը առնել որ մարդկային սեռը և մանուանդ զհայր կը ճնշէ և կը նեղէ:

ՊԱՏԻԺ ՔԱՆՆԵՐՈՐԴ ԶԿՏԻԼ ՔԱՆ ԶԶԱԲ  
ԱՆԿԱՆԵԼ ՅԵՐԿԻՐ ԼԻՆԵԼ ՅՈՒՇԱԹԱԲ

ՊԱՏԻԺ Ի.

Այս ազգը այսինքն չափ և կարողութիւն չճանչել վեր ի վեր թռչիլը, մարդկանց երկրորդ բնութիւնի պէս եղած է, որն որ ունեցած և կամ օրական վատուած եկամուտէն աւելի ծախք ընել ի փառս մարդկան և յետոյ պարտատէր ըլլալով աղքատութեան մէջ կ'ընան և կը լինի բորքել ոչ կորէ ծարալ աճել. զի որովհետեւ կատարելութեան ատ խրատը ժամանակին որ կարգար և պահէր մտաց մէջ, որ կըսէ բանաստեղծը,

Ե- որ չափով վերաբերին քեր իսն զափն վերանան  
Որդ զանց ունին զափ անին օր ըստ օրէ որդարունն:

յիրաւի շատերը տեսանք, երբոր փոքր յաջողութիւն մը գտան առեւտրականներուն մէջ մէջ մ'ալ տեսանք որ տունը մօծցուց աչճի և այլադ բանեց, աղօթքը աղաչանքը եկեղեցին բոլորովին մոռցաւ և այն: Երբոր յաջողութիւնը գնաց ալ չկրցաւ ծախքին առաջը առնել կակտին եկեղեցիները ուխտի պարտիլ հոգալով և մտածելով բարակ ցաւերու զոհ եղան, և ատանկ ալ որ և իցէ ազգային գործերուն մէջ տեսանք վարժարաններու և ճեմարաններու վրայօք, զոր օրինակ Փարիզու, Արմաշու, Շահնազարի, Մշոյ և Վարազայ վանից և այն. բարձր ծախքերով բացին և յետ այնորիկ տկարանալով գոցեցին: Նոյնպէս մօծամեծ ընկերութիւններ կազմուելան հաւաքածունը դրամը ծախքերնուն չբաւելով խանգարուեցան և ցրուեցան: Եւ եղան նկուն. զի այսոյն «հոս» զնէլ և ոչ կորաց:

Անաւատիկ Հայկական տան մէջ մինչ ցարդ չտեսնուեցաւ սկսուած շէնք մի գլուխ տարուէր մեծագոյն մասամբ ինչ որ սկսուէր կիսատ մնացեր, և ի գուր ծախքեր եղեր է, որ աս ալ տեսակ մի պատիժ է մարդու. բարձրանամ ըսելով բարձրագոյնի չափ կը գլտորի իսկոյն կ'ընա յուշաթափ: Ուրեմն ասոր դարմանն ալ տես 35 թուանչանն և բժշկէ ատ ազգային հիւանդութիւնն ալ որ փութաս քսան մի երորդ պատիժը բժշկելու, որ է:



ՔԱՍՆ ՄԻ ԵՐՈՐԿ ՊԱՏԻԺ ԴԱՌՆԱԳԻՆ  
ՈՄԱՆՔ ԼՐԱԳՐԱՑ ԹԵՐԹՔՆ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏԻԺ ԻԱ.

Ամէն ազգ կը ցանկայ իրեն ազգին անունը և համբար բարձրանայ .

Ուստի զանազան ձեւերով լրագրաց թերթերուն մէջ կը սկսին գովութեան արժանի լուրեր հրատարակել թէ իրաւ և թէ սուտ, հերիք է որ գովութեան արժանի է լուրն անա պայպէս մեծագոյն մասամբ լուրերը կը հրատարակուի օտար ազգաց թերթերուն մէջ :

Իսկ գալով հայ լրագրաց թերթերը , եթէ մէկին մէջ ազգային գովութեան արժանի լուր մի կայ նէ . և երկուքին մէջ նախատելու արժանի լուրեր կան , և մանաւանդ կղերականները անուանարկելու մասին առանց բացառութեամբ ամէնքն ալ անուանարկուած են թերթերուն մէջ և ոչ մի կղեր ազատուած է , ուրեմն ապրին , հազար սարքին հայկական տան լրագրաց թերթերը . որ մինչդեռ մահ մետականը իրեն խմայը և մոլլան կը բարձրացունէ և Հրէայն իրեն խախամները , Յոյնը և Բողոքականը , Քիլտանին և Վատինը իրեն կրօնաւորներն կը պատուեն , և եթէ պակասութիւն մի ալ ունենան , իրենց ժողովին մէջ կը պատժեն և կը պատկեն , մինակ իրենք գիտեն և ոչ օտարը : Իսկ մեր Հայկայ սերունդին բարի զաւակները , սրտալ ի կաթուղիկոտներէն մինչեւ ցժամակոչը և իշխաններէն մինչեւ ցհեալին անհատը և մինչեւ անգամ գիտնական վարժապետներն թերթերուն մէջ նկղնեցին և անուանարկեցին եւ յաւել խմրագիրք իսկ գիրար

նախատեցին խմբագրութեան բարձր արհեստը նուաստացուցին և աննշան աստիճանի մէջ դրին , ինչպէս նոյն Օրագիր անուն 1870 և օգոստոս 5 թուով թերթին մէջ կըսէ : Իբրեւոք պէտք է իսպառլանիէ մօտէն նոստոս արհեստը Հայ արդէ իմբօգրութիւնն է . . . և աղբն առջև անշան եւյն . առ թերթը ըման կարգալու է :

Արդարեւ մեծ ցաւ կը զգամք ոչ եթէ անուանարկութեամբ անպատուեալներուն վրայօք , վասն զի ամէն մարդ իրեն անձնական պատիւը ուրիշ տեղ թող չվնասուէ այլ և իրեն անձին և գործին մէջ կրնայ տեսնել , այլ մեք մեր հայ զաւակներու յանարժանս խոնարհելու վրայօք կցաւ իմք . որ իրենց բարձր պաշտօնը առ մասնաւոր ինչ շահու կը նուաստացունեն անարժան յօղուածներ զնելով թերթերուն . մէջ ասոր եւ անոր վաստ կիրքերը յաղեցնելու եւ տեղի կուտան ազգայնոց անհատներու մէջ ատկութեան ոգին զօրանալու եւ տղեղ անարժան խօսքերը իրենց գրչի ծայրէն դուրս տալով . մինչդեռ առաքեալը կըսէ . ամենայն բան տղեղ ի բերանոյ ձերմէ մի ելցէ եփես . Գ. 23 : Ալ ասկէց աւելի տան մի եւ ազգի պատիժ ի՞նչ կրնար ըլլալ , երբոր տան զաւակը տան մէջ եղած եւ չեղած պակասութիւնը օտար ազգաց առջև կհրատարակէ : Զի որովհետեւ ամեն մարդ հեռաւոր եւ մերձուոր կը կարգան առ թերթերը և կը լսեն Հայոց տան չեղած կամ թէ սխալմամբ պատահած պակասութիւնը : Վասնորոյ չկամիմ միտիթարիլ , քանզի Քամ անիծաւ ի Նոյէ և Ռուբէն ի Յակովբայ . ուստի այս ցաւն ալ բժշկել զիւրին է եթէ ձեռնարկես 36 թուանշանն եւ պիտի տեսնաք զեղ եւ զարմանը եւ յետ այնորիկ 22 երրորդ ցաւ եւ պատիժը բժշկելու աշխատիր որ է :

ՔԱՍԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԻԺ ՏԱՆԵՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ  
ՍՏԷՊ ՍՏԷՊ ՓՈՓՈԹՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԿԱՅ

ՊԱՏԻԺ ԻԲ.

Թէ ամիրաներու և թէ սահմանադրութեան ժամանակին ոմանց շահախնդիրներու մեր ազգայնոց զլսուն վերայ խաղցուցածնու դերերու չնորհիւ, ստէպ ստէպ Պատրիարքայ և Առաջնորդաց փոփոխութիւններ կը լինին ազգայնոց ներկայ և ապագային բազմատեսակ մեծ և փոքր վնասներ կը համարի :

Բայց որո՞ւ հոգն է, հերիք է որ ոմանք շահախնդիրներու ձեռքը գերան մի անցնի և ինքնահաւանն ալ իրեն կիրքը յազեցընելով կամքը տեղը տարած կըլլայ : Ո՞վ է որ ազգայնոց ապագայն հոգայ անկեղծ սրտով : Ահաւասիկ, տես՝ կարապետ պատրիարքէն հտքը, Արմաշու Ստեփանն կախկոտութիւն աղանձ է ըսելով պատրիարք ըրին, երբոր շահախնդրին և ինքնահաւանին դէմ կեցաւ իսկոյն ~~աբար~~ է ըսելով վար առին :

Եւ Պալաթցի Յակոբոս կախկոտութիւն, արդարախոհ և ազգասէր է ըսելով գահը նստուցին, և երբոր ապօրինաւոր խնդիրները կմերժէր վաղ ընդ փոյթ ատոր ալ խենդ է ըսելով հանեցին, երբոր հիւանդանոց կերթար, հարցուցին իրեն թէ ի՞նչու հոն կերթաս պատասխանեց Յէ խենդերն ~~դեղ~~ հոն է :

Այս անգամ ևւս գնացին Արմաշ, որուն որ ~~աբար~~ է ըսին գարձեալ ~~աղանձ~~ է ըսելով բերին գահը դրին :

Նա ևւս չդիմանալով ոմանց վատ ընթացիցն, հրաժարեցաւ գնաց տեղը նստաւ :

Եւ ատ միջոցին բազդի յաջողութեամբ Աստուածատուր կախկոտութիւն գահը դրաւ և նստաւ պատրիարք Սա ալ չկրցաւ համբերել ոմանց անիրաւութեանցն ապով հրաժարականը գնաց իւսկիւտար տեղը նստաւ :

Ուստի գնացին Նղմիր Մատթէոս կախկոտութիւն գտվելով դրին պատրիարք, 1844 յունիս 19, Չխոնարհեցաւ սա ամբարտաւան ոմանց կամքը կատարելու, հանեցին գինքը, դարձեալ բերին զանի որուն համար ըսին խենդ է, դրին գահը ևւս և չդիմանալով ապօրինաւոր խնդրոց առաջարկութեանց, կամովին հրաժարեցաւ : Եւ այս անգամ բերին Պրուսայու Գէորգ կախկոտութիւն գտվելով դրին պատրիարք, ատ ալ պժգալով սնիրաւաներու ոմանց առաջարկութիւններէն կամովին հրաժարեցաւ և բերին Նտիրնէու Սարգիս կախկոտութիւն, դրին գահը, ատ ալ կամքերնունհամաձայն չը լինելուն համար շատ մի խոտփութիւններ հանեցին, ուստի տուաւ հրաժարականը կտրուեցաւ : Եւ այս անգամ գնացին Նղմիրէն Պօղոս և կախկոտութիւն գտվելով դրին պատրիարք, որ աստիկայ իրեն խոտփութեամբ և համբերութեամբ կրցաւ վեց տարի պատրիարք մնալ, վերջը ասոր ալ դէմ արգելքներ հանելով նեղացուցին, ուստի տուաւ հրաժարականը և մեկնեցաւ : Եւ ընտրեցին Նղմատիոս կախկոտութիւն սա ալ տակաւին պատրիարքութեան գահը չնստած տեսակ մի նամակներու կծու խօսքերէն սրտամաշ հոգածութեամբ վէրք մի հանելով, նստաւ գագաղին մէջ, գնաց անարատ յախտեական տունը որ յերկինս էր :

Ասոր հոտեին կրկինք և կրկին իրար խոտնելով ընտրեցին սահմանադրապէս զՆտիրմանը և մեծ որոտում

ներով բերին զրին գահը , և յետ երկոց ամաց ամենայն խայտառակութեամբ Սինէպոց կուռքին նման գլորեցին և գահավիժեցին մինչև ցանդունդս : Եւ այս բերին Վարժապետեան Ներսէս եպիսկոպոսը , և զրին պատրիարք թէպէտ քանիցս կամեցան խախտել ի գահէն , և չկարացին , կսպանն պատեհ ժամու . ( Աստուած ազատէ յորդա թից և անիրաւաց զրպարտութեանց ) :

Ահա 50 տարուան մէջ 13 պատրիարքի և 7 տեղապահի փոփոխութիւններ եղած են , մինչդեռ Սերաստիան և կեսարիան , երկու Առաջնորդով կառավարուել են , կարապետ և Յակոբ եպիսկոպոսք :

Ուրեմն մտածէ սոյն փոփոխութեանց մէջ , ի՞նչքան ծախքեր , և որքա՞ն վնասներ թէ ազգային մտուկին և թէ գաւառացի և պօլսեցի գործ ունեցող ազգայիններուն յառաջ եկած է բազում վնասներ :

Ինչպէս որ վերը ըսինք , թէ որո՞ւ հոգն է . հերիք է որ՝ ոմանց շահասէրներու և ինքնահաւաններու կամքը տեղն երթայ , և կիրքերնին յագնայ :

Ահա այսպէս ստէպ փոփոխութեանց պատճառաւ բարեկարգութիւնը արմատ չբռնելով պտղաբեր չէ կրցեր ըլլալ : Ըստ բանին *Յառ փոփոխութեան արժողո՞ւնը առնէ* , վասնորոյ հոգևոր և մարմնաւոր անբարեկարգութեան խղճութիւնը օր քան զօր շատնալու վրայ է և մանաւանդ գաւառացւոց մէջ Առաջնորդաց փոփոխութեան ժամանակին , դուրս եկած ծանր ծանր վնասները :

Ասոր բժշկուելու դեղ և դարմանը տես 37 թուանշտնը , և յետ այնորիկ փութա 23 երորդ ցաւ և պատիժը բժշկելու աշխատիր , քանզի ազգայինք ի նեղութեան մէջ կը տագնապին և կը ճնշուին :

ՔՍԱՆ ԵՐԵՒԵՐՈՐԴ ՊԱՏԻԺ ԱՅՍԱՀԱՐ  
ԱԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԱՆՁԻ ԶԱՐԱԶԱՐ

ՊԱՏԻԺ ԻԳ .

Ամիրայից ժամանակին երբևին ազգային գործերը երեսի վրայ մնալով ազգայնոց վնաս կըլլար , ասոր առաջքը առնելու համար էնապիսի որքի ելլելով հաստատեցին Գերագոյն և կրօնական ժողովները , և որով ժամանակ մի ազգը կառավարուելէն հտքը , այլ ևս կամեցան բարեքման մէջ դնել ազգային վարչութիւնը , ուստի տրամադրեցին Սահմանադրութեան կանոնները , և տուին Տէրութեան Գուռը վաւերացնելու համար , իսկ Տէրութիւնն նկատելով ազգայնոց սահմանադրութեան գործադրելու անկարելութիւնը , ուստի այժմ չէ ժամանակը ըսելով վար դրաւ , և բաւական ժամանակ անվաւեր մնալէն հտքը բողոքներէն Բ. դուռը անհանդիստ ըլլալով , իսկոյն վաւերացոց և տուաւ , որպէս թէ ըսելով *առե՛ք շայն իւրեւնեան քոյնը որովհետեւ Տերութիւնը լաւ զիտէր սահմանադրութիւնը օգտակար ըլլալը ազգին մէջ , չուզեց որ ազգին մէջ երկպառակութեան և խռովութեան առիթ ըլլալով , ազգը վնասուի , ինչպէս որ կը կարծէր և այնպէս ալ եղաւ , զի սահմանադրութիւնն ինքնին անկարող գոլով գործադրութեան մասին , ուստի ընկաւ անկիրթ շահախնդիր ոմանց ձեռքին ներքեւ սկսաւ չարչորուիլ :*

Եւ որոց չնորհիւ ուր որ չկար խռովութիւն , հոն եղաւ մեծ խռովութիւն , երկպառակութիւն և նիւթական



վնասներ, զի մատնեցաւ Սահմանադրութիւն իրեն կանոններով և յօդուածներով Նաբուգոթոնոսարին ձեռք :

Վասն որոյ լրագրաց թերթերը սկսան աղաղակել թէ Սահմանադրութիւնը հողեւարք է, քանզի լրբավար և բռնավար շահախնդիրներու ձեռք խաղալիք եղած է տես Մասիս թիւ 2059 :

Վայ առ Կոնստանտինոպոլիս Նոր դար թիւ 2131 : Եւ ոմանք ալ սկսան դէպ ի գաւառացին աղաղակել թէ, Գաւառացիք յեր գլխուն ճարը նայեցէք առաջ ճշմարտութեան գոյնով կը ներկուի կոր, Վարչութեան շահագործութեան կէտն ակնբերու կը փայլի. 25 անձանց ձայնով 200 անձանց ձայնը ինքզինքն կուտան. եւ այն. տես Հայրենիք թիւ 129 130 137 թերթերը : Քանզի Արտիստիկ երկաթի ձեռքով ազգային ծովը խառնելով պղտորեցին, որ ուզածնուն ձուկը բռնեն, այսինքն շահագործ կանքերնին կատարեն : Եւ եթէ մէկն արգելք ըլլալով չհամաձայնէր իրենց կամաց, զանիկայ ալ 36 կտորեայ հայելի ով պիտի այրեն, ինչպէս որ զոմանս այրեցին, տես Ծառ. (38) թուանշանն :

Ալ ասկէց աւելի պատիժ չկրնար ըլլալ սզգի մը, երբոր իրեն Վարչութեան ղեկը շահագործ ոմանց մարդոց ձեռք կիցնայ, և Սահմանադրութեան օգտաբեր կանոնները չարաչար վիրաւորուելով այլ իմն եղանակի մէջ կը դործադրուի ի վնաս Հայ ազգութեան, ասոր բժշկուելու դեղ և դարմանը Ծառ. 39 թուանշանէն առ և դարմանէ, յետ պնտրիկ աճապարէ 24 ըզ. պատիժը բժշկելու աշխատիր :



ՔՍԱՆ ԶՈՐՍ ԵՐՈՐԴ ՊԱՏԻԺ ԽՌՈՎՈՒԹԵԱՆ  
ՏԳԷԴ ԱՆԴԱՄՈՑ ՈՄԱՆՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏԻԺ ԻԴ.

Շահագործ ոմանց սիրտը գիշեր ցերեկ անհանգիստ ըլլալով, և բոլոր գործքերէն դադրած միշտ կըսպասեն այն աւուր, որ ըսեն, հրամայէք, երեսփոխան, քաղաքական և թաղական ժողովոյ անդամ ընտրելու ցուցակ շինել. ան ատեն պիտի տեսնաք, սրճատուններու և գինետուններու մէջ շահագործութեան հասարակութեան օղիով գինով և սուրճով բրածնուն ջերմաջերմ պատիւները, և որով կուսակիցները շատցնելով քուէ կը վատարկի կըլլայ ժողովոյ անդամ, և կը բազմի յաթոռ, և կսկսի սնտոփ վիճաբանութիւններ հանել. ժողովականներուն գլխուն ցաւ և տեսնուելիք գործերուն արգելք. ժամանակի կորստեան պատճառ ըլլալ, ուստի գաւաթ մի օղիով և գինիով և սուրճով ընտրուած անդամները հազիւ թէ այսքան գործունեայ կրնան ըլլալ, ով խեղճ հասարակութիւն, իրեն մահու և կենաց թէլը մէկ գաւաթ օղիով և սուրճով կը վաճառէ, ուրեմն փութաց մուտ Ծառ. 40 թուանշանը առ դեղը և ողջացուր ատցան ալ, և ապա 25 ըզ. յաւը բշխելու աշխատիր :



ՔՍԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԻԺ ՀԱՆԳԻՍԻՆ  
ՈՐ ՏԱՅ ՓՈՐՔՈՒՄ ԾԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՂՏԻՆ

ՊԱՊԻԺ ԻԵ.

Բնականաբար մարդիկ իրենց կրկարութիւնը և ան-  
ձերնուն հանգորութիւնը, աւելի ողջախոնութեան մէջ  
կրնան գտնուի քան թէ ուրիշ որ և իցէ առաքինու-  
թեանց մէջ ուստի պատիժ կը համարուի այն մարդոց և  
կամ այն ազգին, որոց բօլորտիքն ցանկութեան աղտին  
փորձքման պատճառները կտակեալ պատրաստ կը գտնէ  
և կունենայ, ահա ատ միասաբեր պատճառները տես-  
նուեցաւ Հայոց Ոստանադրութեան տարեդարձի նոր  
հաստատուած տօնախմբութեան օրը: Ար մինչև անգամ  
օտար ազգեր ոտքի ելնելով, գունդադունդ փութացին  
ոմանք Ինթիսապի կամուրջի գլուխը և մէջը, և ոմանք  
ի Պէյքօզ գբօնելու համար հայոց նորահաս ԱԿ տարե-  
կան մանչ և աղջիկները, ուր որ վարժապետք և վար-  
ժուհիք զարդարեալք հանդերձ կրգերով, կրկինք և կր-  
կիր թնդացնելով թաղերէն գալով շողենաւը կը մտնէին  
Նոյնպէս մանկամարդ կանայք, և չափահաս օրիորդներ  
խառն ընդ նորահաս կրիտասարգաց, խօսելով բերկրա-  
նօք և ծիծաղադէմ շարժմունքներով, շողենաւին մէջ  
կը մտնէին:

Թողումք կրկին տեսակօք արբեալ ըլլալին, և Պէյ-  
գօզ կրթալ և վերադառնալին, ճանապարհներուն մէջ  
հանդիպած կրիտասարգներու և սրիկաներու անպատեհ  
խօսքերը և վատ հայեցուածքին մեղքերը. Թողումք Պէյ-  
գօզի դաշտախայրին մէջ, արք և կանայք, կրիտա-

սարգք և կուսանք. օրիորդք և մանկունք խառն նըս-  
տել, ուսել և ըմպել և արբենալով շրջելին:

Թողումք օտար ազգաց և մեր ոմանք կրիտասարգ-  
ներու և սրիկաներու խմբովին օրիորդաց և պատանե-  
կաց և մանկամարդից շուրջը պատեղին և վատ հայե-  
ցուածքով հայելին, և Քրիտոտնէական սուրբ Կրօնքին  
նախատինք ըլլալին, և բարոյաբանութեան զեղծմունք  
բերելու պատճառ և իւրաքանչիւրոց ցանկութեան աղ-  
տին և կրից փորձքման տեղի տալին, զի ելէ + հայ  
է կէ մարք առ է ցանկանալ, ադէն շնացաւ ընդ նա է  
որտէ իւրա: Մ. Ե. 28:

Արդեօք մէկը կրնայ կրաշխաւորել որ կրիտասար-  
գաց մտքէն ցանկութեան մեղքեր չանցնելու վրայօք,  
ո՞վ կրնայ կրաշխաւորել կթէ այդ հանդիսին մէջ սուրբ  
Աւետարանին դէմ մեղքեր չգործուելուն, և ասկէ ի դատ  
հապա նիւթական միասնները, ո՞ւր թողումք, զայն որ  
տարեդարձին օրը Բերայ պատահած հրդեհն տուաւ հան-  
դէսին կրթողներուն, որ չկրցան հասանիլ և հրդեհէն  
ազատել իրենց գոյքը. և հապա պանդուխդ գաւառա-  
ցիք. որ իրենց ամսական և շաբաթական վաստակին  
արբենալով շուայլեցին: Գծբաղդաբար ոմանք կրդրնե-  
ալ ատ հանդիսին մէջ գտնուելով անպատուութիւն քա-  
հանայական ստտիճանին և դայթակղութիւն հասարա-  
կութեան, և ահա այս անցարմար շորժումներէն, ազ-  
գայնոցս թէ ողջամտաց և թէ Տէրութեան նախարար-  
ներուն սիրտը կարծեմ թէ բաւական ցաւ զրաց:

Ահա այս ցաւն ալ բժշկելու համար, տես զեղ և  
դարմանը Ծառ. 41 թուանչանը: Եւ ապա 26 ըզ. պա-  
տիժը վերցնելու Հայոց վրայէն աշխատիր:

ՔԱՆ ՎԵՑԵՐՈՐԻ ՊԱՏԻԺ ԱԶԳԱՅԻՆ  
ՁԻՔ ՎԱՐՁ ԱՐԴԱՐԻՆ ՇՈՒՅԼԵՆ ՎԱՏԻՆ

ՊԱՏԻԺ ԻԶ.

Արդարեւ ազգային պատմութեանց մէջ եւ թէ իննրկայս կը տեսնամք անհաւատարիմ եւ խարդախ պաշտօնէից վարձատրութիւնը աւելի ճոխ եւ փառաւոր . քան զհաւատարիմ եւ անխարդախին , տես Ծառ. 42 թուանըչանն , ահա արդարութիւն չեղած վարչութեան պտուղը : Ուստի արդարութիւն չգտնուած մարմինը անհաստատ է եւ քայքայուած : Ուր որ երկպառակութիւն խռովութիւն , զրկողութիւն եւ անմիաբանութիւն տեսնաք . զիտցիք որ արդարութենէ հեռացած անիրաւութեան մէջ են . եւ որոց կործանումը մօտ է : եւ շատերն ալ կործանուէր են :

Ահաւասիկ Ասորոց , Քաղդէացոց , Մարաց , Հրէից , Հայոց եւ Վրաց եւ այլ թագաւորութիւնները , որովհետեւ որդոր է որէր և որդորսնէան սիրէ , ո՛ւր արդարութիւն , անդ սէր եւ միաբանութիւն , ապա թէ ոչ , կործանումն մեծ յոյժ . վասն զի հաւորորժն շարժն է , աւորէ և շար . իսկ իտորդախն փառս և պարէս և ճառ : Ապա ուրեմն յառաջ երթալիք չունին . եւ զուր ջանք . եւ անօգուտ փաստակ , ահա ասկէ մեծ պատիժ չըլլար որ եւ իցէ ազգին , որոց վարչութեան մէջ արդարութիւն չունի . այս ցաւն ալ բժշկելու դարմանը տես 43 թուանչանը , եւ ձեռնարկէ 27 թղ. պատիժն ալ անհետացնելու աշխատիլ որ է :

ՔԱՆ ԵՕԹԵՆ ԵՐՈՐԻ ՊԱՏԻԺ ԱՆՀԱՏԻՆ  
ՈՐ ՈՉ ՃԱՆԱԶԷ ԶԱՓ ԻՒՐՈՅ ԱՆՁԻՆ

ՊԱՏԻԺ ԻԷ.

Ասկէց 50 տարի յառաջ , ինչպէս որ տեսանք , Հայոց տան զաւակները իրենց ծնողաց եւ բարերարներուն հնազանդ ըլլալով օրհնութիւն եւ գովութիւն կը վայելէին , եւ ազգային ծէրերը յարգելով կը պատուէին , Եկեղեցոյ օրինաց հպատակ եւ կակնածէին , եւ շնորհալի վարուց մէջ կը տեսնուէին . իսկ 50 տարիէն աստին այլակերպեցաւ , ալ ո՛չ ծնողաց պատիւ , ո՛չ ծերոց յարկակերպեցաւ , ալ ո՛չ ծնողաց պատիւ , ո՛չ ծերոց յարգանք , ո՛չ Եկեղեցոյ հնազանդ եւ ոչ զչափ անձին ճանաչել , այլ եւ իւրաքանչիւր ոք ի պատիժ ինքեան , ուսան գնալ զհետ օտարին եւ կամաց իւրեանց , ինչպէս առաքեալը կըսէ այլ շախմախացանն զնեւ ոչ է բարն . զի երբեքս և կա՞ն զնեւ , զի նոցա շախմախացան լինեցէ . Գաղ. Գ. 17 : Թէեւ բարի եւ չափերնին ճանչցող զաւակներ ալ կան , զի որտոր որդորոց ոչ հարցն . բայց մեծագոյն մասամբ չափերնին կորսնցուցած մոլորեալ կը շրջին , սրտացաւութիւն ծնողաց եւ բարերար ողջամտացն , եւ այս պատիժն բժշկելու դարմանը տես Ծառ. 44 թուանըչանը եւ դարմանն . եւ ապա 28 թղ. պատիժը բժշկելու աշխատիր :



ՔՍԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏԻԺ ՑԱՒԱԼԻ  
ՎՆԱՍԵԼ ԲԱՐԻՈՑ ԻՒՐՈՑ ԸՆԿԵՐԻ

ՊԱՏԻԺ ԻԸ.

Այ ասկէ ծանր պատիժ չկրնար ըլլալ ազգիսն երբոր մեծագոյն մասամբ իրարու բարի յաջողութեան վրայօք նախանձելով, թէ յայտնի եւ թէ գաղտնի մնասել ընկի- իին . տես մնասեալները 45 թուանշանը, է որ նիւթա- պէս, եւ է որ բարոյապէս, եւայն. թէեւ բարի յաջօ- ղութեան ընկերին փափագող եւ կամօցող ալ կան, բայց սակաւք են, ասոր յառաջն առնելու եւ բժշկելու դեղը տես Ծան. 46 թուանշանը եւ աշխատիր ողջացունելու, եւ յետ աջտրիկ մտիկ ըրէ քսան ինն րդ. պատիժը :

ՔՍԱՆ ԻՆՆ ԵՐՈՐԴ ՊԱՏԻԺ ԶԱՐ ԳՈՐԾՈՑ  
ԶԱՆՍԱԼ ԱՍՏՈՒԹՈՑ ԱՂՕԹԻՑ ՄԵՐՈՑ

ՊԱՏԻԺ ԻԹ.

Որչափ որ Աստուած յառաջագոյն հայցց ազգը կը սիրէր եւ կը խնամէր, եւ նորա խնդիրը կ'կատարէր, եւ հիմայ ալ անոր հակառակը կը տեսնամք, որ մինչեւ անգամ աղօթքնիս չի լսեր . ինչու որ մեր քով արդա- րութիւն եւ ճշմարտութիւն, անկեղծ սէր եւ Աստուած- պաշտութիւն, գոնէ ըստ բաւականին անգամ չէ մնա- ցեր . վասն որոյ վիշտք նեղութեան դպին գտին զմեզ քանզի սուրբ գիրք կրտէ . Դո՞ր արարէ՛ր որքոյն եւ այրոյն

Իրաւուն արարէ՛ր որննկին և խնարհին . Սդ. 2Ը. 3: Աոյծ զկնճիւնն անիրաւութեան . քակեա զխարդախութիւն վաճառաց քոց, եւ զսինայն յարհուկն ունիւրաւութեան պ- րաւեա եոյ, ԾԸ. 6: Ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի՛ պակասեացի. Ա. 4. Գ. 3: Հաւարտ ասանց քործոց Ժ- եաւ է ՅԿ. Բ. 26: Քննեցէք զանձինս ձեր եթէ կայք ի նոյն հաւատս. Բ. Կորն. Ժ. 5: Մարդ փորձեացէ զանձն իւր եւ ապա կերիցէ ի հացէ անտի, Ա. Կորն. ԺԱ. 28:

Ահա վերոյիշեալ սուրբ գրքի հրամանները մեծա- գոյն մասամբ մերքով կատարուած չըլլալէն զատ, ամէն օր ալ Աստուծոյ առջեւ ըրածնուս աղօթքը մեղքի կը դառնայ . Աղօթէ՛ր նորա ի Դղա Դորէ՛ն . Սդ. 108:

Ահաւասիկ Աստուծոյ կրտսնք, եղէցէ կա՛ր + ու, ու Աստուծոյ կամաց հակառակ մեր կամքը յառաջ տանելու կաշխատինք . եւս Աստուծոյ կրտսնք, Խո՛ւ Դղա զԴորո՞ Ժք, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց . եթէ մենք մեր ընկերով պարտքը կը թողումք նէ, ի՛նչու հա- մար խոտովութիւնը եւայն. չի վի՛րնար, միանգամայն կը ստենք Աստուծոյ . վասն զի, ոչ Աստուծոյ կամաց կ'հաւ- զանդինք, եւ ոչ ալ մե՛զի պարտք ունեցողին պարտքը կը չնորհենք . եւայն. վասնորոյ եւ Աստուած ալ չի լսեր մեր աղօթից թէ մեծամեծ հանդէսներով աղօթք ընեմք քանզի Աստուած նախ քան մեր հանդէսէն յառաջ, մեր սրտերը կը քննէ, եւ զիտէ մինչեւ անգամ մեր չգործած գործուելիք մեղքերը, զանգործն ի՛ր Դեմն ալ + ու Սդ. 138. 15: Ուստի կրտէ Աստուած . զի եթէ ոչաշուկեացին ոչ Լո- այց նոցա . եթէ պահեսցեն ոչ լուայց խնդրուածաց նոցա, Ինչու համար չի լսեր, անա տես հետեւեալ խօսքերը թէ ի՛նչ կրտէ . զի Լաբէյնն զԻղաւ իբրեանց իբրեւ զԻղա զը- րոնութեան . եւ հաւատք ոչ զօրացան իվերայ երկրի . ի

չարեաց ի չարիս ելին , եւ զիս ոչ ծանեան . . . զէ մ-  
 զեւայն եղբայր իսթելով իսթէ , և մօշնայն քարեկամ նէնքո-  
 թեամբ քնայ . . . ուսան լեզուք նոցա խօսել զատուծիւն,  
 վանորոյ դու մի կալ յաղօթս վանն ժողովրդեանդ եւ  
 մի՛ խնդրեր զողորմութիւն զի ոչ լսեմ քեզ եր՛ջ. Ժ. 1:  
 եղէկ. Ը. 18: եր՛ջ. Ժ. 12: Թ. Գ. Է. 16: Ար՛ջ. Ե. 10:

Ահա բաց թուանշան գլուխները եւ տես: Վանորոյ  
 ծանր պատուհաններ մեր վրայէն չեն պակասիր եւ մեր  
 աղօթքն ալ չի լսուիր , պատճառ մեր վատթար վար-  
 քերնիս է : ճանապարհո՛ւք + և քանց + քանց + քանց ըստ  
 մօշնայն եր՛ջ. Գ. 18: Ձի ճանապարհք տեսան ուղիղք  
 են , զի արդարք գնացեն ի նոսա . եւ ամբարիշտք ար-  
 կարացին , ի նոսա , Ովո՛ւ Ժ. 10:

Իրաւի Աստուած սիրած ժողովրդեան մեղքին հա-  
 մար կուտայ նեղութիւն , զի շըր քերէր քեր , իրոքէ և  
 քանջէ զմօշնայն արդէ շըր ընդունի . Եբր. Ժ. 6: Որ մինք  
 զգատացեալ ուղիղ ճամբուն մէջ գամք , եթէ չզղջամք  
 եւ չապաշխարեմք չմիտի թողուի մեզ , եւ եթէ ասպաշ-  
 խարենք , Աստուած ալ պիտի դադրեցունէ մեր վրայէն  
 վիշաք , ինչպէս որ կրսէ եր՛ջ. Ժ. 7. « եթէ վախճանս  
 « խօսեցայց ազգի եւ թաղաւորութեան բառնալ զնոսա , »  
 « . . . եւ դարձցի ազգն այն ի չարեաց իւրեանց , զըր . »  
 « ջացայց եւ ես ի վերայ չարեացն զոր խորհեցայ առնել »  
 « նոցա » :

Հիմայ լսեցիր գաւակս Աստուծոյ խօսքերը , այո՛ ,  
 ուրեմն խելքդ գլուխդ բեր , աշխարհի բաղամարդ մե-  
 ղաւորներու վատ ճամբան չերթաս , թէոր անոնք շատ-  
 տոր ալ ըլլան , դարձեալ Աստուծոյ չեն հաճելի , այլ եւ  
 իրրեւ կաթիլ մի դուլ են Աստուծոյ առջեւ . ինչպէս որ  
 կրսէ , Եպ. Թ. 15: Մեղաւորաց բաղմութիւնը գովայի

կաթիլ մի ջուրի չափ են Աստուծոյ մօտ . որ կորուստ  
 կերթան : Ըստ այնմ թէ քաղաքս են կոչեցեալ և սկաւտ  
 են ընդդէմս եւ արմատք արդարոց ոչ հատցի , բայց ա-  
 մէն մէկ արդար ինքզինքը կրնայ աղատել իրեն արդա-  
 րութեամբ , անզեղջ մեղաւորին օգուտ մի չունի , ինչ-  
 պէս որ Նոյ Նահապետ ջրհեղեղին ժամանակի անզեղջ  
 մեղաւորներուն , Ղովա . Աբրահամ . Սողոմացոց օգուտ  
 մի չկրցան ընել ինչպէս որ կրսէ եղէ. Ժ. 14: Նոյ . Յ. ք.  
 և Գանիել . և նոսա արդարութեամբ իւրեանց ասե-  
 րէր , ուստերք եւ դստերք նոցա ոչ ապրեսցին , եւ եր-  
 կիրն եղիցի ի սատակումն :

Ասոր պէս ալ Գաւիթ մարգարէն կրսէ . Եղբայր ոչ  
 էրէկ և ոչ էրէկ շքարք Սր՛ջ. Թ. 8: Ուրեմն Աստուած մեր  
 արտաքին քաղցր կզանակ երգերուն , եւ ծանրազին  
 զգեստներուն եւ արարողութիւններուն չի հաճիր , որ-  
 քան որ մեր սրտերու մաքրութեան եւ սրբութեան կը  
 բաղձայ : Ա. Թ. 9. Ժ. 7: Ահա ասոր դարմանն ալ տես  
 Ծած. 47 թուանշանը , եւ դարմանէ . յուսկ յետոյ աշխա-  
 տիր 30 րդ. պատիժը բժշկելու , որ է հետեւեալն :

ԵՐԵՍՈՒՆ ԵՐՈՐԿ ՊԱՏԻԺ ԱԶԳՈՒԹԵԱՆ

ԻԱՌՆՈՒՐԿԻ ԶԱՒԱԿԱՅ ԱՆԳՍՏԻ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՊԱՏԻԺ Լ.

Ինչ վարչութիւն ըլլայնէ ըլլայ կրոր իրեն իրաւա-  
 սութեան ներքեւ գտնուող հոգեւոր եւ մարմնաւոր ժո-  
 ղովոյ անդամներուն մէջ ոմանք իտանաւորք շահախոսիչ

և Խորհրդի անդամակիցներ ունենայ , ալ այնուհետև անկարելի կլինի վարչութեան գործելը , և անառակը խրատել , բարեկարգութիւնը հաստատել :

Ինչպէս որ տեսանք եւ կը տեսնենք մինչ ցարդ մեր Պատրիարքարանի եւ դուրսի Առաջնորդարաններուն մէջ , և որոց ազագաւ ողջոյն ազգայնոցս հասած վնասները , տես ահաւասիկ 48 թուանշանը և Հայկի գործոց գրքին մէջ , որ տպեալ է 1864 ի Պոլիս : Եւ ահա այս պատիժն ալ Հայոց սերունդէն հեռացունելու համար պէտք է , Ծան. 49 թուանշանը շօշափել և անկէջ դեզ և դամանը առնել և բժշկել : Ապա թէ ոչ յոյժ ցաւալի է հայոց կացութեան վիճակը . որոնք որ մինչ ցարդ տնուղղայ գնացին , չարին խաբուեցան և Աստուծոյ-խորհուրդը չճանչեցին . ինչպէս որ կըսէ . Իմ. Բ. 21 . և ոչ ճանեան զիւրհոսրոս Աստուծոյ , և ոչ վարչոց սինկալան սրբութեան . բայց սա գլուխը լման կարդա :

Վասն որոյ 30 տեսակ և աւելի ևս թշուառ ցաւօք կը տատապի և կը նեղուի Հայոց տունը տեսակ մի թըշուառ շահախնդիք կերտոք և Ինտահասան ոմանց մարդոց ձեռքին տակ :

Որ այսպիսի մարդոց ձեռքով կործանեցաւ Հայոց պայծառ տէրութեան դասն , որ հիմայ ալ ոմանք մարդիկ , Հայոց յառաջ չերթալու և տէրութիւն չհաստատուելու պատճառ , Քրիստոնէութեան կրօնք և կղերնեւորն եղած են և կը լինին կրսնն եղեր :

Որ ատիկայ շատ սխալ կարծիք է , 36 միլիօն ժողովուրդէն հիմայ 4 միլիօն կըսեն , արդ 32 միլիօն ժողովուրդը ո՛ւր դնաց . ոչ տեղ մի ալ չգնաց , այլ և ո՛ւր են , դարձեալ հոն են , այսինքն Հայաստանի մէջ , բայց կրօնքնին փոխելով , ազգութիւննին և անուննին ալ փոխ-

ուեցաւ : Եւ են այժմ արհեստիւ երկրագործ և խաշնաբաժ , կրօնքնին Մահմետական , եւ այլն . բնական զիւղերուն մէջ յայտի կերելի Հայոց խանդարուած Եկեղեցիք Վանօրայք , Գերեզմանատուն և արձանք : Անոնք որ կրօնքնին չեն փոխած , նոյն երկրին մէջ Հայ անունով կապրին մինչև ցայսօր :

Ուրեմն կրօնք չէ պատճառ , չյառաջանալուն ազգին Հայոց , այլ և Ինտահասան , Գործէք և շահախնդիք կերտոք մարդոց վարչն և Բարոն է պատճառ :

Ահա տես միեւնոյն ժամանակի և երկրի մէջ չորս թագաւոր կը նստին , Վան . Կարս , Անի և Գուլիս շինից մէջ և հակառակ իրարու :

Մտիր Հայոց պատմութեան մէջ լաւ մի պիտի գիտնաս , կրօնքն և կղերն են պատճառ կորստեան հարըստութեան Հայոց . և թէ վերոյիշեալ աշտակիրներուն նման ոմանք խառնուրդ շահախնդ հայերն :

Ուրեմն կեցցէ կրօնն և կղերն . որ մինչ ցարդ հայ ազգութիւնը անկորուստ պահելէն ետքը , իրեն քահանայապետութեան թագ և Գաւազան և Աթոռը հաստատուն պահէր . և կը պահէ և պիտի պահէ ալ չնորհիւ օծութեան սուրբ հոգւոյն , զի կնքեալ է թէ դրոսնիդ դեռնոց զեռն Գաղիսահարեացէն Մր. ԺԶ. 18 :

Եւ եթէ հակառակող դէմ դնող մի ալ կրօնի և կղերականութեան առջև ելնելու ըլլայ , զանի ալ պիտի խորտակէ . և ոմեմայն որ ընդ հարցի ընդ վեճն ընդ այս խորհուրդն . և յորոյ վերա առնից հաշտեացէ զեռն . Գ՛. Ի. 18 :

Ուրեմն ըսենք թէ երկնիք (Հայկազեան ճշմարիտ որդիք) հօր Գործէք չէ հաճեցաւ հայր յեր Գալ յեղ զարտայանիւն . Գ՛. ԺԲ. 32 : Քանզի ազգ և աղանդք եկեղեցին , և գնացեցին , և մայրք Վիրամանու խոնարհեցին և ան-

հետ լիցին , իսկ դու տունդ Հայկայ մի երկնչիր , զի դու ի կրօնս Քրիստոնէութեան . և կրօնն ի քեզ ընակեալ մնասցես յաւիտեան , զի հիմունք կրօնիդ և ազգութեանդ ի Քրիստոս Յիսուս եղեալ կայ , և առատացեալ պտղաբերեսցէ , և պտուղն կացցէ յաւիտեան , և տերեւ ողջախոհ կղերականութեանդ մի՛ թափեսցի , և շք ինչ արօրցես ողջամտութեամբ յաշտեցի՛ ինչ , քանզի ի ժամուհտուր և տաս , և տացես զՔրիստոնէութեան քաղցրածաշակ պտուղն , և Աստուածապաշտութեան անուշահամ արդասիրք : Ուրեմն զօրացիր և քաջ լիւր , զի որք զանց առնեն զկրօնից և զազգասիրութենէ հայկական տանն , նոքա չեն հարազատ սերունք և զաւակք Հայկայ և Արամայ , այլ և օտար եկամուտք և խառնուրդք , որ զիք Աբբայ և ոչ Սարայի : այսինքն միայն մկրտութեամբ սուրբ աւագանի ի հաւատս Քրիստոսի միացեալ ընդ հայս , անուամբ և եթ հայացեալ են . տես ահաւաստիկ Յակոբայ աստուծաբանի Մեկ . Նրկ . երես 740 . 9 . 8 : Եւ Չամչեան Հայոց պատմ . Ա . հատոր 350 . 446 : Խոր . 2 . Ա : Այս հայացեալներէն . որոնք որ Քրիստոսի հաւատոցն մէջ հաստատ մնալով աւետարանական հրամանները պինդ պահեցին , գեր քան հարազատ զորդիսն Հայկայ և Արամայ փայլեցան աշխարհի , զոր օրինակ , Տըրդատ արքայն Հայկայ և Քրիզոր Անակեան . Լուսաւորիչն տանն Հայոց թէպէտ և ինքեանք ի տանէ Արշակունեացն էին : Նոքա իսկ որք ի հաւատոցն թուլացան միանգամայն ի կորուստ գնացին , որպէս Վասակ Սիւնի վեհա , Մերուժան և այլն և այլն :

Եւ հիմայ չորս միլիօն մնացած հայերուն մէջն ալ Աղարի որդիք թուլացեալ ի հաւատս Քրիստոսի գանուելով և հարազատ Հայկայ զաւակներէն ալ մոլորցնելով ,

ապօրինաւորութեան մէջ կը քալեցունեն , վասն որոյ 30 տեսակ թիրեւս աւելի ցատոց և պատժոց ենթակայ ըրեր են ազգին մեծագոյն մասը , և սակաւք են որք գտանին անարատ , արհարտ արբարոյ ոչ հարցի Աւ . Ժ . 3 . բայց ինչպէ՛ս առ ընդանի՛ Նոր . Մ . Ժ . 36 :

Վասն որոյ ոչ կամիմ մտիթարիլ . քանզի մեծագոյն մասամբ որդիք Հայկայ չեն ի հաւատարմութեան . ըստ մարդկութեան և ըստ կրօնի , և ըստ հաւատոյ , որ յԱստուած , ուստի յոտից մինչև ցգլուխ չիք ի նմա առ ողջութիւն զի ծանեան զԱստուած և ոչ իբրու զԱստուած փառաւորեցին , Հմ . Ա . 6 . և մարդ ծնան յաշխարհի և ոչ մարդկութեամբ գործեցին արդարութիւն և խօսեցան զճշմարտութիւն , ուստի կամովին անկան ընդ վշտօք և տառապանօք չարաչար նեղութեանց , և բազմատեսակ ցաւօք և պատժօք , որպէս և տեսիք յոյժ համառօտակի ի մէջ զըքոյկիս և եթ միայն 30 ցաւոց տեսակն , և որոց զարմանն ունիք տեսանել ի վերջն :

Իսկ հիմայ տեսնենք սա մկրտութեամբ սուրբ աւագանի հայացեալ ժողովուրդը , ո՞ր ազգէ և ո՞ր ցեղէ եկած զաւակացն հետ միացած են :



ւորութիւնը . որոյ առաջին թագաւորն էր . Աշտա Ա .  
և վերջինն Գաղիկ :

Լման 160 ամ տեւեց ատ տէրութիւնը , և վերջացաւ .

**3.** Քրիստոսի ծնունդէն 533 յառաջ Հայկազանց  
ցեղէն 9 ըզ թագաւորը . Տիգրան Ա . երբոր Մարաց թա-  
գաւոր Աժդակը սպանեց . տասը հազար զերի , և  
Աժդահակին բոլոր ընտանիքները , բերաւ Հայաստան  
Արարատայ գաւառին մէջ դրաւ , և ըսուեցան վի-  
շապազունք , տես 252 Հո . Ա . կրես 110: Ահա ասոնք  
ալ անունով Հայացան :

**4.** Քրիստոսի ծնունդէն 149 տարի յառաջ Ար-  
շակունեաց ցեղը , Աբրահամու և նորա քետուր կնօջմէ  
յառաջ եկած է այսպէս , Աբրահամ , և նորա որդին  
Յեկսան , Յեկսանայ որդին Սաբայ , Սաբայի որդին Թէ-  
ման , Թէմանայ որդին Գադան , Գադանայ որդին հռա-  
զուել . որ է Աբրահամէն հինգ ճիւղ , որոց ըսուեցաւ ,  
Պարթեւք , իրենց անձնեաց և քաջ ըլլալուն համար :

Երբոր Պոլխարայի մօտ բահլ (պալխ) քաղաքը առին  
ըսուեցան Պահլաւունիք . եւ երբոր Ա . Արշակ մեծ զօ-  
րացաւ , եւ անկէց ետքը Արտաշէս եւ Արշակ Բ . բոլոր  
Պարսից իշխելէն ետքը իրեն եղբայր Վաղարշակը կար-  
գեց Հայաստանի տիրօղ թագաւոր , եւ դրաւ ամուսն  
ի Մծբին Ժեպէն ուստի ըսուեցաւ Արշակունեաց տէրու-  
թիւն , և թագաւորութիւն , և մէջէն որոնք որ քրիս-  
տոնէութիւն հաւատքին մէջ հաւատարիմ գտնուեցան ,  
Հայոց հաւատարիմ հարազատ զաւակներուն հետ հաւա-  
սարեցան , ինչպէս Աբգար 7 երորդ . և Տրդատ 17 ըզ .

ՕՏԱՐ ԱԶԳԵՐԷՆ ԵԿՈՂ ՀԱՅ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ  
ԽԱՌՆՈՒԱԾ ՀԱՅ ԱՆՈՒՆԸ ՎՐԱՆԻՆ ԱՌՆԵԼՈՎ  
ՀԱՅԱՑՅԱԼՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՔՆ ԵՆ

**1.** Քրիստոսի ծնունդէն 705 տարի յառաջ . Ա-  
տուրոց Սինեքերիմ թագաւորի որդիքը , Աշրիմէլէք և  
Սանասար , իրենց հայրը Նինուէ , Ժոնու . արքունի  
պալատին մէջ սպանեցելով կը փախչին կուզան Հայաստան  
Հայկազանց Պարոյր Հայոց թագաւորին քով , և կը բնա-  
կին Սասուն գաւառին մէջ , և ասոնցմէ յառաջ կուզան  
Արծրունիք , Քնունիք , Հաւունիք և Սասունիք , ցեղ և  
նախարարութիւնները , ստեղծման աշխարհի 3295  
թուականին :

**2.** Քրիստոսի ծնունդէն 600 տարի յառաջ , Նա-  
բուզոթնոստոր արքայն , և մեր Հայկակ Բ . Հայոց թա-  
գաւորը , երբոր գնացին Նրուսաղէմ քաղաքը և երկի-  
րը առին , Նաբուզոթնոստայ բռնած գերիներու մէջէն  
Շառբաթ անուն Հրէից իշխանը իրեն ընտանիքներովը  
մեր Հայկակ թագաւորը ուղեց Նաբուզոթնոստորէն . ա-  
ռաւ և բերաւ Հայաստան , և ասոր ցեղը շատնալով  
Հայ անունը վրանին առնելով , Վաղարշակ թագաւորին  
օրով , Բագրատունի անունով նախարարարութիւնը հաս-  
տատուեցաւ , և Քրիստոսի 857 թուականին , ասոնցմէ  
յառաջ եկաւ Բագրատունեաց անունով Հայոց թագաւ-



Արշակունեաց , Հայոց թագաւորները , եւ Անակ որ Սուրբնեան Պահլաւ կըսուէր , նորա որդին Գրիգոր Հայոց Լուսաւորիչ , եւ քեռ որդին Յակոբ Մծբնայ Ասորոց Լուսաւորիչ եւ հայրապետ , տես. Յակոբ Աստուածաբանի Նրկ. Մեկն. երես 968: Խորն. 2. Ա:

5. Քրիստոսի ծնունդէն 91 տարի վերջը , Արշակունեաց Հայաստանի վերայ իշխող թագաւորներէն 11 էրորդ թագաւորը , որն որ Սանատրուկի որդի Արտաշէան էր , երբոր ասոր կառնիկան համար , Ալանաց թագաւորի դուստր Սաթենիկը կին բերին , Ալանաց երկրէն շատ մարդիկ եկան Սաթենիկին հետ , եւ ահա այս եկամուտներէն Արտաշէս հաստատեց Առաւելեան նախարարութիւնը , եւ ասոնցմէ էին , Սուքիասանք , որք նահատակուեցան վասն Քրիստոսի հաւատոյն նոյնպէս , Հոլիւսիմանք եւ Ոսկեանք ի Հռոմէն եկած եւ նահատակուեցան. տես. Խոր. Բ. երես 55 Չմչ. Ա. հար. 296 եւ 342:

6. Քրիստոսի թուականին 120 տարի , Ամատունիք ըսուած ցեղը , որ Հրէից քաջ Սամիսոնի ազգականնութենէն ըլլալով , որ ատենոք Արշակ Պարթեւ իրեն երկիրը տարածէր , ճանաչուի կըսուէին :

Եւ ահա ասոնք ալ Հայաստան գալով , Արտաշէս թագաւոր ընդունեց զիրենք եւ բնակութեան տեղ տուաւ եւ ասոնցմէ հաստատեց Ամատունիք նախարարութիւնը որ Մարաց լեզուով Ամարոնիք եկամուտք ըսել է : Տես Բ. երես 54: Չամչեան Պատմ. Հատոր Ա. երես 350:

7. Թուականին փրկչին 283. ձեռնաց Արթուկ անուն թագաւորը ունէր դայակորդիս , մէկին անունը Բզդոն

Եւ միւսին Մամգոն , Բզդոն չարութիւն ընելով Մամգոնին , մատնեց զանիկայ թագաւորին , եւ համոզեց թագաւորին սիրտը , որ սպաննէ Մամգոնը , ուստի Մամգոն փախչելով եկաւ Հայոց Տրդատ Արշակունի թագաւորին քով , երբոր Տարօնի նահապետ Սլունկ իշխան անհնազանդ գտնուեցաւ Տրդատին , հրաման ըրաւ Տրդատ , ով ոք Սլունկը ողջ բռնելով իրեն բերէ , անոր կը խոտանայ Տարօնի երկրէն զիւր ազարակ եւայն տալ , երբոր լսեց Մամգոն այս օգտաբեր լուրը , իսկոյն գնաց Տարօնի երկիրը , որ է Մոշ. հոն տեղ ոչ թէ քաջութեամբ , այլ եւ խաբէութեամբ , ոչ թէ մինակ Սլունկ իշխանը , այլ եւ անոր Մատաղ մանկունքները եւ արու սերունդը միանգամ սուրէ անցուց եւ վերջ տուաւ , եւ փոխարէն ատ վատ գործադրութեան Մամգոնի , Տրդատ տուաւ անոր Տարօնայ երկիրը Եւ նստաւ հոն տեղ :

Եւ ահա այս ձեռնացի Մամգոնի ցեղէն հաստատուեցաւ Մամիկոնեան նախարարութիւնը , որ մինչեւ ցայսօր Մշոյ երկրին մէջ Քիւրտեր կան , որ կըսեն Քրթայ լեզուով ա՛մ աչիւրթե Մա՛թա՛ն է , այսինքն մենք Մամգոնի ցեղէ ենք :

8. Թուական փրկչին 285. Կարինեան Պահլաւունի սիրունդէն Կամսար անուն մէկը , պատերազմի մէջ գլխուն սկաւառակին մէկ մասը հարուածով մի կերթաց. վերջէն բժշկուելով գլխուն մէկ մասը կիսատ մնալուն համար , իրեն ըսուեցաւ Քամա՛ր այսինքն պակաս գլուխ որ ասոր ցեղին ալ Կամսարական նախարարութիւն ըսուեցաւ : Տես Չամչեան Պատմ. Ա. Հտ. երես 446

9. Գանք Ռուբինեանց վրայօք խօսինք , Գազիկ

սարճնուելէն ետքը , իրեն ազգականներէն Ռուբէն անուն  
քաջ մարդը Նիլիկիոյ Տարոս լեռներու մէջէն իրեն իշխա-  
նութեան զօրութիւնը դուրս տուաւ , Ա. Բարսեղ կա-  
թողիկոսին օրով , որ փրկչի թուական էր , 1080 : Որ  
տասը իշխան իրարու ետեւ յաջորդեցին , մինչեւ 1198  
Յուականի փրկչին . Լեւոն Բ. թագ դրաւ գլուխը և թա-  
գաւորեց . եւ իրեն ետեւ յաջորդեց Զապէլ թագուհին ,  
Փիլիպպոս , Հեթում Ա. եւայլն . մինչեւ Լեւոն Զ. Լու-  
սինեան վերջին թագաւորն , լման 16 թագաւորք յաջոր-  
դեցին իրարու ետեւ 295 տարուան միջոցին , որ Ռու-  
բինեանց տէրութիւն ըսուեցաւ :

Եւ անա ասոնց մէջ աւելի խառնուրդ և եկամուտ  
կը տեսնուի , որ հայրը Լառի և մայրը Հայ անունով Հայ :  
Մայրը Լառի , և հայրը Հայ անունով Հայ : Տես Զմէ. Գ.  
Հտ. երես 348 և 356 : Եւ մանաւանդ Յակոբ Առուածա-  
բան Նրկ. Մեկն. երես 740 և 41 : Լաւ կը բացատրէ  
Բագրատունեաց թագաւորներուն վրայօք և կըսէ այսպէս  
« Ի ժամանակս Վասիլ և Կոստանդեայ կայսերացն  
Յունաց . Ի Վան քաղաքի թագաւորք էին Հայոց , Սե-  
նեքերիմ , Գորգէն , և Աշոտ . Ի մկրտութեան Աշոտայ  
անունն Խաչակ կոչեցաւ , Գորգենոյն Խաչիկ . և Սենեքե-  
րիմին Օհանէս : Արդ տօքա ոչ էին ազգաւ Արշակունիք  
այլ ի քանանու սերեալք ի Նաբրովթայ ծննդոցն , յոր-  
դոց առաջնոյ Սենեքերիմայ Բաբելացւոց թագաւորի . . .  
է անց ի քրիստոնեայս և ի հայացեալ յեանորդան յիսա-  
հակ : և ի Գորգէն . և ի Խաչիկ , որք կոչեցան Սենէտե-  
րէտեան : Նոյնպէս Անուոյ քաղաքի թագաւորներուն Բագ-  
րատունեաց , և Նիլիկեացոցն Ռուբինեայ :

Պատմութեան մէջ Հայկայ արդար սերունդը յորդոց  
յորդիս մինչեւ Անուշաւան կը տեսնամք . Ահաւասիկ ,

Նոյ Նահապետ , Յարէթ , Գամէր , Թորգոմ , Հայկ , Ար-  
մինակ , Արմայիս , Ամասիայ , Գեղամ , Հարմայ , Արամ  
Արայ գեղեցիկ , Կարդոս Անուշաւան : Ահա Նոյէն 14 և  
Հայկէն 10 ճիւղ կընէ մինչեւ Անուշաւան : Եւ սորա ա-  
րու զաւակ չըլլալուն համար . Հայկայ ցեղապետութե-  
նէն , Պարէտ անուն նահապետը նստաւ իշխանութեան  
գահը , այսպէս 32 նահապետ իրարու ետեւ յաջորդեցին  
և հսկայորդոյ Պարոյր նահապետէն սկսաւ թագաւոր ա-  
նունով 17 թագաւորք իրարու ետեւ յաջորդել մինչեւ  
Վահէ վերջին թագաւորը , որն որ Աստուծոյ թոյլատու-  
ութեամբ . Աղէքսանդր Մակեդոնացին վերջացուց Հայ-  
կազանց թագաւորութիւնը , որ Հայկէն մինչեւ Վահէ ,  
2200 տարիի չափ ժամանակ տեսց : Եւ անկէց մինչեւ  
աս օրս ալ 2200 տարիէն աւելի ժամանակ մի ալ անցած  
է , և Հայաստան և թէ Հայկայ բուն արդար սերունդը օ-  
տարներու ձեռքին ներքեւ մնալով ճիշդ Հայկայ զաւակը  
ճանչել և գտնալը շատ դժուարին է բայց իմաստունի խօս-  
քին նայելով կերպով մի կարելի կըլլայ , ըստ որում որքէ  
հարազար շմանութեան հօրն յնստեան Բերէ . կըսէ : Ուրեմն  
ճշմարիտ Հայկայ վարքով և բարքով և գործով գրա-  
նուածը , իսկ Հայկայ արդար սկզբունքէն ըլլալը ինքզին-  
քը կը յայտնէ , հայկայ վարքը և բարքը և գործը , տես  
Խորենացւոյ եւ այլ պատմիչներու պատմութեան մէջ , և  
նոս տեղն ալ համառօտ կը ցուցընենք : Ահա :

Ա. Իրեն մասնաւոր անձին շահուն համար չխոնար-  
հեցաւ Բէլին հարստութեան և բարբարոսութեան եր-  
կըրպազութիւն ընելու .

Բ. Իրեն անձը վտանդի դրաւ իրեն զաւակներուն  
և ծառաններուն ազատութեան համար պատերազմեցաւ .

Գ. Հաստատուն անվեհեր սիրտ սենցաւ, երբէք ինչ որ ուխտեց, ուխտին վերայ հաստատուն մնաց, ուխտադրուծ չեղաւ :

Դ. Արդարութիւնը իրեն ամէն գործերուն հիմն բռնած էր, եւ ամէն գործերը անով կը գործէր :

Ե. Աստուածապաշտ էր վասնորոյ լաւ սեպեց Աստուածապաշտութեամբ իրեն հաւուն երկիրը գառնալ քան թէ Բէլի երկրին մէջ անաստուած մնալ ճոխ իշխանութեամբ :

Ահա եթէ այս հինգ տեսակ ձիրքերով անձ մի կըրցար գտնալ, անա իսկ անիկայ է, արդար հայկայ սերունդէն մնացած հայու ճշմարիտ գաւակը, ապա թէ ոչ ի հաւատոյ թուլացեալ խառնուրդ է :

Բայց կրնայ ըլլալ, եկամուտներէն ալ այս ձիրքերէն ունենալ սուրբ հաւատոյ միջոցաւ, որ ի Քրիստոս ինչպէս որ տեսանք, Արշակունեացմէ Արգար և Տրդատ, Սուքիասանք, Վարդանանք, Հռիբսիմեանք, Գրիգոր Լուսաւորիչ, մեծն Ներսէս, Սահակ և այլ Սրբազան հայրապետները, և այլ իշխաններ, որոնք որ օտար սերունդէ էին և ոչ հայկայ. իսկ սակայն քրիստոնէութեան հաւատով և կատարեալ մարդկութեան մէջ հաստատուն մնալով, յաղթեցին ամէն դժուարութեանց և գերազանցեցին քան զթուրացեալ ի հաւատոցն ոմանք հայկազնսն զաջնոսիկ, որք խաբեցան յանուղղայ գնացս իւրեանց. և խաբին մինչև ցայսօր :

Արդ գրքուկիս սկիզբէն մինչև ցայս վայր տեսաք հայ ազգիս մեծազոյն մասին վերայ եղած թշուառու-

թիւնները. որ մենք պատիժ անուն տալով յայտնեցինք :

Ահա հերիք է որ ընթերցող ազգայինք, զիտնան որ մինչ ցայս վայր գրուածները ճշմարտութիւն մի ըլլալը :

Վասն զի մինչ ցարդ ազգայինք չկրցան միութիւն մի և ներքին հարստութիւն մի ձեռք բերել : Խրատի շատ մի հարուստ և գործունեայ և գիտնական անձինքներ հայազգիս մէջ եղան, բայց մասնաւոր էին. և ոչ ազգային շահուն. ուստի չկրցան որ և իցէ ազգային ներքին միութեան և հարստութեան հիմն գնել և որոյ վերայ իրենց որդիք և թուունք ապազային մէջ շէնք մի շինելու կարօղ ըլլային, առ ալ չըլլալէն ի զատ, հրէից չափ ալ միութիւն և ներքին հարստութիւն մի չունեցաւ : Ուստի հիմակու հիմայ ազգայնոցս ունեցածներն են, բազմատեսակ թշուառութիւն, որոց մենք մինակ երեսուն տեսակը յայտնեցինք ողբալով ցաւ ի սիրտ, գուցէ տեսնելով և լսելով ապաղայ հայ սերնդոց և զգուշասցին անուղղայ գնացից և վարուց, և որով ազատեսցին ի ներկայ և յապագայ թշուառութեանցն և պատժոցն. զի այսուհետեւ ազգային անցեալ մշտաններու առիթները յիշելով, որք էին, անձնական շահախընդրութիւն, կիրք, ետութիւն և ինքնահաւանութիւն, մէկզի ձգելով, յիշենք անցեալ հայկայ խոնարհութիւնը, և այլ յատկութիւնները և ներկային մէջ միանամք սուրբ սրտով, որ ապազային մէջ շահ և օգուտը վայելեմք :

Զի արտաքոյ միութեան չիք հարստութիւն : Ըստ այնմ թէ ուր էցեն երէտ և երեւ ժողովուրդ յանուն է՞ անդ ե՞՞ և ես է՞ զիջէ նացա :

ՀԻՄԱՅ ԿԱՐԳՆ ԵԿԱԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ  
ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ ՏԱԼ  
ԱՀԱՒԱՍԻԿ ՏԵՍ ՍՏՈՐԵՒ

3. - Ուր որ ըսինք, «օգոր հոգի մը արելութեան գե-  
տը շէրար կը հաւածեն և կը դրդորեն». եւայլն երես 25 :  
Արդարեւ ճիշդ է բանն, միթէ Աղթամարու երանաշնորհ  
Խաչատուր կաթուղիկոսը քի՞չ զրպարտեցին և քի՞չ հա-  
լածեցին, նոյնպէս Թէքիրտաղու Թագէտս, Սեբաստիոյ  
Կարապետ գեր. եպիսկոպոսները, Վանայ Պօղոս բարե-  
ջան վարդապետը, եւայլն եւայլն : Լրագրաց թերթերուն  
մէջ պիտի տեսնաք. եթէ խուզարկելու ըլլաք, հալած-  
ուած և զրպարտուածներու ստուար թիւն :

Կարծես թէ ոմանց բնութիւն իսկ եղած է, բնկերը  
և զրպարտեալը հարածել, հակառակ սուրբ գրքին, որ  
կրէ, «Էրեցե՛ս զնկերն +» Էբբե՛ս զանն +» :

Արդի ժամանակիս հալածւողներէն մին ալ մինք  
եղանք, ինչպէս որ հետեւեալ տեղեկագրութենէն պիտի  
խմացուի :

Հաւածուին առջին : Երբոր ուղեցինք 1844 ին  
Քիւրախատանի ժողովրդոց մէջ ընթերցմունք և գրագ-  
րութիւնք, կարգ և կանոնք և կրթութիւնք մտցնելու  
խնդրն նոյն տեղոյն կղերականներէն շատ վրասներ կրե-  
ցի և հալածուեցայ, մինչև որ ըստ կարելոյն սակաւ  
ինչ նախակրթարաններ, մանկավարժներ մտցուցինք մէ-

ջերնին, տարը տարոյ ժամանակ, երբեմն գործեցինք  
և երբեմն դադրեցանք եւայլն. ինչպէս հետեւեալ պատ-  
պարիարքի նախակէն ալ կը յայտնուի մեր ըսածները :

Գերապատիւ Սիբելի .

Գրութիւնք առինք. զի ժողովուրդն, շնորհակալ է  
զձէնջ և մանաւանդ զպրոցներ հաստատելու և անշահա-  
սէր աշխատութենէդ, զի որով բերկրեցոյց զմեզ և ըզ  
կրկին ժողովս, և զլրութիւն ազգիս :

Իսկ Մշոյ վանահարց եւայլն. խոչնդոտն լինել բա-  
րեկարգ ընթացից ձերոց ոչ սակաւ տրտմեցոյց զմեզ,  
անձնապահ լեր առ ժամանակ ինչ ի Մուշ երթեւեկելոյ  
մինչև գրեցուք առ գերապատիւ Արքեպիսկոպոսն Կար-  
նոյ և Մշոյ :

Արդարեւ բազում վշտաց և նեղութեանց տանիք.  
Իսկ վարձք և հատուցումն անբաւ են յԱստուծոյ և յԱզ-  
գային կառավարութենէ, և վարժարանի համար գնած դ  
գրեանց զբամն Մեծ. Արապեան Գէորգ Աղային շրկէք .

1854 դեկ. 31

Ի Պատրիարքարան Հայոց

ՅԱԿՈԲ ԱՐՔ ԵՊԻՍ.

Պ. Կ. ՊՕԼՍՈՑ

Վերջապէս որ և իցէ մեծագոյն մասամբ կղերնե-  
րէն հալածուելով 1858 ին եկի Պօլիս և Ամենապատիւ  
Գէորգ սրբազան պատրիարք Սամաթիոյ Նոր-Թաղ Գլխա-  
ղիւր սուրբ Յակովբ եկեղեցին քարոզիչ կարգից. ուր որ  
ուխտատեղի մի եղաւ հոն ամենայն ազգաց, և ժողո-  
վըրդեան բազմութեան մեզ հետ ունեցած համակրու-  
թիւնը և ջերմ սէրը, յարուցին մեր վերայ Պօլսոյ ոմանք

կղերները թշնամի , և ժողովրդոցմէ մեզ եկած կամաւոր նուէրք և պարքեւքն ալ , մեր վերայ սննաշտ թշնամի կարգեց ոմանք շահասէր աշխարհականները , երբոր աւ անոց յուսացած մեզնէ նիւթապէս շահ մը չտեսան , վասնորոյ մեր վերայ շատ մի սնուանարկութեան թերթեր և տեսարակներ գրեցին և տպելով հրատարակեցին , տակաւին Պօլսէն չեկած , մեզմէ յառաջ նախատելի տեսարակները և թերթերը դուրս ելան և գնացին :-

Եւ իբրեւ 1861 ին մեկնեցայ Պօլսէն գնացի Բալու և Քիւրտիստան , մեզնէ գաղտնի Բ. դուռնէն կտուց անասպատ աքտորուելու հրովարտակ մի հանելով կը զրկեն կարնայ կուսակալին , և մենք ալ նոյն միջոցին Պօլիս կուգամք 1863 ին :

Այս եղելութիւնը լսելով բողոքեցի Ազգային Վարչութեան , երբոր քննութիւնը երկարեցաւ Բ. դուռը կազմեց ազգայնոցմէ մասնաժողով մը որոյ նախագահն էր արգի բարձրաշնորհ Տ. Տ. Գէորգ Դ. սրբազնադոյն կաթողիկոսն ամենայն Հայոց :

Ուստի նոյն ժողովոյ մէջ ամեն բան պարզուեցաւ , արդարութեամբ ճշմարտութիւնն ճառագայթեց ողորմութիւն և խաղաղութիւն զիրար համբուրելով . Հայելի Գործոց Տիգրանեան գերքն ի լոյս ընծայուեցաւ 1864 ին Գործոց Տիգրանեան գերքն ի լոյս ընծայուեցաւ , որուն մէջ ամէն կարծիք և կնճիւ խնդիրք լուծուեցան , և մեր 18 ամեայ ազգային աշխատութիւնը մի առ մի յայտնուեցաւ :

Ուստի սնօրէնութեամբ վերին տեսչութեան զմեզ կօնդակաւ և Պէռաթիւ Բերիոյ , (Հալէպու) Առաջնորդ կարգեցին , գնացինք ի Բերիայ 1866 Յունիս 1 ին : Եւ Նոյեմբեր 15 ին Զէյթունցիք Լատինկրօն կը լինին , հետեւեալ բարիքը Լատինացոցմէ ընդունելու պայմանաւ .

1. Չորս Զէյթունցի իշխանները Պօլսոյ բանտէն ազատել :
2. Նոյա ընտանիքը Մարաշէն Զէյթուն կրթալ :
3. Մարաշին մէջ Զէյթունցի շրթայակապ բանտարկեալները արձակել :
4. Զրի վարժարաններ բանալ :
5. Տարեկան արքունի տուրքերնին թեթեւցնել :
6. Որ և իցէ հարստահարութիւն մի չկրեն սպառազային մէջ :

Յիշեալ չորս խնդիրները կատարեցի , վերջին երկու խնդրոյ համար Բ. դուռն խօստացաւ մեզ առաջիկայ մարտին կատարել . ուստի մեր այս աշխատութեան փոխարէն ազգասէր փեւճ Միմօն պէյ Մաքսուտեանի շնորհիւ Բ. դուռն արքունի Մէճիտ կրորդ նշանաւ , և սըրբազան պատրիարքն ալ եպիսկոպոսութեան վկայակահաւ վարձատրեցին զմեզ , և ձեռնադրուեցայ եպիսկոպոս 1868 սեպտ. 15 ին բարձրապատիւ Տ. Տ. Գէորգ Դ. հայրապետէն ամենայն Հայոց . և եկի ի Պօլիս Գործք Զէյթունի անունով տեսրակը տպեալ ի լոյս ընծայուեցաւ որուն մէջ Զէյթունի բոլոր գործերը գրուած են 1869 ին :

Ուստի Զէյթունի եղած ծախուց պարտքին հանգանակելու համար Ազգային Վարչութեան որոշմամբ գնացինք Մօլտովալաքիա (Ուլահ-Պուկտան) մինչև վերագարձայ եկայ Պօլիս , որպէս թէ մնացեալ 2 խնդիրն ալ կատարել , ինչպէս որ , Բ. դուռը խօստացած էր .

բայց դժբաղդաբար Խորմեան սրբազան պատրիարքացած մեր հետ առեկուծեան ոգով սկսաւ վարուիլ և հալածել զմեզ, ինչպէս որ կը հալածէր. զայլ կղերները որոնք որ ողջամիտ էին :

**Հալածումն երկրորդ :** Հանդանակութեան ժապաւինեալ տետրակը տուին իրեն 3 օր իրեն քովը մնալէն ետքը տուաւ մեզ բոլոր հանդանակութեան ծախքը ելլելէն ետքը մնացածը տուինք պարտքը, մնաց 8000 դահեկան բաց պարտք, որուն համար կը սպասէի սնօրէնութեան մը, յանկարծ յանձնաժողով մը կազմեց վերստին տուժարը մեզմէ առնելով սկսան քննել, երբոր մէկ խարդախութիւն մը չգտան, գոնէ վնաս մը հասցնելու համար պօլսոյ մէջ ըրածս հանդանակութիւնը գրեցին և ընդունեցին, և եղած ծախքը չընդունեցին, ահա արդարաւի՛ն-մի քեզ հաշի-մը, այս վնասը մեզ տալէն ետքը, ձեռք զարկաւ ուրիշ վատութիւն մը ընել որ է :

**Հալածումն երրորդ :** Ծնունդեան գիշեր, երբոր ժամարար պիտի ըլլայի, իմաց տուաւ մեզ, թէ վրադ բողոք կայ եթէ ժամարար ըլլաք զքեզ տաճարէն վար պիտի քարչեն, եւ այն, մեք այս մտտի զրոյցին կարեւորութիւն չտալով պատարագեցինք, և ժողովուրդը դո՛ս սրտիւ մինչ ցվերջը պատարագին կենալով և ապա արձակեցաւ տեղը դնաց, վերջը բողոքագիրը և բողոքը ուղեցինք իրմէ, բայց ոչ բողոքագիր և ոչ բողոք եղած և կայ եղիր, աս ալ այսպէս : Խորմեան սրբազան ասով ալ դո՛ս չըլլալով հետեւեալ վնասը մեզ հասցնելու կըա :

**Հալածումն չորրորդ :** Երբոր Աւագ ուրբաթու գիշեր

և իմ քարօզուծեան եկեղեցւոյ մէջ կտակը պիտի խօսէի Սափրիչեան այսինքն (պէրպէրեան) Տիմօթէոս աբեղան, եկած դասը կանգնէր և լուսարար տէր Սուքիասը մեզ իմաց տուաւ, թէ սրբազանի հրամանը այս է, որ Պերդէրէ ոչ ոն ոչ ոն իրաւ և Զարդէ պարտաբէն ալ ոչ ոն ընէ, մեք ալ շատ լաւ ըսինք, և լուեցինք, վասն զի, նկատեցի Խորմեան սրբազանի երկու տեսակ դիտաւորութիւնը այս բանիս մէջ, Ա. մեք անոր դէմ դնելով, որ նա ալ այսինքն Տիմօթէոս լրբաբար մեր վերայ արձակելով և ժողովողեան մէջ խռովութիւն մը ծագիլ, և Բ. Զատկական ժամօցէն զմեզ զրկել, և որպէս թէ ցաւ մի տալ մեր սրտին : Իսկ Աստուծոյ արդարութիւն նոյն Զատկի կէս գիշերէն սկսեալ մինչև ցլոյս արեւուն սաստիկ անձրև մը բերելով, եկեղեցին մարդ չկրցաւ երթալ : Եւ Տիմօթէոս աբեղան ալ մինակ պատարագեց, իսկ զարմանալին այս էր, երբոր Խորմեան սրբազան ումանց եպիսկոպոսաց և ծայրագոյն վարդապետաց կառաջարկէ սոյն մեր պաշտօնը վարելու, նոքա կը հրաժարին ըսելով, չէ իրաւունք, և արդարաւի՛ն-մ, բացի Սափրիչեանէ որ ընդունեց :

**Հալածումն հինգերորդ :** Ասկէց ալ դո՛ս չըլլալով սրբազան Խորմեան, համոզեց քիւրտիստանցի Իսկանատար անուն մէկը, մեր վրայ խնդրագիր տալ Բ. դուռը, որպէս թէ մեր վրայ 3000 դահեկան առնելիք ունի, աս ալ Հիւանի բաշայի ներկայութեամբ սուտ ելլելով մնաց ամօթով : Աս ալ չյաջողեցաւ այս անգամ հաշուատուժարս պահել տուաւ, և հրատարակեց Տեգրանեանը վերուցէր, այսինքն գողցէր, ասկէց ալ մէկ խռովութեան ձայն մը ինձմէ չկըա, որ շատ կապասէր, բայց իզուր մեր վահանը Յօբայ համբե-

բուժիչն էր : Ասկէց ի զատ սկսաւ շարիվարի գրողներ Երուսաղէմաց տունը հաւաքել մեր վրայ շարիվարի գրեւու, և յօրուսններ տալ լրագրաց թերթերուն մէջ :

Ասով ալ դո՛հ չըլալով երբոր Բերիոյ Նիկողոս կաթողիկոսէն հեւազիր մի կուգայ մեզ . երբոր չափուչը կը բերէ պատրիարքարան , Խռիման սրբազան խաբելով գչափուչն մեր հեռագիրն կառնու կը բանայ և կը կարգայ : Հինգ օրէն ետքը կիմանամք և կուզեմք իսկ ինքը կուբանայ , և հեռագրատունէ ճիշդ պատճէնը կը բերենք , և ապա աթթով կուտայ մեզ , այս խաբէութեան համար թէ հեռագրատան վերակացուն և թէ երեւելիքն արքունեաց համոզել կը ջանային զմեզ , որ բողբոմք , առ այս մասին պետութեան , մեր ևս համբերելով զանց առինք . վերջապէս բարձրաշնորհ Խաչատուր կաթողիկոս զմեզ հրաւիրեց յիւր սենեակ և ըսաւ , եղբայր ասո՛ւտ անհոգի և անսպասած մարդիկ են , քեզ մեծ վնասներ պիտի հասցնեն , գիշեր ցերեկ քեզ համար կը խորհին և յնկնիթէ ինձ մտիկ կընես թող գնաց ասկից :

Ուստի օգոստոս 23 շոգենաւ մտայ գնացի հայրենիքս :

Ընդ սպասեալ հոգի մեզ զերբ հաւածել : Ահաւասիկ . Տիգրանակերտ հազիւ թէ 6 ամաց չափ խաղաղ օրեր անցուցինք . Պոլսո խարբերիցի Սարգիս Վարդապետն անդապահ յղեցին Յակոբ եպիսկոպոսին վերայ , ուստի ելաւ խոռովութիւն մը մեծ , մինչև անգամ Միւթասարիֆի առջև մին եպիսկոպոս միւսն ծայրագոյն վարդապետ սկսան դատ վարել կառավարական ատեաններուն մէջ զիրար հալածելով : Ուստի մենք ալ զմեզ առ խոռովութենէն ազատ պահելու համար . գնացինք Բարձրահայեաց վանքն , ուր որ խնդրանք քանի մը երեւելի ան-

ձանց գիշերօթիք վարժարան մը բանալ վանից մէջ , զի որովհետև Բողբոմք վարժարան բացած էին շրջակայ գիւղօրայս . և Օհաննէս վարդապետ Առաջնորդն , այնքան անհոգ անձ մի էր (վարուք որպէս թէ ճգնաւոր) և ոչ մի փոխասաց ունէր վանից մէջ բացի արբեցող միաբանիցն , որ 18 տարի կը շարունակէր առաջնորդութիւնը , ինչ և իցէ , շատ մը խրատ և յորդոր կարգալէն ետքը առաջնորդին , հազիւ թէ համոզելով այդու պայմանաւ որ վանից իրաւունքէն կամ վանահօրմէն և կամ վիճակէն մէկ դահեկան անգամ չուզել , այլ դուրսէն կամ մեր քսակէն : Ուստի խարբերութու վիճակէն 9040 զըշ . հաւաքելով բերինք Օհաննէս վարդապետին յանձնեցինք որ վարժարանի շինութեան ծայս ընէ , և տուաւ մեզ հետեւեալ անդորադիրն , և գնացինք ի Տիգրանակերտ , որպէս թէ խոռովութիւնը խաղաղացած էր :

Ահա անդորրագրին ճիշդ պատճէնը , որ իսկը քովերնիս կը պահուի .

Գերազատու Տիգրանեան Մկրտիչ արքեպիսկոպոս պրբազան հայրը իւր կամաւոր ուխտը սրբոյ Տաճարի ամնօրհնեալ անարատ և միշտ կուսի Աստուածածնի կատարելէն զկնի , որոյ արդիւնքն զորս երկր վանիցս վաւրն շինութեան ճեմարանին այս է .  
1872 ապրիլ 22

|      |      |            |             |
|------|------|------------|-------------|
| 2460 | դշ . | <b>45</b>  | լիտր բամպակ |
| 4436 | »    | <b>12</b>  | » » մանած   |
| 250  | »    | <b>7</b>   | դոյզ խարար  |
| 4458 | »    |            | ոյջ դրամ    |
| 756  | »    | <b>350</b> | տրամ արծաթ  |
| 8460 |      |            | փոխադրելի   |

8640 ՂԵ. փոխադրեալ

598 բամպակի և խարբերթի ծախքերը

9058

Օսմանցի ոսկին 118 ՂԵ. էն հաշուեալ ընդունեցինք  
Սոյն ինն հազար յիսուն ութը դահեկանն ձեմարա-  
նի շինութեան .

Ուստի ի միամտութիւն նուիրատու ժողովրդոց Խար-  
բերթու և ի հաւատարմութիւն յիշեալ բազմերախտ սըր-  
բազան հօր կատորագրեմք սոյն հաշուեցուցակ անդոր-  
րագիրն :

Առաջնորդ Բարձրահայեաց վանից և վիճակին  
ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ Վ. Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

Երբոր վերայիշեալ արդիւնքը առաւ , ուրախանալով  
խակոյն շրջաբերականի օրինակ մը գրեց , յոյց տուաւ  
մեզ ոչ այնքան վարժարանի համար , որքան վանից ան-  
ուամբ շահ և օգուտ կը բնտուէր : Ինչպէս որ շրջաբերա-  
կանի վերջին տողերուն մէջ կերեւի , որ ատ շրջաբե-  
րական ալ Յամիթ տպել տուաւ Յ հարիւր օրինակ և  
հրատարակեց : Ահա պատճէնն .

Օրհնութիւն և ողջոյններ գրելէն ետքը . . . կռտ .  
հիմակուց իմաց տալու պատճառն այս է , ով ոք իւր  
տղայն տալու միտք ունի հիմակուց մեզ իմաց տայ , և  
ձեմարանի շինութեան համար եթէ բարեհաճի նուէր մը  
և յիշատակ մը ընելու ըլլայ , կը խնդրենք ժամ յառաջ  
գրկելու շնորհք ընեն . . .

Ի վ. անս Բարձրահայեաց  
1872 մայիս 1

Առաջնորդ ՅՈՎ. Վ.  
Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

Իսկ մեք Տիգրանակերտու մէջ նստելով , կսպասէի  
վարժարանի շինութեան լուրը առնել , մէկ քանի ամիս  
անցաւ , իմացայ որ Օհաննէս վարդապետ դրամը իւր  
կամաց ծախս ընել սկսէր : Ուստի սրանեղութեամբ իս-  
կոյն տիրելէր Պետրոսը և Գրադըր առ ի գնացի վանք ձեռք  
զարկինք , նախ 20 տղայի համար ննջարան . նստարան ,  
և գրասեղան շինել տալ , մինչեւ որ ասոնք շինուեցան  
հազար ու մէկ խօսք խօրաթա և արգելքներ տիրկեր-  
ներու գլխուն հանեցին , երբոր կարգն եկաւ որ վար-  
ժապետ բերել և տղայք հաւաքելու , որքան որ Տիգրա-  
նակերտու Յակոբ եպիսկոպոս և Օհաննէս վարդապետ է-  
րբ . . . Ինչպէ էին . իսկ վարժարանը չբացուելու համար  
միաբանեցան որովհետեւ եպիսկոպոսը 25 տարուան և  
Օհաննէս վարդապետը 18 տարուան առաջնորդք էին ,  
տակաւին վարժարանի մը հող չէին տարած , իսկ մեր աշ-  
խատութիւնը անոնց ամօթ պիտի բերէր , վասնորոյ ըս-  
պիտակ թուղթի վերայ ստորագրութիւն և մօհր դնել  
տուին տղէտ մարդկանց մեզնէ գաղտնի , զոր ինչ գրե-  
ցին , գրեցին , յղեցին Խրիմեան սրբազանին , նա ալ ա-  
ռանց բացատրութիւն ուղղելու հետեւեալ գիրը կուղղէ  
մեզ :

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Այս միջոցիս առածնուս լուրերնուն նայելով Արդ-  
նոյ վանուց մէջ վարժարան մի կանգնել ուզած էք ,  
ուստի խոռվութիւն ծագեր է , մեկնիք անտի երթաք  
Մշոյ սուրբ Քհաննէսու վանքը , հոն մնաք մինչեւ ցնոր  
անօրինութիւն :

1872 սեպ. 12  
թիւ 155

Պ. Կ. Պօլսոյ

ՄԿՐՏ. ԵՊԻՍ.  
ԽՐԻՄԵԱՆ



Ատոր պատասխանին գրեցի

Առանց քննութեան և բացատրութիւն առնելու ո՞ր օրէնք կը հրամայեն դատապարտութեան վճիռ տալ, կը խնդրեմ արդարութենէ չզատուիլ քննութեան հետեւիլ:

1872 սեպ. 28

ՄԿՐՏ. ԵՊԻՍ.

ՏԻԳՐԱՆԵԱՆ

Ձգեցի վանքը, ըսելով. Եղեւ-լ լեցե յեւ ուն յեւ ուն եկայ Տիգրանակերտ և նստայ տեղս: Հետեւեալ նամակը եկաւ:

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ասկէջ յառաջ սեպ. 12 թիւ նամակաւ ծանուցինք ձեզ երթալ Մշոյ վանքը, մինչ ցարդ տեղդ էք, և չի ներուի ձեզ այդպիսի գործոյ վարժարանի ձեռնարկ ըլլալ, բարեհաճիք անխաբան Մշոյ վանքը երթալ:

1872 նոյ. 6.

թիւ 244

Պ. Կ. ԽՐԻՄԵԱՆ

Գրեցինք ատոր պատասխանը:

Իմ կարօղութենէս վեր է այս ձմեռան Մշոյ լեռները երթալ, ես իմ տեղս թարց պաշտօնի նստած եմ, քանի որ սուտը ճշմարտութեան գոյնով ներկուած կընդունիք, քննութեան չէք հետեւիր, միայն կիրք և ատելութիւն կը տեսնամ:

1872 դեկ. 14

ՄԿՐՏԻՁ. Ե. ՏԻԳՐԱՆԵԱՆ.

ի Տիգրանակերտ

Դորձեալ նամակ մը եկաւ

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ազգային վարչութեան որոշումը յարգելով անմիջապէս փութաք երթալ Մուշ սուրբ Օհաննէս վանքը, և հոն սպասել մինչև ցնօր անօրինութիւն:

1873 մարտ 14

ԽՐԻՄԵԱՆ Պ.

ի Պատր. Հայոց

Պատասխանեցի.

Մինչև որ դատախազս ո՞վ էնէ, ինձ չը յայտնէք քննութիւն չըլլուի, յանցանքս չգիտնամ. տկարութիւնս չի ներէր կամուս այս ձմեռան Մշոյ ձիւնաւոր սառուցեալ լեռները ողջունել, ներեցէք մեզ լսողալ տեղս մնալ:

1873 ապրիլ 30

ՄԿՐ. Ե. ՏԻԳՐԱՆԵԱՆ

Ատոր պատասխան չտալով Բարձրագոյն դրանէ հետագիր մի Տիգրանակերտու կուսակալին կուգայ, զմեզ Մշոյ վանքը զրկելու համար, ուստի սեպ. 10 էլի Տիգրանակերտէն, եկի Մակաբայեցուց վանքը, և անկից հոկ. 30 ին Սղերդ, Բաղէշ, ի Մուշ. սուրբ կարապետութեան հրաւէր գալով տարին զմեզ վանքը. վիճակէն եկած քահանայացուները ձեռնադրել տուին, և նոյնպէս Մանրափանից, սուրբ Ախրերկայ, և Մատին Առաքելոյ և Թարգմանչաց, վանօրէից, վանահարց և Մշոյ փոխանօրդից և վիճայնոց վկայականօք շատ քահանայացուներ ձեռնադրել տուին. ձեռնադրեալներն ալ

է որ մի ոսկի և է որ երկու և է որ երեք ժամոց տու-  
 ւած են մեզ . շատ քիչ կը գտնուի 3 ոսկի կամ 2 տուօղ  
 բայց Մշոյ մէջ սովորութիւն կայ եղեր , մէկը որ քա-  
 հանայացուները քահանայ սցունելու համար նորա ընծայ  
 մի կուտան եղեր . առ ձեռնադրօղ կախկոպտան բարե-  
 խօսելու համար : Մեր մէջ յանցանք առ եղեր է , որ վա-  
 նահարց վկայականը բաւական սեպելով ձեռնադրեցինք :  
 Եթէ յառաջմանէ գիտցած ըլլայի , պիտի զրկէի անոր  
 ընծայատուներ , որ զրպարտութեամբ լեցուն սուտը  
 ճշմարտութեան գոյնով չը ներկուէր պատրիարքարանի  
 մէջ գտնուող թշնամիներու գար , այո՛ , թշնամիներ ,  
 եթէ թշնամի չէին մեզ , պէտք էր մեզնէ բացատրութիւն  
 ուզել և քննութեան հետեւիլ , բայց ոչ այնպէս ըրին ,  
 այլ և , բոլոր սուտերը ճշմարտութեան գոյնով ներկուած  
 սուրբ Էջմիածին կը զրկեն ի Պատրիարքարանէն :

Ուրեմն սպասեմք սուրբ Էջմիածնի գահէն գալիք  
 վճռոյն :

Հիմայ մենք Մշոյ դաշտի ձիւնէն , ո՛չ կրցանք վան-  
 քին մէջն երթալ , և ոչ Մշոյ քաղաքն , մնացինք խո-  
 նաւ գաշտի գիւղօրէից մէջ մինչև ցմայիս , եկանք ի  
 Կարին , իմացանք Խրիմեան սրբազանի անկումը , և մեր  
 ձայն Կիրիկիայ տետրակին մէջ գրուած գուշակութեան  
 ի կատարումն սկսիլը , գրեցի շնորհաւորութեան գիրը  
 նոր պատրիարքին , և ընդ նմին վարչութեան խնդրա-  
 գիր , երթալ ի վանօրայս Վանայ ուխտագնացութիւն և  
 օղափոխութիւն , և եթէ պատեհութիւն գտնամ միտք  
 ունիմ սուրբ Էջմիածին երթալ , 1874 յուլիս 2 . գիրը  
 գնաց Պօլիս 4 օր նտքը ծնկացաւ մը պատահելով մին-  
 չևս սեպ . 20 առողջութիւն չգտայ և բժիշկներերն ալ  
 անօրինեցին մեզ խոնաւ երկիր չմնալ , երթալ Ուրֆա

Հալէպ , Տիգրանակերտ , որ չունին խոնաւութիւն , ուս-  
 տի պատրիարքարան գրած նամակիս պատասխանը չա-  
 ուած գնացի Տիգրանակերտ , սկսայ անկողնոյ ծառայել .  
 ըսինք շէտք հաւանքէլ օտար հողէ մէջ հալածումն մեծ , ուր  
 ոչ այլ ուրէք այլ է հաւատոց Խաւացեալ հայցեալ Խո-  
 նարք կղերականաց մէջ : Յուլիս 2 ին գրիս պատասխանը  
 հոկտ . 18 ին եկաւ ձեռքս հասաւ :

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ձեր գերապատուութեան Վանայ վանօրայք երթալ  
 չըլլար ուղղակի սուրբ Էջմիածին պէտք է որ երթաք .  
 անա առ վեհափառ սրբազան Հայրապետին ալ յանձնա-  
 րարական գիրն ներվակեալ գրովս ձեզ ուղղեցինք :

1874 սեպ . 18  
 Թիւ 889

Պ . Կ .  
 ՆԵՐՍԷՍ ԱՐԳԵՊ .

Տակաւին ծնկացաւօք կը տագնապէինք , պատրի-  
 արքարանէն մեր վրայօք գրուած գանգատին պատաս-  
 խանը սուրբ Էջմիածնէն կուգայ , և Պատրիարքի փոքր  
 նամակաւ կոնդակին պատճէնը մեզ կուգայ . որ է հե-  
 տեւեալն :

Առ սրբազան պատրիարք Կ . Պօլսայ

Տ . Ներսէս Արք եպիսկոպոս

Գէորդ ծառայ Քրիստոսի . . . ևւայն սիրելոյ մե-  
 րում խնդալ ի Տէր :

Ընդ գրութեան ձերում առաքելոյ առ մեզ 12 յու-

լիս ամսոյ տարւոյս ընդ համարաւ 433 հասին ի ձեռս մեր թուղթքն քննութեան ( որ բնաւ երբէք իմ մասին քննութիւն եղած չէր , և չէին ընէր որչափ որ կը բողբէի , ) և պատճէնք պէս պէս դրուածոց յաղաքս Երեմիայ և Մկրտիչ կախկոպոսաց ամբաստանելոց իբրև զակատեալս զհետ կաշառաց և ազօրինաւոր ձեռնադրութեանց :

Ընթերցեալ մեր զգրուածսն զայնոսիկ գտաք զնոսին թերակատարս ըստ բազում գլխոց . իբր զի չտեսաք ի նոսին բացատրութիւնս մատուցեալս յամբաստանելոց անտի երկրցունց կախկոպոսաց առանձինն յօշուածովք հանդէպ միոց միոց յամբաստանութեանց անտի նշանակելոց ի տեղեկագիրսն մատուցեալս ի հարցաքննողաց և ի հարցաքննելոց :

Այնու ամենայնիւ այս ինչ յայտնի է զի կախկոպոսունքն այնոքիկ եկեալք երբեմն այսր վկայագրովք պատրիարքին Կ. Պօլսոյ Պօղոսի արք եպիսկոպոսի , արդ ի Տէր հանդուցելոց և հանրագրական խնդրուածովք ժողովրդոց վիճակացն Խաչքերթու և Բերիոց , ձեռնադրեցան առ ի մէնջ ի վերայ վիճակացն այնոցիկ :

Յայնժամ իսկ պարտաւորեցին նոքա զանձինս իւրեանց վաւերական խօստումսք ըստ օրինակի այլոյն եպիսկոպոսաց առ ի մէնջ ձեռնադրելոց չձեռնադրել երբէք զտղէտս և զանարժանս ի սպասաւորութիւն եկեղեցոյ և սչ կատարել բնաւ ձեռնադրութիւնս արտաքոց վիճակի իւրեանց :

Սակայն որպէս երեւի ի քննական գրուածոցդ մին ի նոցանէ այն է Երեմիայ . . . իսկ միւսն որ է Մկրտիչ կախկոպոս Տիգրանեան , ճգնի սպացուցանել և հաստատել , որպէս երեւի ի նոյն գրուածոց , թէ հրամանաւ

Առաջնորդաց վարդապետաց և վանահարց արարեալ իցէ ձեռնադրութիւնս այնպիսիս :

Քաջայայտ իսկ է ձերումդ խոհականութեան , զի զի յորժամ հովիւք եկեղեցոյ և խատրիարքարան ինքնին յանողս կան , և կամ պատճառս տան , իւրք իրօք խանդարման եկեղեցեան կանոնաց . ևս քան զեւս յաճախեն զեղծումնք և անկարգութիւնք այսպիսիք :

Յօրոց մին և այն է զի կախկոպոսն Երեմիայ . . . եւայլն :

Իսկ Տիգրանեանսն կախկոպոսն որպէս լու եղեւ մեզ թէպէտ և գնալ գնաց զառաջինն յիւր , բայց ապա պատճառելով զպատճառս ինչ , որք ցարդ ևւս զանկտու մեան առ ի մէնջ . մեկնեալ ի բաց երթայ ի սեփնական վիճակէն և աստանդական թափառի . ( թող ներուի մեզ այս տեղ ըսելու . մեք պատրաստուեցանք ի Բերիայ վիճակս երթալու Խոխմեան սրբազան իսկոյն լրագրաց Թերթով զմեզ պաշտօնէ անկեալ հրատարակել տուաւ . )

Արդ այս ամենայն անկարգութիւնք որպէս և սիմնական ձեռնադրութիւնք , արդարեւ իսկ դատապարտ առնեն զանկարդ գնացս երկրցունց . . . բայց զի և ներկայ քննութիւնքդ թերի էին և անբաւականք ի պատուհասկ գնոսին . . . եւայլն :

1875 հոկտ. 8  
ի Աբ. Էջմիածին

թիւ 305  
ԳԵՈՐԳ Դ. ԿԱԹՈՂ.  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երեմիայ կախկոպոսն արդար թէ մեղաւոր եւ չեմ գիտէր : Բայց ի՞նչ վրայօր եղած զբարբառսն ինչեանց ԳԵՄ Բողոքեցի , և բողբանացս զբերը պատրիարքարան լցուեցաւ , իսկ ոչ մին կրօնական ժողովոյ անգամոցն կրցաւ մեզ պատասխանել , թէ՛ այսպէս կամ այնպէս , հապտ ի՞նչ

բն , ոչ այլ ինչ , — մէն ժեշէ հակառակ իւր սուրբ կոչման և արդարութեան , լռեցին և խոտորեցան զսուան ճշմարտութեան գոյնով ներկողին հետ , ներկեցին և զրկեցին ի սուրբ Էջմիածին , իսկ որդարութիւնը պատասխանեց թէ , **անբարեկամ և լեբէ են բնութիւնք . ինչ և իցէ , առ հալածանքն ալ անցաւ :**

Եղաւ որ 1874 սեպ. 4 Փիլիպպոս վարդապետ եկաւ Տիգրանակերտ , և 1875 փետր. 20 ստիպուեցաւ պատճառէ մի առժամանակեայ կերպիւ քաղաքէն մեկնիլ , ( հոս տեղ պատճառն ինչ ըլլալը մեզ հարկ չէ բացատրել , քանզի իրեն հետ կը շրջի ուր որ երթայ : Ուտաի հետեւեալ նամակը մեզ կը յղէ :

Գերապատիւ սրբազան հայր .

Մեր Արդնի երթալոյ առթիւ , Ազգ. ընդհանուր ժողովն իւր 13 թղ. նստովն քուէարկելով զձեր Գերապատուութիւն մինչ ցղալուստ մեր փոխանորդ ընտրեց , ընդ նորին ընդհանուր ժողովոյ հրաւիրանաց , նա և մեք թախանձանօք խնդրեմք որ հաճիք ընդունիլ այդ պաշտօնը , քաջայոյս եմք չմերժել այդ ազգօգուտ առաջարկն ձեր ազգասիրութեանը :

1875 փետր. 25  
ի Տիգրանակերտ

Տեղապահ  
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴ.

Ես ընդհանուր ժողովոյ հրաւիրանաց գիրն ալ , ասոր յար և նման :

Ստորագրութիւն

Ատենապետ

Ատենադպիր

Թովմատ Մեհրիբեան

Յովհաննէս Գաղապաշէան

Մենք հրաժարական տալով չուզեցի . պատճառ

ճնկացաւ , ուտաի վերստին գաւառական ժողովը , քաղաքին բոլոր երևելիները և բոլոր ժողովականները միաբան բերին հետեւեալ գիրը սուին մեզ :

Գերապատիւ Սրբազան Հայր ,

Գաւառական ընդհանուր ժողով ձեր տէրութիւնը անցեալ օր հրաւիրեց քաղաքիս առաջ տեղապահութեան պաշտօնը վարել , բայց հրաժարականով բացասական կարդացիւ էք , ձեր տկարութիւնը պատճառ ունելով , և այս իրաւամբ . սակայն այժմ ժողովոյ բոլոր խումբ խնդրելով կը խնդրեմք ի սէր ազգութեան հրամիլ գալ առժամանակեայ պաշտօնը վարել ձեր խոհեմ ընթացիւք :

1875 փետր. 26

Ստորագրութիւն 51

Մեծ պահոց սկիզբէն սուրբ Զատիկի կիւրակին պաշտօնը վարեցի , Փիլիպպոս վարդապետ եկաւ մեք հեռացաք պաշտօնէն տեղս նստայ , որ և իցէ ձեռնամուխ չեղայ գործիմի . թէև կը հրաւիրէին . իսկ Փիլիպպոս վարդապետ որ միշտ անդխտութեամբ կը գործէր ապագայն չմտածելով , անկէց իրեն ազգայնոցմէ որչափ յորդոր կը խօսուէր ապագայն մտածել , իսկ ինքը ոմանց երխտասարգաց առաջնորդութեամբ գործել և մտիկ ընելուն , պակասութեան մէջ կը գտնուէր և շատ անգամ իրեն նպատակին չհասնելուն համար , կը կարծէր զմեզ իրեն հակառակ և գործոյն արգելք , բայց չէր խորհէր իրեն բռնած ընթացից մեասակաւ ըլլալու վրայօք , այլ և զմեզ պատճառ բռնելով սկսաւ մեր վրայօք բերանը եկածը խօսիլ մեր բացակայութեան և առեանի մէջ , իսկ մեզ լուր կը բերէին մեք զանց առնելով չէինք լսեր , և

զաւ որ այդքանով չբաւականարով Պատրիարքարան կը գրէ մեր վրայօք : Ուստի Պատրիարքարանէն սկսաւ նամակ գալ թէ Պօլիս եկուր :

Ա. Հեռագիր .

Տիրապէքիրտէ Տիգրանեան Մկրտիչ Էֆէնտի

Պազը խերու իշէր իշիւն սէրիան Տէր-Ալիէյէ կէլէսին :

1291 Հազիրան 12

Արֆէնէ Գ-Բէրէնէ

Նամակ Ա.

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ասկէց յառաջ հեռագրով ուզած էինք զձեզ ի Մայրաքաղաքս գալ , հեռագիրը համառօտ էր , հետեւաբար անկարօղ բացատրել մեր հրաւիրման շարժառիթն ու նպատակն , այս անգամ կը փութամ նամակաւս կրկին մեր նախորդ հրաւերը , յայտնելով թէ , կարեւոր պատճառներ կան , որ կատարեն զմեզ Ձեր գերապատուութեան հետ անձամբ խորհրդակցիլ , անօրինակ և կարգադրել ինչ որ վայելուչն է , և օգտակար Ձեր և Ազգին համար . Բաջայոյս եմք որ սոյն նամակս ոտանարուդ առանց վարանելու Ձեր ուղեւորութիւնը կը փութացնէք անկասկած լինելով :

1875 հոկ. 10

Պ. Կ. Պօլս

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊ.

Պատասխանեցի

Ներեցե՛տ այժմ հիւանդ ըլլալովս չեմ կարօղ գալ , Ձեր

սրբազնութեան խորհած և անօրինածը ինձ համար ընդունելի է , իսկ ողջանարուս պէս անպատճառ պիտի գամ

ՄԿՐՏ. ԵՊ. ՏԻԳՐԱՆԵԱՆ

Բ. Հեռագիր .

Տէրապէտէրո՛ւ Մէլէի՛ն ղէյնի՛րէ՛ շա՛ն միւնազանն տափի իշիւն խտամպօլա կէլմէնիզ մէճիտճէ գարար վէրիւմիշ տիր թէլէկրաֆ թարղընտան 10 կիւն գարֆընտա եօլա չըգմանըզ , չըգմատըղընըզ հալտէ մէսուլիէթի ազիմէ թահարընտա գալաճաղընըզ իխթար օլունուր , թէլէկրաֆլա ճէվապընը վէրէսինիզ :

92 Քեանուսի սանի 28

Էրֆէնէ Փ-Բէրէնէ

Հեռագրեցի

Էրֆէնէ Երֆէնի շա՛ն միւնազանն պիտի լինի . գըղըն շիտէթ ինտէն եօլա չըգմամ . միւսաատէնիզլէ մարտ տօգու զունտա եօլա չըգարըմ մէքթուպոււմ եօլտա սոր :

Մուհարէմ 16

Միւրիւ Երֆէնի

Մինչ ցայո վայր լսեցիք եկած գրերը և գացած պատասխանները , արդարութիւն որ կողմ ըլլալը յայտնի կերելի , ուրեմն անկէց ետքը եկած գրերուն մտիկ ընենք

Եւ նամակ մի ալ գրեցի բօստայիւ այսպէս .

Ամենապատիւ սրբազան հայր .

Տիգրանակիրտ իմ երեսէն խոտված չէ երբէք , եթէ այսպիտի գանդատ մի կայ իմ վրայօք , գանդատանաց

համակիրն կամ հանրագրին պատճէնը չնորհք ըրէք մեզ տեղս դատուելու և այս Պօլէո՞ քա՞մէ եւայլն :

Ասոր պատասխանը հետեւեալը առինք այսպէս .

Թելէկրօֆը «Լուսինները» տէր հալ Տիարպէզիրտէն չըդուպ Ըստամպուրա կէլմէնիդ գաթիէն իրթար իտէրիմ :

92 մարտ 11

Երեւնի Բաբերէյի

Ատ հեռագրէն առնելովս ամենայն տկարութեամբ և կայ Խարբերթ և հեռագրով իմացուցի Խարբերթ գալ և տկար ըլլալս , 15 օրէն ետքը կայ Խարբերթէն եկալ Մալթիա , և ապա հետեւեալ հեռագիրն եկաւ :

Խարբերթի քաղաքացի վերլիէճէք գարարա տէկին Բալուտա իգամէթ իչիւն օրայէ կիթմէնիդէ գարար վերլիմիշ աիր :

92 նիսան 15

Երեւնի Բաբերէյի

Մալթիայէն եկալ Ակն որ երթամ Բալու , իսկ Բուսիոյ պատերազմը պատճառաւ ճանապարհները յետին առտիճան խառնակ և առողջութիւնս պաշարուած ըլլալով Ակնեցիք զմեզ առաջնորդ կը խնդրեն ըլլալու , մենք չենք ընդունիր , վերջը վանքը նստել վանահայրութիւնը կընդունինք , այդու պայմանաւ որ՝ պատրիարքարանէն մեզ կոնգակ բերին :

Ահա Ակնեցոյ խնդրագրին պատճէնը .

Սրբազան Հայր

Առաջարկուեցաւ ձեզ Ակնայ վիճակին առաջնոր-

դութեան պաշտօնը և չընդունեցիք , իսկ վանահայրութեան պաշտօնին գալով խնդիրքնիս չափտի մերժեալ , զի որովհետեւ բոլոր վիճակայնոց վափաքելի խնդիրը այս է Ձեր սրբազնութեան գոնէ վանքը մնալ վանահայրութեան պաշտօնը վարիլ , և ընտրեցաք զՁեզ վանահայր սուրբ Փրկչայ վանիցս և զընցաք ի Պատրիարքարան , յուսամք մերձ աւուրցս գալուստ վանահայրութեան կոնգակիդ .

Սորոքերովնէ

Վանակն խորհրդոյ :

Հանագրի 158

187 Յունիս

Իսկ պատրիարքարան Ակնեցոյ խնդիրը մերժելով չի հաստատէր , ուրեմն ըսեմ . կեցցէ պատրիարքարանի կիրք և ողին ատելութեան որ վասն իմ :

Ուստի հետեւեալ քա՞մէ կուգայ :

Գերապատիւ Ս. կղբայր ի Քրիստոս :

Չնքուչի ժողովուրդն հանրագրութեամբ կը խնդրեն զՁեր գերապատուութիւնը , կեղր . Վարչութիւն արժան գատեց թոյլտուութիւն ընել Ձեր գերապատուութեան , երթաք ի Չնքուչ առանց առաջնորդական պաշտօնի հոգեւորապէս մխիթարել զՉնքուչի ժողովուրդը և հոն մնալ մինչև ցնոր անօրինութիւն :

187 յ օգոս 10

Պ. Կ. ՆԵՐՍԷՍ

Ասոր ալ պատասխանեցի . Չնքուչ Բեբեկարան է առանց իմիր Սամիլի արքունի հրամանագրի չեմ կարող երթալ և մանաւանդ առանց պաշտօնի :

Գարձեալ մանակ մի եկաւ :

Գերապատիւ եղբայր ի Քրիստոս .

Ձեր Ակնայ վիճակին մէջ մնալ տեղիք չունի . եթէ Չնքուչ երթալ չուզէք վութայք ի Պօլիս գալ , և կամ ի սուրբ Էջմիածին գնալ , ապա թէ ոչ ձեզ համար կըստիպէք վարչութիւնը օգուտ միջոցներու գիմելու :

1876 հոկ 14

Պ. Կ. Պօլսոյ  
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵ.

Աս միջոցին Չնքուչէն , յատուկ հետեւեալ հանրազիրը եկաւ :

Գերապատիւ Տիգրանեան սրբազան հայր .

Լուաք ի Տիգրանակերտէն մեկնիլ գէպի Պօլիս երթալք , մեք բոլոր Չնքուչի գաւառական ժողովս և համայն ժողովուրդք կը խնդրենք զձեզ մեր վիճակին Առաջնորդ և Պօլիս ալ պիտի գրեմք եւայլն :

1876 ապրիլ 28

ՍԻՐԷՔԷ 403

Ասոր ալ պատասխանեցի :

Իմ կամքս չէ եթէ Պատրիարքարան հաճի ես ալ կընդունիմ . բայց Պարբերագան մերժեց մեզ պաշտօն տալը :

Նոյնպէս Չմշկածագի գաւառական ժողովը և բոլոր վիճակայինք հետեւեալ հանրազիրն մեզ կը յղեն .

Գերապատիւ սրբազան հայր

Գաւառական ժողովս զձեզ առաջնորդ ընտրեց վի-

ճակիս Չմշկածագու , խնդրեմք ընդունել զխնդիրս մեր տալ զհաճութիւն զի գրեացուք ի Պատրիարքարանս :

ՍԻՐԷՔԷ 103

Ասոր պատասխանը գրեցի .

Եթէ Պատրիարքարան հաճի ես ալ կընդունիմ եւայլն :

Պատրիարքարան աս ալ մէրժելով կը պատասխանէ . Տիգրանեանին սրաչտօ չկայ տալու , պարծառ , չիք պատճառ քննիլ և արելութեան . ուստի եկայ բաղում նեղութեամբ ճանապարհի ի Սերաստիա , ձմեռը վերս գալով մնացի ի սուրբ Սարգիս եկեղեցի բաղում պատուով , և գրեցի վերստին զիր առ սրբազան Պատրիարքն թէ պատճառն ի՞նչ էր զմեզ ի Տիգրանակերտէն հանելով երերուն կը թողուք , և ոչ վիճակ մի տալ կը բարեհաճիք արդ մեզ պաշտօնով տեղ մի ցոյց տալ կը խնդրեմք եւայլն : Ասոր պատասխանեցին մեզ հետեւեալ նամակովն :

Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս

Ձեր փետրվար ամսոյ 2 թիւ նամակը մատուցաւ կրօնական ժողովոյ ուշադրութեան ըստ որոշման նոյն ժողովոյ յայտնել Ձեր Ս. եղբայրութեան , ուր որ էք հոն մնաք , եթէ յարմար տեղ մի պատահի ու պաշտօն մի լինի ձեզ իմաց տրուիլ թէութեամբ :

1878 մարտ 6

Խորհրդական Պ.  
ԽՈՐԷՆ ԵՊԻՍ.

Գարձեալ պատասխան գրեցի .

Անեցիք , Չնքուչիք , Չմշկածագիք , զմեզ ինքեանց առաջնորդ կը խնդրեն , մեք հաճութիւն տալով , կը յանձնեմք պատրիարքարանիդ կամաց , և կը մերժուի խնդիրն . եւայլն . և հիմայ ալ գրածէք մեզ , եթէ տեղ մի

ըլլայ ձեզ իմաց կը տրուի, ուրեմն կը պատրաստուիմ իմ հայրենիքս Տիգրանակերտ երթալ, և կամ Պօլիս դալ :

Ասոր ալ պատասխանը կուգայ հետեւեալը :

Գերապատիւ Ս. եղբայր ի Քրիստոս

Ապրիլ 4 ձեր նամակը զոր ուղղեալ էիք Առ ամեն Ս. Պատրիարք հայրն, Ազգ. Կեդր. վարչութեան Կրօն. ատենին մէջ նկատողութեան առնելէն յետոյ որոշուեցաւ գրել Ձեզ, առ այժմս ո՛չ Տիգրանակերտ կրնաք երթալ և ո՛չ այլ ուր, այլ պիտի մնաք հոն ուր որ էք, մինչև ցնոր անօրինութիւն ըստ Աստուածային կամայ և յաջողութեան :

1878 մայիս 14

Խորհրդական Պ. ԽՈՐԷՆ ԵՊԻՍ.

Աս ալ այսպէս : Սերատորոյ օգը մեզ հիւանդացոյց, ելի եկի Աճառի, և անկէց Սճան, հետեւալ Գեորգիէն եկաւ :

Մարտուանտա գալստըն փոսթա իլէ մէքթուպիմիդ գէ պէքլէյէսինիդ

94 թշրինի ամսի

Երէնի Բաբեկէ

Ուստի ստիպուեցայ մնալ Սամսոն մինչև որ հետեւեալ նամակը եկաւ :

Գերապատիւ Ս. եղբայր ի Քրիստոս

Ձեր հանգստութեան համար որոշեց ժողովը Ս. Էջմիածնայ վանքը երթաք, տունց բնաւ պատճառներ մէջ բերելու հպատակիք և երթաք ի սուրբ Աթոռն :

1879 ապրիլ 10

Փոխանորդ Պ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊԻՍ.

Ողջամիտ ընթերցողք պիտի դատեն արդարութեամբ Պատրիարքարանի վերոյիշեալ նամակներու և հեռագիրներու ի՞նչ ոգւով գրուիլը, ալ մեզ հարկ չկայ բացատրելու :

Ուստի Սամսոնէն եկայ Պօլիս, ուղղակի Պատրիարք սրբազանին ներկայանալու, օրը տարածամ ըլլալով Հարէնց Մեծ. Մարտիրոս Էֆէնտին խօսկիւտար իրենց օրհնեալ Աբրահամեան Նահապետական տունը տանելու ստիպեց զմեզ, ուստի մենք ալ ի պատիւ վսեմ. Մարտիրոս Էֆէնտիին գնացինք : Բայց սակայն Արսլանեան ազնիւ Նշան յարգելին՝ մեր դիմաց Սրբազան Պատրիարքին յղեցի սուրբ աջը առնելով իմաց տալ թէ՛ շփեալէն եւս՝ Միքայիլ Եպիսկոպոսն ուղղակի Ձեր սրբազանութեան պիտի գործ, ներեցէք օրը տարածամ ըլլալուն, Մեծ. Հարէնց Մարտիրոս Էֆէն. տարաւ իրեն տունը վաղը պիտի գայ Ձեր Սրբազնութեան :

Ասոր կը պատասխանէ Սրբազան Պատրիարքը : Թող չէք, և անոր հետ գործ չանէք :

Ինչ և իցէ, ատ լուրը առնելով չգնացի, տասը օրէն ետքը գնացինք Պատրիարքական պատիւը պահելով գլուխինիս բայցինք աջը առնք, հրաման ըրաւ նստանք կամայ սկամայ սուրճ մի բերել տուաւ, և ապա հարցուցինք խոնարհաբար զմեզ ուզեր էիք, ի՞նչ հրաման ունիք :

Պարտիանէց, հրաման չունիմ :

Ուրեմն յանցանքս ի՞նչ է :

Պարտիանէց յանցանք չունիս :

Ապա ուրեմն, մեզ տեղ մի չտոր ըլէք նստելու :

Պարտիանէց, դուք տեղ չատ ունիք, անա՛ Ձրածեան Սարգիս Էֆն. տունը, գնայ հոն կեցիր, ուղամ տեղըդ



զնայ խաչահանդիստ ալ ըրէ , և ալն . երբոր այս ցուրտ անվայել և անյարմար պարտախնդր առինք , դարձեալ Պատրիարքական պատիւն պահելով , լուսթեամբ երանք գլուխնիս բացինք աջը առնելով Աստուած օգնական ըսինք սկսանք դէպի Իսկիտար երթալ , և մեր մտաց մէջ խորհրդածելով այսպէս :

Այս ինչ Պատրիարքի վեհանճնութեան և բարձր պաշտօնի չվայելած ծաղրելի և հեղհական անյի և անհամ ցուրտ բառեր էին , որ արտասանեց քառասուն աւ վարդապետութեամբ , տասներկու աւ եպիսկոպոսութեամբ ազգայնոց ամենայն հաւատարմութեամբ աշխատող ծերունի եպիսկոպոսի մը :

Ինչ ըսել է զնայ Զրաճեանի տունը նստէ , կեր , արբ և խաչահանդիստ ըրէ : Միթէ՛ ինքն իսկ Ներսէս Սրբազան Պատրիարք Զրաճեանի սեղան բազմելով արծակ համարձակ և անարդելք նստող ուտող և խօսողն ինքն չէ եղած : Կարծեմ թէ կերած հացին և խորոված մսին փշրանքը դեռ ատ սմներուն մէջ կը կենայ : Մնաց որ երանաչնոր՝ Աղթամարու և Սըտոյ կաթուղիկոսներն , Սեբասիոյ կարապետ , և Տիգրանեան Մկրտիչ Եպիսկոպոսները տարկներով և ամիսներով անանց թէ առողջութեան և թէ հիւանդութեան խնամք տանելով տանը մէջ պահել և բժիշկներ բերել դրամ ծախս ընելը բոլոր դրացիք լաւ գիտնալէն ևս քը Ս. Պատրիարք և Պատրիարքարանն ալ գիտէ , որ 1866 ին և 70 ին խնամք տանելն :

Միթէ՞ արդի բարձրաչնոր՝ Գէորգ Գ. Կաթուղիկոսն ամենայն Հայոց , և Պետրոս եպիսկոպոս , Ս. Երուսաղէմի փոխանորդներն , Պօլսոյ քարոզիչ վարդապետներն , և քահանաները մեծագոյն մասամբ , յիշեալ էֆն. օրհնեալ

սեղանը չե՞ն նստած և չե՞ն կերած և խմած , օրհնելով գովելով չե՞ն դայած : Ատ օրհնեալ բնակարանը նոր Խաչայէլին մէջ . նոր Արրահամեան խորան մի է Պատրիարքարանին մօտ , որ կընդունի յինքն ի Պատրիարքարանէն անիրաւի հալածեալ կղերները մխիթարելով ի պատիւ Պատրիարքարանին և ողջոյն Հայ ազգութեան կը շահէ կերցնելով խմցունելով և հագուեցունելով այնպէս ճամբու դրած է և կը դնէ , արժանի է Ս. Պատրիարքի մի հեգնելով ըսել ծերունոյս քն. Զրաճեանի քն. , այս՛ հէլաթտէ կըսէ , վասն զի չէ աղանդաւոր՝ այլ ուղղափառ . չէ՛ անհաւատ՝ այլ հաւատացեալ , չէ՛ հիւրագոհաց այլ հիւրասէր , չէ՛ չարախօս՝ այլ բարեխօս , չէ՛ ազահ այլ առատածեռն և խնամատար որբոց և այրեաց :

Պօլսոյ մէջ տակաւին ուղղափառ իսկ հաւատացեալք շատ կը գտնուին , որ իրենց ողջամտութեամբ ողջամիտ կղերները կը պատուեն Զրաճեան վեհ. էֆ. ներու պէս . ահա քեզի օրհնեալ Գաբամաճեանները , Հարէնցեանները , Յակոբեանները , Քիւրքճիխանեանները , Վառօղապետեանները , Խալֆաեանները , Նորատունկեանները , Աւլանեանները , Զրաճեանները , Կեսարայիք մեծագոյն մասամբ Պարտիզպանեանները , և ալն և ալն . Աստուած օրհնեալ է զիրենք զի արմատք արդարոց ոչ հատցի , ո՛հ զինչ օգուտ ի ժամանակիս ոյսմիկ . թշնամիք առն ընտանիք նորա , Առկ. ժԲ. 3, Մտ. ժ. 37 :

Դարձեալ ողջ մնան վերոյիշեալ կատարեալ մարդկութեամբ և անթերի հաւատով ազգասէրք , Նոյի և Աբրահամու նման Նահապետական գերբաստանները և բնակարաններն , Հապա Ս. Պատրիարք ի՞նչու Զարեմ Ներսէս . մնաս չունի , թող հեգնէ ատ յանցանքը իրենը չէ , այլ երկտասարգութեանն է որ թոյլ չի տար իրեն

մտաւնութեամբ կարգալու , Առկց. Ի՛շ. 28 համարին մէջ գրուած տողերը , թէ՛ ոչ է յաւիտենական ոյժ առն զօրութիւն և իշխանութիւն ոչ է տաւեալ նմա յազգաց յազգս , և ասկէ ի զատ Արքունի և Ազգային զօրութեան վերայ գրած յուսով զքեզ դատապարտելու կաշխատի , վասնորոյ շատերուն սրտին մէջ զքեզ անուանարկելով ըստ կարծեացն , որպէս թէ մեռուցեր՝ բայց զեռ չգիտէ կենդանի ես , ըստ Ռումանիու տէր Սարգսին պէս . տես Մասիս 2369 և 70 թիւ թերթերն . որ զքեզ վախճանեալ կարծելով անուանարկած էր զրպարտութեամբ :

Ա՛հ , ի՞նչ կը խորհիս ոչ ինչ՝ անցանոր բանի մը վրայ , Սրբազան Պատրիարք քեզ գէջ չկամեցաւ ա՛ որջամիտ հաւատով տեղ ցոյց տուաւ :

Իրաւ այդպէս է , հապա՛յ 40 աւուր ճանապարհորդութիւնս զիս ի՛մ հայրենիքէս հանել թափառական ընելով , գնայ Բալու , եկու Չնգուչ , կեցիր Սեբաստիա , գնայ Էջմիածին , լման երեք տարի ճանապարհներուն մէջ զիս երեբուն ընելէն ետքը . այս 70 ամեայ հասակիս մէջ , և հիմայ ալ յանցանքս ի՞նչ է կը հարցունեմ յանցանքս չունիս կըսէ , Բ. հեռագրին մէջ ցոյց տուած էր յայտնապէս , տեղուոյ խոտութիւնը հանդարտեցնելու համար պէտք է որ քաղաքէն մեկնիք , երբոր ծնկացաւոյս պատճառաւ չկարացի շուտով ելլել և դալ , Բ. զրան զիմեց իբրև խոտվիչ ցոյց տուաւ զիս Բ. զրան , ան ալ Բարձրագոյն հրամանագրով Տիգրանակերտու կուսակալին կը հեռագրէ թէ՛ առ խոտվիչը դուքս հանել Պօլիս զրկել իսկ հին և նոր կուսակալք Բ. զրան կիմացունեն թէ՛ խոտվիչն Տիգրանեանը չէ՛ այլ Փիլիպպոսն է , և Բ. դուռն ալ Սրբազան Պատրիարքին երբոր կիմացնէ , խսկոյն

զարձեալ Բ. դուռը կը որոշեն զրկել . և կը զրկեն . թէ՛ Փիլիպպոսը չէ՛ այլ Տիգրանեանն է , պէտք է Տիգրանակերտէն հեռացունել զանի , տես Մասիս թերթին 1792 թիւն ուր որ ընդարձակ գրած հրատարակած է : Բ. դուռը ևս վերատին կը հեռագրէ , Տիգրանակերտու կառավարութեան թէ Ս. Պատրիարքն կը պնդէ թէ խոտվիչը Տիգրանեանն է . կառավարութիւնը զարմանալով վերատին կը հեռագրէ թէ՛ Տիգրանեանը չէ այլ Փիլիպպոսն է այս անգամ Բ. դուռը Ս. Պատրիարքին հարորդելով , ալ ի՞նչ ընեն , որ Տիգրանեանը Վեասուի , ուրիշ հնար չկայ , մինակ միջոց Յունաց Ս. Պատրիարքին՝ ձեռքենք առ քննութիւնը , որ նորա մին կախկտպոս հոն կաթուածով անդամալուծութեամբ անկողնոյ կը ծառայէ և 30 տուն աղքատ Յոյն ժողովուրդ ունի , Փիլիպպոսն ալ անոր բարեկամն է , հարկաւ անկէց գիր մը կառնու կը զրկէ , թէ Տիգրանեանն է խոտվիչ :

Ահա Բ. դուռը Յունաց Ս. նախկին Պատրիարքին կը յանձնէ առ քննութիւնը ըստ խնդրանաց մեր Ս. Պատրիարքին ուղածնուն պէս խաբէական ձեռնարկութեամբ կը հասնին իրենց փափաքանաց , վասն զի Տիգրանակերտու յիշեալ Յունաց առաջնորդն մեզ լուր կը զրկէ , թէ Բարձրագոյն դուռնէն մեր Ս. Պատրիարքին յանձնուէր Ձեր և Փիլիպպոսի վրայօք եղնուելիք քննութիւնը , Ս. պատրիարք մեզ զրկեր է հիմայ ես շատ տկար եմ Աստուծով հանդատանալուս կը հրաւիրեմ՝ զձեզ և Փիլիպպոս վարդապետն , և քանի կրեւելիսց քաղաքիդ դէմ յանդիման խօսիք և յայնժամ զարժանն կը զրկեմ ի Պօլիս ևւայն :

Ուստի ալ ոչ հարցնող եղաւ և ոչ հրաւիրող , ժամանակէ մը ետքը Մասիս թիւ 1820 , 1876 մայիս 23

Թերթը կը բերեն մեզ ցոյց կուտան , որպէս թէ Յունաց եպիսկոպոս քննութիւն ըրած զմեզ խուսիչ իմացուցած և Մասինն ալ հրատարակած է :

Ուրեմն Նոր-Գար 2131 և Հայրենիք 123 129 թիւ թերթերուն հրատարակածը կարգարանայ , թէ Պատրիարքարան . . . և առնց դատի Հայոց Ս. պատրիարք խաչելով զխուսակարութիւնը վարդապետները կը դատապարտէ յաքսորանս . սուտը ճշմարտութեան գոյնով ներկուած :

էյ հիմայ ինչ կըսես , ես երեք տարի ու կէս եղաւ որ Տիգրանակերտէն ելած եմ , Տիգրանակերտու մէջ հայոց պատրիարքարանի պատուիրակները Պոյաճեան էֆ. և գեր. Գարեգին վարդապետ փողոյներուն մէջ օտար ազգաց առջև քարչ ու քարչ ծեծել տուողը ո՞վ էր , ատքրէական յանցանքով զիշեր ժամանակին կառավարութիւնը «էֆրէ Նորին վերայ ոնելով Տիգրանակերտէն 'ի Պոյիս զրկուողն ո՞վ է , Տիգրանեանն թէ Փիլիպպոս հայրն է՞ , եթէ մենք նոյն միջոցիւ հոն գտնուած ըլլայինք , այս քրէական յանցանքը մեր վրայ դնելով հիմայ ի խաչ հան պիտի աղաղակէին :

Փիլիպպոս հայրը մինչդեռ վարդապետ էր , մենք ալ հոն էինք , ուրբաթ օր մի եկեղեցոյ քամբանան հնչեցընել տալով բազմութիւնը հաւաքեց . և սկսաւ բազում սպիտակ թուղթերու վրայ հարիւրաւոր ստորագրութիւններ դնել տալով , որպէս թէ՛ նոր եկող Թէֆիք Աճմէտ փաշայէն շնորհակալութիւն գրելու պայմանաւ , տակաւին բարիք մը չտեսած անկէց : Եւ դուցէ մեր վերայօք ալ դանդատ գրած ըլլայ ո՞վ զիտէ , հապա՞ հարիւրաւոր սպիտակ թուղթի վերայ գրուած ստորագիր և կնքուած թերթերը ի՞նչ ըրաւ , մի՞ դուցէ խելքին

Փշածը գրեց աստ և անդ յղեց , ինչու որ մէկ քանի անփորձ օտար ազգի երտասարգք գլխուն հաւաքելով հեռաքրեցին և պատրիարքարանները սոքի հանեցին թէ հասէք օգնութեան Տիգրանակերտը Շամ քաղաքին պէս պիտի ընեն Մանստականները , որ էր սուս . բոլոր գրացի Մանստականներ զարմանալով ըսին մեր մտքէն չանցած բանը Հայերը մեր վրայ ինչու կը դնեն սրտերնուն եղաւ ցաւ մի :

Բարեխնամ տէրութիւնը պատրիարքաց խնդրագրով Սամի պէյը փօսթայիւ քննիչ զրկեց , եկաւ քննեց և խնայաւ որ Հայոց և Մանստականաց մէջ գժտութիւն չկայ ամէն մարդ սիրով իրեն գործին հետեւած էաշխատին գրեց և իմացուց Բարձրագոյն Գրան , անա չըրջանայեցողութեամբ չգործուած և սպաղայն չմտածուած հեռագիրներուն պտուղը այսքան կրնայ ըլլալ , թէ պատահի օր մը ճշմարիտը հեռագրելու ըլլան ալ շուտ մի չպիտի հաւտան , ատ գործոյն ընկեր երիտասարդ Գարագաշեան տէր Վարդանն որոյ մեղադրեց շատ մը Ֆուբէլեան սրբազան պատրիարք հայրն թէ ինչո՞ւ անխուհեմաբար չեղնուելիք գործը կը հեռագրէք . և նորին սրբազնութեան ալ բարկացաւ երիտասարդական արիւնտով թէ դուք մեզ չէք հետեւիր եւայն .

Ինչ և իցէ քանի որ ստույթեամբ և խաբէութեամբ սպիտակ թուղթերու վերայ հասարակութենէն և մինչեւ անգամ վարժարանայ և արհեստաւորաց աշակերտներէն ստորագրութիւն կը ժողկեն խաբէութեամբ , և մտախոյսեր տալով ժողովրդոց միտակ իրենց մասնաւոր շահուց համար , և հասարակ ժողովուրդէն ոմանք ալ հաւատալով կը հետեւին :

Արդ մինչեւ ցարդ ըրածնին , գործածնին , խօսած-

նին և գրածնին ս՞ր մէկը իրաւ կրաւ , և ս՞ր մէկը կա-  
տարուեցաւ թող ցոյց տան , բայի ժողովուրդէն գրամ  
ժաղովելէ և ծախք ընելէ և այլ մնասներէն որ պատա-  
հեցաւ ներկային և պիտի շարունակէ ապագային մէջ  
աւելի եւս :

Ահա այսքան խորհրդածութիւններ ընելով հասանք  
Խւսքիտարու նաւահանդիսար և գնացինք Մեծ. Մ. Աւ-  
րանամ Էֆէնտիի նահապետական օճրնեալ և դարձեալ  
օրհնեալ տունը , և կեցանք հոն չորս ամիս և վայելիճինք  
զնորին դարչարեալ բարեկից Աւրանամեան շնորհալի  
սեղանը , և օրհնեցաք և կը օրհնեմք , աղօթեցինք և կա-  
ղօթեմք նորին կենաց և օրհնեալ բարեկիչատակ զաւա-  
կացն արեւշատութիւն , և համայն նորա պէս հիրաւէր  
հայոց աշխուակմանց ընտանեաց որ կը միտիտարեն ինձ  
նման վասն արդարութեան հալածեալ վշտակիրէերը , զի  
արժարտ արդարոց — հարց :

Եղաւ որ Ս. Պատրիարքէն Ս. Խաչ եկեղեցոյ թաղ-  
մեծ. աղաները Ս. Պատարագ ընելու համար գիր բերին  
մեզ Ս. Պատարագ ընել տուին , և խնդրեցին տեղոյն  
քարօղիչ ըլլալ յանձնառու չեղանք վասն զի ձերմակաւա-  
նի և ամանց գիրար հալածելը կար , և այն միջոցին  
Տէվլէթլու Սայիտ փաշան զմեզ հրաւիրեց իրեն պալատը  
Ձէյթունի վրայօք տեղեկութիւն ուզեց , մենք ալ ճիշտ  
ճշմարտութիւնը խօսեցանք թէ Ձէյթունցիք յետին ծայր  
աղքատ և սկզբանէ անտի տարեկան քսան հազար զըշ-  
արքունի տուրք ունէին վճարելու ան ալ հազիւ թէ  
կրնային վճարել , վասն զի յոյժ աղքատ են , բայց սէ-  
րութեան ամենահաւատարիմ հպտակք են , շատ աշ-  
խատաւոր և տեղերնին անբերրի և քարոտ , իրենք մերկ  
և բոկ :

Եւ այլ շատ մը տեսածս Ձէյթինցոց թշուառ խրդ-  
ճութիւնները պատմելէն զկնի , բարձրապատիւ փաշան  
ցաւ զգալով խօստացաւ խնամք տանել և արդարու-  
թեամբ բարիք ընել , ուստի շնորհակալ ըլլալով մեկնե-  
ցայ և եկայ Խւսկիւտար :

Դարձեալ նոյն միջոցին թշնամին մեր վրայօք ան-  
ուանարկութեան յօղուածները սկսաւ լրագրաց թերթե-  
րուն մէջ զետեղել : Երբոր զրպարտութեանց հերքումն  
գրեցի յղեցի երեք անգամ ըստ լրագրաց կանոնի հա-  
մեմատ Մասիս չնրատարակեց , ուստի Բարձրագոյն գրան-  
միջամտութեամբ իսկոյն հրատարակեց , Մասիս 2369  
թիւ թերթին մէջ ալկամայ :

Ահա այսպէս գիրար զրպարտելու և հալածելու ետեւ  
ըլլալով օր քան զօր յառաջ յառաջ կը քալենք , ի պա-  
տիւ . . . ին , և չըսեմք թէ շատ և շատ ետեւ մնացեր  
ենք , Յոյնը և Հրէայք Հայոցմէ շատ յառաջ են և կար-  
գազրեալ :

Ի՞նչ պէտք է մենք Հայեր գիրար սիրել և իրարու  
բարիք ընել կվա՞յլէ մեզի , քաւ լիցի , քանի որ ատե-  
լութեան և խռովութեան վատ ոգին մեզ սիրելի է քան  
զսիրոյ և միաբանութեան ոգին , ուստի գիրար հալածել  
և զրպարտել մեզ համար ոչ մտք է և ոչ ամօթ վասն  
զի մեր սիրելին է ատելութեան ոգին , որոյ պատուին է  
խռովութիւն անմիաբանութիւն , իրարու վնասել եւայն  
եւայն :

3 Թուանշանն որ տետրակիս 26 ըդ. երեսին մէջ  
ըսինք , օրոր հոգի մէջ Հայերը զերբ և հալածեն զարարե-  
լով : Ահաւասիկ տես ստորեւ :

Գանք հիմայ մեր թշնամիներուն վրայօք ըսել քանի  
մի խօսք . վասն զի անոնք այնպէս կը կարծեն որ ի-

րենց մեղի գէմ թէ գաղտնի և թէ անուղակի կերպով :  
 զմեզ մարդկանց առջև բերանացի և կամ լրագրաց  
 թերթերով անուանարկելին , իրենց փառք և պարծանք  
 և սրտերնուն հրճուանք , և մեզ ցաւ և տրտմութիւն  
 ըլլալ :

Բայց շատ սխալած են , ինչու որ Քրիստոս Աստուած մեզ կըրէ , ցնձացէ և ուրախ լըրուտ յարժամ նախադէպէն շէշ . . . Մո. Ե. 11 : վասն զի գէշ խօսիլ զմարդ նախատել , և ցաւցունել զընկերը , վատ մարդու և մարդակեր գազաններու , օձերու և կարիճներու կը վերաբերի , երբոր մարդ իրեն կատարեալ մարդկութենէն բաժնուելով , գազաններու և օձերու կարգին մէջ կը խոնարհի վատութիւն գործելու , ուստի այնպիսիներու համար աղօթք ընելու ենք , որ իրենց վատութեան միջոցով և մեր համբերութեամբ առաքիլութեան ակեր կընեն զմեզ , վասն որոյ Յիսուս ըսաւ , « Երեցէտ շէշ-օր յեր և Բարե արարէտ արեւեաց յերոց . վասն զի ամէն մարդ յանձնառու չլինիր մարդայնաս գազաններու պաշտօնը վարել ինչպէս որ պատահմամբ մեր թշնամիներնու մէկը շատ խորունկէն զմեզ խայթիւր է լուելեան որ ապագային մէջ թէ մենք և թէ մեր բարեկամները ցաւ զգամք :

Բայց Աստուած իսկոյն յայտնեց մեզ , յուրիս ամոյ մէջ Գատրգիւղ Տնտղեան Մեծ . Պետրոս էֆէնտիի օրնեակ բնակարանը գտնուելովս , երեկոյին տետրակ մի բերին յիշեալ էֆն . ընծայ տետրակը ձեռքս առնելով միանգամ բացի , և տեսի նոյն թերթին մէջ մեր վրայօք գրաբարութիւն մի որ մինչև անգամ իրաւ եղած ըլլար , գրի առնել գրելը անգամ մարդկութեան գէմ վատութիւն մի է կատարելոց մէջ : Անա Սրուանձտեանց գեր . Գարեգին վարդապետ , իրեն ճամբորդութիւնը գրած

ատեն մեզնէ թագուն կերպով տետրակին մէջ տեղ կը գրէ , որպէս թէ Անայ վանք յերտ օր պարտաբէլ դէտ Բարե Բերե ըլլա՞ յերտ . և այլ չվայելած խօսքերով քալիւր մեր վերայ : Չարմանալին ատ էր , եթէ տետրակը ծայրէ իծայր կարգալու ըլլայի 2 ժամու կարօտ էր . բայց Աստուած այնպէս յայտնեց որ առանց թերթ մի դարձնելու տեսանք :

Ուստի նոյն թերթը առնելով կրօնական ժողովոյ ներկայացայ , և ստիպեցի որ՝ շորհախայլ Գարեգին վարդապետը բերի հարցունել , թէ ատ ի՞նչ է որ տետրակի մէջ գրած էք , պարտաբէլեցն նա հիմայ չի գտնուիր ս՞վ գիտէ , ուր ըլլայր , նկատեցի որ կրօն ժողովոյ նորահաս ոմանք անգամները չեն ուզեր իրենց խելակից և հասակակից Գարեգին վարդապետի ներկայանալը , և անհնար է անոր գտնուիլը մինչդեռ կը խօսէին մեզ , յանկարծ անգիտութեամբ Գարեգին ներս մտաւ հրաւիրեցի տալ բացատրութիւն , ուստի զեղնելով կարմրելով հատուր կապիսաբանօք հազիւ թէ այսքան մի կրցաւ ըսել եւ արե Միտայելն իմացայ ըսաւ , ու կծիկը գրաւ ելաւ դուրս և մենք մինչդեռ կսնդէինք ժողովոյն թէ թոյլ մի տաք երթալ , թող հաստատէ գրածը , նոյն կէտին գեր . Մատթէոս եպիսկոպոս ատենապետ կը պարտաբէլե Բեշ . նա Ակնայ առաջնորդ ընտրուած է և է , ուստի ինչպէս որ ըսէ անոր պիտի հաւտանք :

Երբ այս տղայական պարտաբէլե առինք Աստուծոյ յանձնելով ելանք դուրս նոյն ժամուն բարեկամ և կամ չարակամ մէկը մեզ մօտենալով ցաւ յայտնեց և տետրակ մի բացաւ որուն 46 երես 1 տող և 73 երես 7 տողերը ցոյց տուաւ մեզ ըսելով , անա տեսա՞ր սա տետրակը , որ 1874 ապրիլ 9 ին վանեցիք 30 ստորագ-





ղօթքի կրմնայ եղիր և կամ նեղութեան մէջ անմխիթար պիտի մնայ որո՛ւ հոգն է , ահա Պօլիս և ահա գաղթական հայերու Պօլտոյ մէջ ցաւալի վիճակը , և հոգեւորականաց ժողովրդեան վերայ ըրած անարդար գործերը . վասն զի Պարբերութեան ինքն յանհետ կան և պարտաւորան իմեալսն էկեղեցական կանոնաց տես 111 երես տետրակիրս ի կօնդակն կաթուղիկոսին :

Ալ գաւառացոց մէջ պատահած եղծումները ո՞վ պիտի մաքրէ լոյսդ որ ի քեզ խաւար է , և խաւարն որչափ մուս Աստուած ինքն ողորմի , Մարդարէին խօսքը կը լմնայ հոս տեղ , թէ՛ մեայն եղբայր իբեւ իբեւ Երմ. Թ. 4: Ինչպէս որ 1874 ին Մշոյ Յօնան գիւղի քահանայն աւագ երկուշաբթի օրն , գոցեց եկեղեցւոյ դուռն մինչև Յարութեան կարմիր կիւրակէն գոց էր , անկէց ետքը բացաւ նէ չեմ գիտեր , 300 անձ առանց հաղորդի և աղօթից մնացին , թէեւ Ս. կարաւետու վանահօր գրեցինք բայց հոգ տանող չեղաւ , հիմա ալ եթէ պանդուխտ քահանայն չիգար Ս. Յակոբ եկեղեցին չբանար Սամաթիոյ ոմանք զօրեղ քահանայք գոցած էին պէտք էր որ գոց մնար , բայց Քրիստոս ճշմարիտ քահանայապետն բացաւ ուրուն և ժողովուրդը մտաւ : Ահա Հայոց վիճակն . օտար հողի մէջ զիրար կը հալածեն , տես թուանշան 3 երես 25: Հիմայ կապսեմ Բաբելոն զրկած գրիս պատասխանւոյն , պատասխանը ընդունելուս պէս պիտի հեռանամ Պօլսէն որ գոնէ աչօքս չտեսնեմ ընդդէմ կանոնայ լուսանքներ թափող լոկ Հայ անուն կրօղ շահատէր ինքնահաւան կիրքոտ անձեր և մանաւանդ ոմանք կղերականները որ քահանայութեան պատիւը ոտնակոխ կրնեն իրենց անձին շահուն համար , ուրեմն արդարատէր հասարակութեան դատողութեանը կը թողում , այսչափը բաւ համարելով :

Հիմայ կրմնայ մեղ երկու խօսք ալ ըսել և վերջ տալ գրքիս առաջին հատորին :

Ահաւասիկ . Երբոր կը հարցունեմ աղքատոցս թէ՛ ինչո՞ւ մեք Հայքս այսքան ժամանակէ հետէ աղզովին ներքին բարեկարգութեան և ներթական հարստութեան տէր չենք կրցեր ըլլալ , Երուսաղէմ պարտատէր , Մշոյ վանքը պարտատէր , և այլն . այս հարցմանս ոմանք կը լռեն , ոմանք չեմք գիտեր և ոմանք ալ քաղաքական իշխանութիւն չունիմք կըսեն վասնորոյ կը տկարանամք բարեկարգելու , և ոմանք ալ անբարեկարգութեան և մեր աղքատութեան պատճառն է . . . կըսեն : Բայց ասոնք ամենքն ալ ոչ ինչ պատճառներ են առ մի անգամ հայեաց ի քեզ , զի և մեք ասոր վրայօք լաւ մի խորհրդածելով կըսենք : Միթէ՞ Յոյները և Հրէայները քաղաքական իշխանութիւն ունին , ինչու անոնք ներքին բարեկարգութիւն և հարստութիւն ունին և մեք հայքս չունիմք . ասոր ուղիղ կը պատասխանեն , թէ՛ Յոյները և Հրէայները զիրար կը բռնեն և իրարու կօզնեն և հնազանդ են իրենց քաղաքական և կրօնական մեծերուն : Ուրեմն մեր աղքատին անբարեկարգ և աղքատ մնալուս պատճառն չէ . . . այլ մեր ինքնահաւանութեան . մասնաւոր շահախնդրութեան կիրք և ատելութեան ոգին անհնազանդ և անմխաբանութիւնն որ զմեզ Աստուծմէ հեռացնելով թշուառութեան մէջ դրած է և կրնէ , և պիտի դնէ ալ . թէ որ ատ անվայել ընթացքնուս մէջ մնամք յամառեալ . և շարունակեմք : Քանզի Քրիստոս Տէրն մեր կըսէ , առանց ի՞նչ ինչ կարէ՛ք առնել Օհ . Ժե . 5: Եւ Դաւիթ մարգարէն ալ կըսէ Եթէ ոչ որք չեմ զբոսն , ինանիք վաստակն չենօդ Նորա Սը . ձեզ . 1:

Արդարեւ Աստուած շատ մի բարիք ըրաւ աղգիրս



Հայոց, Օսմանեան բարեխնամ Սուլթաններու միջոցաւ

Ահաւասիկ մեր տեսածը .

Պէզնեան Յարութիւն արեան, Արքունի վառօգրակետք Տատեան պէյերը, Արքունի ձատարակետ ամիրայք և պէյք, ձիգայիրլեանը, Միաբանները, Մաքսուտեան, Քիւրքէիսանլեան Բիշմիշեան, Խօրասանեան Պէյլերեան և այլ ամիրաներ, պէյեր և էֆէնտիներ, բանիւ և գործով Տերութեան պաշտօններու մեջ գործածուելով ազգիս հասարակութեան և մանաւանդ գաւառացւոց. շատ մի օգուտներ ըրին և կընէին. հիւանդանոց կանգնեցին, եկեղեցիք շինեցին, վարժարաներ բացին . դրբեր տպել տուին . ըստ կարելոյն կալուածք և եկամուտք արքունի սահմանեցին . և այլն և այլն :

Բայց ազգայինք ոմանք այսմ բարութեանց փոխարէն Աստուծոյ գոհութիւնն և փառք չտալէն զատ . յիշեալ բարերարներն ալ ի ժամանակին վշտայուցին . և զիրար հալածելով անբարեխառնութեան մեջ մնաց ազգը . և օրքան զօր Աստուծոյ շնորհացմէ հեռանալով ընկաւ բազմատեսակ հիւանդութեան մեջ . ուստի մեք հազիւ թէ 30 տեսակը կրցանք ցոյց տալ իբրև ըզպատիժ, որոց դարմանն ալ պատրաստ է, եթէ գործադրուի սիրով: Եւ փոքր պատիժ մի ալ այս է . ծագրուի սիրով: Եւ փոքր պատիժ մի ալ այս է . որ ազգայնոցս աչքին չերեւիր թէ պատրիարքարան և թէ դուրսի առաջնորդարանք . կիրք յազեցնելու համար ազգային աղքատաց հասարակութեան դանձանամար շատ մի դրամ կը շուային, հեռագրատան և թղղկեն շատ մի դրամ կը շուային, հեռագրատան և թղղաւելի հեռագիր, երեսունէն աւելի նամակ Պատրիարքարանէն դրամ տալով մեզ յղած են թէ Պօլիս եկուր Չնքուշ դնայ, Սեբաստիա կեցիր, մի գար, եկուր,

մենք ալ այնքան դրամ ծախս ընելով մեր քսակէն ահա կուգամ կերթամ և այլն, հեռագիր և նամակ կը յղենք, հիմայ երկու կողմէն հայոց քսակէն այսքան հազար դահեկան կլաւ, ազգայնոցս ինչ օգուտ եղաւ, թող ցոյց տրուի մեզ և ազգայնոցս, ուրեմն, քանի որ Պատրիարքարան և դուրսի Առաջնորդարանները ոմանց անփորձ, կիրքոտ և շահասէր աշխարհականաց և կղերից ձեռքին ներքեւ գերի մնացեր և կը շուային ազգային դրամ յոչինչ պէտս և ի յագուրդ կրից ոմանց, ուրեմն ներքին հարստութիւն մը ձեռք բերելու ձամբայ չէ մնացեր, ալ մեր ազգայնոց վիճակն այսքան կրնայ ըլլալ, ուրիշ որ և իցէ ոք պատճառ չբռնենք զի յոյնք ֆիւթեցիւտի լիտի նմա առողջութիւն եայ. Ա. 6 : Քանզի ժանեան զԱստուած և ոչ իբրև զԱստուած փառաբանեցին կո՛ւ շնորհան Հա՛մ. Ա. 26: Ձի Բրիստոս տէրն մեր ասէ, Եղնաօթ առն ընդառնէ նորա Մ. Ժ. 26: Իսկ սողունն յուսադրէ յասելն թէ արմարտ արդարոց ոչ հարցին Ա. Ժ. 3:

Տէր պահեսցէ զնոսա յազգի մերում իբրև զԱբրահամ, զիսահակ և զՅակոբ, որք օրհնեցան յԱստուծոյ, և պահեցան անասան . իսկ մնացելոյն որ սխալեալք են արտաքոյ Աստուածային շնորհացն, տէր ինքն այց արասցէ ողորմութեամբն իւրով և դարձուցէ զնոսա իշնորհս իւր, և կելով կեցցեն ի բարութեան և մի՛ մեռցին յախտեան, և բարդաւածեալ շնօրհօք Տեառն հասցէն անձառելի տեսութեան Աստուծոյ տեսուն մերոյ Յիսուսի Բրիստոսի :



ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋԱՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Գրքիս մէջ տեսնուած թուանշաններուն մինակ 3 թուանշանին բացատրական ծանօթութիւնը տուինք զրքիս 96 երեսէն մինչև 136 երեսն իսկ մնացեալ ծանօթութիւնները, և 30 տեսակ ցաւոց դարմանները կը թողումք զրքիս երկրորդ հատորին մէջ դնել, պատճառն Նախ՝ զիտեմ որ զիրքս ընթերցողներէն ոմանք, սխալ և անիրաւ դատումներով զմեզ պիտի դատեն և հալածեն, չհամբերելով զրքիս նամարձակախօսութեան և չտանելով ճշմարտաբանութեանն, քանզի այնպիսիքն առաւել կը սիրեն ստուգեան կեղծաւորութեան և անիրաւութեան խաւարը և մէզը, քան զճշմարտութեան և արդարութեան լոյսը, ուստի սոյն գալիք հալածանքն ալ անցունեմք մեր վրայէն և ապա պատրաստեալ դարմանները ի լոյս հանեմք ի բժշկութիւն երեսնից պատժոց և ցաւոց զի բժշկեսցին: Որովհետև այս աշխարհին մէջ մեր բաժինն է վասն ճշմարտութեան հալածմունք, վասն զի եպիսկոպոսոսութիւն է, յարրիբոսութիւն էրասանց և արդարութիւն:

Երկրորդ աղգային զիտնականք և ուսումնականք որ են աչք և ունկն ազգութեան և աղգայնոցս. յետ ընթերցման զրքիս կարելի է և ինքեանք ես մէն մի դարման ցաւոցն ուղղել առ մեզ. և ընդ կարգս մերոց դարմանացն անուամբ նոցին դասել ի պարծանս նոցին ի բժշկութիւն. վասնորոյ սպասեմք միոյ ամսոյ չափ և կամ երկուս:

Երրորդ գուցէ գտանիցի այնպիսի ազգասէր սք զի նուիրօք ինչ օգնել տպագրութեան ծախուցն Բ. հատորին գրքոյս. որպէս Եգիպտացեան Արապկերցի մեծապատիւ Պօղոս էֆէնտի Կարապետեան յանուն ժամոցի նուիրեալ զընծայն մեզ. խառնեցաք ընդ ծախան տպագրութեան գրքոյս և յատկացուցաք նմա և գերդատանի իւրոյ յիշատակ յաւիտենից. վասնորոյ մեր շնորհակալութիւնն հետեւեալ նամակաւ մատուցանեմ նորին մեծապատուութեան հրապարակաւ:

Մեծապատիւ ազգասէր օրհնեալ էֆէնտի  
սիրելի մեր ի քրիստոս. ողջոյն

Արգարեւ շատ են բարերարութիւնքդ արդեամբ և բանիւ թէ առ աղգայինքս և թէ առ մեր նուաստութեան. որպէս տեսաք բաղմոցս ի թերթն լրագրաց հրատատեկալ. իսկ արդ ի մի կողմ թողցուք զթերթն լրագրաց. միայն զմեր միջոցաւ արարեալ բարերարութիւնսդ ի յազգ բերցուք. յօրինակ և յորդոր առ բարեսէր աղգայինս մեր. ըստ այնմ թէ. և զոր լէ՛՛ յունկնէ՛՛ Գրքիս 27:

Կը յիշէք արդեօք 1860 ին ի ձեռն Մեղուի խմբագրին 500 դանկեան շնորհիլդ Ֆիւրտերէն քերականի տպագրութեան ծախուցն և պատճառ եղաք ի լոյս ընծայմանն:

Նոյնպես 1867 ին Չեյթունի չորից հաստատեալ ի մէնջ վարժարանացն և ուսումնարանի ծախուցն տարին 100 լիրայ ռսկի մինչև երեք տարի շնորհիլդ. առ ի հաստատութիւն, թէև թչնամին թչուառացոյց զԶէյթուն:

ցիսն յօգուտ և ի շահ մասնաւոր իւրոց անձին . Եւ կատարեցաւ մեր գուշակութիւն , զորմէ գուշակեցաք 1870 ին ի ձայն Կիլիկիոյ տպեալ տետրակին վերջին թիւրին . զի Ընդհանրապէս արեւելիկ Կոստանթնուպոլիս 36 :

Իսկ ձեր առատաձեռն բարերարութիւնք և մեր աշխատութիւնք , և վսեմ Յակոբեան Թագւոր էֆէնտիի շնորհն որ ի փառս Աստուծոյ առ Ունեցիան , ոչ կլին ի դերեւ , այլ և գանձեցան յԱստուած յիշատակ յաւիտենից , և մեք պարտավճար եղաք ըստ այնմ թէ յորժամ առնէցէ՛ գաղտնայն հրամայեալն յեղ , առողջի՛ տե՛ ծառայտ անդիտան եմ , զոր էնչ պարտէր առնել արարտ . Դէս . ԺԷ . 10 : Եւ արդ յայսմ միջոցիս ձերին խնամատար ըստ վաղնջական սովորութեան զսիրոյ պտուղն ի ձեռն Մեծ . Հարէնց մահտ . Աբրահամ և Մարտիրոս էֆէնտի սիրելոյ մեր ուղղեալ առ մեզ իբրեւ ժամոց ընկալեալ մեր զայն գոնուշակութեամբ և յատուկ ձեռք կենդանեաց և ննջեցելոց հոգոյն սուրբ պատարագ մատուցանելով յիշեցաք անդ յաղօթս առ Աստուած զՁեզ և համեստափայլ մտնտ . Վարդուհի տիկինն , և զմեծ . մահտ . Պետրոս էֆէնտի , և զազնուուհի մահտ . Մարիամ և զԱպղայի օրհնեալ զաւակունագ , զի որոց և Ձեր այդու յիշեալ ընծայիւքն , կարօղացաք ի լոյս հանել գրքիս առաջին զայս հատորն յիշատակ բարեհամբաւ անուան ձերում . և քարօղ առաքինութեանց ձերոց ուր և գնացէ :

Ուրեմն մաղթեսցուք առ տեր Աստուած Արարիչն ամենեցունց . ի Գանիրէ գաղթականութեան ձերում . ըստ Յակոբայ Նահապետի որ Եգիպտոս բնակիք . և իբրեւ զՅովսէփ անխտիր ձեռնառու լինիք յօգնութիւն եղբարցդ և հայրենեացդ . բարձրացուցէ զՁեզ Տէր . և ճոխացուցէ զարդիւնս Ձեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ

իբրեւ զԱբրահամու և զԻսահակայ . և զՎարդուհի մահտեսի տիկին օրհնեացէ տէր իբրեւ զՍարբա և զՀոսաքել . և զմեծապատիւ Պետրոս էֆէնտին զօրացուցէ Տէր . իբրեւ զՅովսէփ . ձեռն բարձր և բազուկ հզօր արասցէ . և զզոյգ աղու Աղաւնիս զՄահտեսի Մարիամ և Չաղայի Թագուհին . նման Եսթեր թագուհոյ պայծառացուցէ . և իբրեւ զՄարիամ և Չաղայի կուսանսըն օրհնելով օրհնեացէ . պահելով զձեզ զամենեսեանսդ հանդերձ գոյականօք և պարագայիւք ընդ հովանեաւ ամենագօր սրբոյ աջոյն իւրոյ . ամեն :

Լեբուք ողջ հանդերձ ընտանիօք ի խնամս Բարձրելոյն .

1880 մայիս 4  
Կ. Պօլիս . Սամաթիա  
Նոր-Թաղ Ս . Յակոբ եկեղեցի

մնամ աղբարար .  
ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Արդարեւ Հայկայ հարադատ զաւակներ շատ կան և կգործեն ինչ որ արժան է Աստուծոյ և մարդկութեան բաց մասնաւորապէս տակաւին Աստուած հասարակութեան ազգիս արժան չէ տեսած Հայկայ ճշմարիտ զաւակաց միատեղ գալ սիրով և սրտիւք միանալն և գործել յօգուտ ընդհանուր Հայ հասարակութեան ազգիս վասն զի դեռ ընդհանրապէս ժողովուրդ մեր յամենայն տեղիս սրտիւք յեզիպտոս են և երկուց տէրանց կամին ծառայել ընդէմ կամացն Աստուծոյ . տես Մ . Գ . 24 : Վասնորոյ . ընդհանրապէս ոչ յաջողի վայելել զբարութիւնս երկրի . զի գրեալ է , Արդարտ ճառագեացն շէրէր Սղ . 1,9 . 10 : Որպէս ձիթենի պտղալոց առաքինութեամբ են ի տան Աստուծոյ . Սղ . ԾԱ . 9 . որ պատիսիքն չեն պակաս յաշխարհի . զի արմատք արդարոց ոչ հատցին . Ա . Կ . ԺԲ . 3 :

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

|                                      |    |
|--------------------------------------|----|
| Ա. Հայոց ցրուիլը օտար երկիրներու մէջ | 18 |
| Բ. Հայոց չորս միլիօն մնալու պատճառը  | 21 |
| Գ. Հայաստանի աւերակութեան պատճառը    | 24 |
| Դ. Աղօթից ծոյլ ըլլալու վնասը         | 26 |
| Ե. Հայոց վաստակը օտարները կուտեն     | 29 |
| Զ. Հայոց թշնամին իրեն մէջէն է        | 32 |
| Է. Ատելութեան ոգւով անմիաբանութիւն   | 34 |
| Ը. Վանորայք և վանահարք               | 36 |
| Թ. Անհողութիւն առաջնորդաց            | 40 |
| Ժ. Քահանայից անհողութիւն և պատիժ     | 42 |
| ԺԱ. Ուխտազանց կղերներ                | 48 |
| ԺԲ. Ազգայնոց անկիրթ մնալու պատիժը    | 51 |
| ԺԳ. Անկիրտ ինքնակոչ իշխանք           | 54 |
| ԺԴ. Նօրասիրութիւն (յօրաց)            | 57 |
| ԺԵ. Հայը հայուն վնասատու             | 61 |
| ԺԶ. Հայը միշտ օտարին կը շուայլէ      | 63 |
| ԺԷ. Ազգային աղքատք հպարտք            | 63 |
| ԺԸ. Իշխիլ յիմարին իվիրաց իմաստնոյն   | 64 |
| ԺԹ. Կորուստ ժամանակին ի զուր         | 65 |
| Ի. Չափ անձին չճանչիլ                 | 66 |
| ԻԱ. Ոմանք լրադրաց թերթերու վնասը     | 68 |
| ԻԲ. Ստէպ փոփոխին պատրիարքաց          | 70 |
| ԻԳ. Սահմանադրութեան չարչարուիլը      | 73 |
| ԻԴ. Ընտրութիւն անարժան անդամոց       | 75 |
| ԻԵ. Մեղսամաժ հանդէսներ               | 76 |
| ԻԶ. Աշխատաւորի անվարձատրիլ           | 78 |
| ԻԷ. Զուակաց լրբութիւնը               | 79 |
| ԻԸ. Ընկերին վնաս հասցնել             | 80 |
| ԻԹ. Ատուած չիլսեր աղօթքնիս           | 81 |
| Լ. Վարչութեան անդամք                 | 83 |

Տիգրանեան Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան  
Արքեպիսկոպոս ազգասէր հայրը տեսնելով  
գործառնութեամբ ազգայնաց ընդհանուր  
ցաւալի աղէտքը դարերէ ի վեր ծանրացած  
վերան կէնալը. և մանաւանդ որ քան որ  
ծանրանալը:

Ուստի կը փութայ Ազգին ծանուցանել  
աղէտից թշուառ ծանր հիւանդութեան վի-  
ճակը, և անոր ողջացուցիչ դեղները և դար-  
մանները, որով կը անհետացնէ ազգէն բոլոր  
ձախորդութեանց առիթները և կը կանգնէ  
Ազգին բաղդը:

Ամբողջ գործը 30 տնարէ պիտի բաղ-  
կանայ և ամէն շաբաթ մէկ մէկ տետր պիտի  
հրատարակուի, բաժանորդաց համար կան-  
խիկ 25 դրչ. ձեռքէ ծախու առնուց 40 փրչ.  
պարտի վճարել. գաւառաց համար բաժա-  
նորդք 30 իսկ թերթ առ թերթ 60 փրչ.  
ճամբու ծախքը մեր վրայ. ոչ մեզ յանձ-  
նուած է վաճառելը:                   Ա. Մ ՍԵՃԵԱՆ

վաճառական զիքն են բոլոր գրախաճա-  
ռաց խանութները և րազրախճառաց քով:

24

4230



